

Rueppell
Rueppell's Pet
4th Ed - 1 - 2 P.H. 1881

891.99

P-35

891.99

Կայսու

1-32

ՌԱՖՖԻ

Կ.

320

ԴԱՒԻԹ ԲԵԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐ

(1722—1728)

«Խզեսցուք զկապանս նոցա,

«Եւ ընկեսցուք ի մէնջ զլուծ նոցա»

2003

ԱՌԱՋԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

ՓԻՖԼԻՍ

Կովկաս. Փոխ. զլիս. կառավ. տպարանում,

1881

4300

Доз. ценз. Тифлисъ, 15-го Мая 1881 г.

ԹԱԻԻԹ ԲԵԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Ե Պ

(1722—1728)

ԵՐԿՐՈՅԴ Գ.Ի.Բ.Բ.

Ա.

Մըցիւէթը, վրաց երկրի մալրաքաղաքը, այդ
ժամանակ ներկայացնում էր մի աղքատ աւան,
որ նշանաւոր էր նրանով միայն, որ այնտեղ էր
գտնվում «կենդանարար» անունով հոյա-
կապ վանքը և այնտեղ էր բնակվում երկրի իշ-
խանը, որ վրացիներից ընդունվում էր որպէս
թագաւոր, իսկ պարսիկներից՝ որպէս «վալի»*)
Ողորմելի, գետնափոր խրճիթները ցրված էին
աւանի զանազան կողմերում և գետնի մակերե-

*) Վալի նշանակում է աւատական իշխան:

ույթից որոշվում էին իրանց փոքրիկ, բլրածն
բարձրութիւնով միայն, որ նմանում էին խլուրդ-
ների կաղմած հողաբլուրներին, երբ գետինը փո-
րելով դիպում են իրանց որջերի մուտքի առջև:

Վանքի զանգակատան բարձրութիւնից լսելի
եղան վերջին հնչիւնները. հրաւիրում էին միա-
բանութեանը ընթթիքի: Երեկոյեան խաւարը ար-
դին սկսել էր փոքր առ փոքր թանձրանալ, գիւ-
ղացիները քշում էին երկրագործական յոգնած
անասուններին դէպի տուն և զիւղացի աղջիկ-
ները զարդարել էին հեռու աղբիւրից ջուր կրե-
լուց: Խրճիթներում այսաեղ և այնաեղ երեւմ
էր ճրագի լոյսը:

Այդ միջոցին աւանի մեռելային լուսվիւնը
աղմկիւցաւ, չները բարձրացրին մի խառնածայն:
աղաղակ, երբ հեռուից յայտնվեցան մի խումբ
ծիաւորներ, որոնք ամենայն թափով քշում էին
իրանց երկվարները դէպի աւանը: Որսորդական
յոգնած բարակները տնածութեամբ վազում էին
ծիաների ետեից և ամբողջ խումբը կորած էր
փոշու թանձր մառախուզի մէջ: Զիաւորներից մի
քանիով կրում էին իրանց բազուկների վրա բա-
զէներ: Երեւում էր, որ այդ խումբը վերապառ-
նում էր որսորդութիւնից: «Պարսնը»... առեցին
միմեանց մի քանի ուշացած զիւղացիներ և եր-
կիւղածութեամբ մի կողմ քաշվեցան ճանապարհ
բաց անելու համար:

Խումբը դիմեց դէպի քայքայված բերզը, որ
վազեմի ժամանակներից շնչված էր մի բարձրա-
ւանդակի վրա: Այստեղ էր «պարոնի» տունը:
Բերզի ահագին գոները բացվեցան, ծիաւորները
ներս մտան, և հասցնելով իրանց տիրոջը մինչեւ
նրա բնակարանը, յետոյ զիւլի տալով ցրվեցան:

Մի երկտասարդ ծիաւոր, այդ խումբից բաժան-
վելով, զիմեց ձորը, դէպի մի առանձնացած տը-
նակ, ուր էր նրա բնակարանը:

—Մի մարդ, կէսօրվանից եկած, սպասում է
ձեզ, աղայ, ասաց սպասաւորը, երբ նրա տէրը
ցած իջաւ: Ճիուց:

—Ի՞նչ մարդ, հարցրեց աղան, յանձնելով ձիու
սանձը սպասաւորին և հրամայելով, որ ման ա-
ծէ, մինչև քրտինքը ցամաքի, յետոյ տանէ զարի
տայ:

—Չեմ իմանում, նա ձեր անունը իմանում է,
ասում է, որ ձեր երկրիցն է. պատամիանեց
անհետաքրիդ ծառան, որին այժմ աւելի զրա-
գեցնում էր յոգնած ձին, որ պատած էր սապոնի
փրփուրի նման քրտինքով, քան, անծանօթ օտա-
րականը, որ աղայի երկրիցն էր:

Երկտասարդը անհամբերութեամբ ներս մտաւ
մի խուզի մէջ, որ միակ լուսաւորված սենեակն
էր ամբողջ տան մէջ: Դա բաւական ընդարձակ,
քառանկիւնի շնչվածք էր, որի պատերը կազմ-
ված էին, մինը միւսի մօտ կանգնեցրած, երկայն

ցիցերից, որոնց միջոցները հիւսած էին ծառերի ճիւղերով, յետոյ ծեփած էին հասարակ կաւով: Անեակի առաստաղը գմբէթաձն կերպով վեր էր բարձրանում, իր գագաթում թողնելով երտիքի նման մի ծակ, որտեղից գուրս էր գնում նրա մէջ հաւաքված ծուխը: Ուրիշ լուսամուտներ չը կային. ցերեկը լուսամուտի փոխարէն ծառայում էր նեղ դուռը, որտեղից ներս էին թափվում արեգակի ճառագայթները: Բայց խսկապէս ասած, այդ բնակարանը զրսի լոյսին ամենենին պէտք չունէր. յատակի վրա թաւալված էին մի քանի գերաններ, որոնց ծայրերը միմնանց մօտ դրվելով, ամբողջ օրը ծխում էին, տարածելով իրանց շուրջը թէ լոյս, թէ ջերմութիւն և թէ խեղդող մուխ: Գիշերը ճրագի պէտք չը կար:

Օտարականը, կրակի մօտ կկզած, տաքանում էր: Չը նայելով, որ գարնան սկիզբն էր, բայց եղանակը դեռ մրացնելու չափ ցուրտ էր: Տեսնելով երիտասարդին, նա վեր բարձրացաւ, խոնարհութեամբ զլուխ տուեց:

—Ո՞րտեղացի ես, եղաւ երիտասարդի առաջն հարցմունքը:

—Զեր ծառան տաթեացի է, պատասխանեց նա համարձակ կերպով, և մօտենալով, աւելացրեց:

—Աղայի համար նամակ եմ բերել,

Տաթեի անունը լսելիս, երիտասարդի սիրաը

սկսեց դողալ, բայց նա ծածկելով իր խոռվութիւնը, ասաց:

—Ճուր ինձ նամակը:

Օտարականը առեց գլխից մորթէ ահովին փափախը, նրա ծալքից դուրս հանեց երկու մեծ ծրար, տուեց երիտասարդին:

Կրակի չսւրջը, յառակի վրա, տարածված էր փափուկ և ցամաք խոտ, իսկ խոսի վրա փոած էին թանձր օթոյներ: Անեակի մի կողմում, պատի տարածութեան չափով, հասարակ, անդոյն փայտից շինված էր երկայն տախտ, որի վրա փոված էր պարսկական գորգ և զրված էին մի քանի բարձեր, կարգած արենելքի գունաւոր, մետաքսեղին կերպասից: Այդ միակ մաքուր անկիւնն էր ամբողջ սենեակի մէջ, որ ցոյց էր տալիս փոքր ի շատէ ճաշակ և չքննութիւն: Անեակի պատի այն ճակատը, որ կողմում դրված էր տախտը, պատած էր նոյնպէս պարսկական գորգով: Նրա վրա քարշ էին տուած զանազան տեսակ զինքեր, զանազան տեսակ զինուորական և որսորդական պարագայք: Երիտասարդը ծալապատիկ նստեց տախտի վրա, հրամայելով իր ծառային, որ տանէ նամակաբերին իր մօտ ախոռատունը, իսկ ինքը բաց արեց նամակիներից մէկը, և սկսեց կրակի լոյսով կարդալ:

Նախ ուշադրութիւն դարձրեց նա ստորագրութիւնների վրա: Ստորագրութիւնների բազմու-

թիւնը, որոնց իւրաքանչիւրի մօտ դրօշմկած էր մի-մի կնիք, տալիս էր այդ նամակին աւելի հանրազրի ձեւ: Առաջին տեղը բռնում էր Տաթեփ վանքի վանահայր, մի և նոյն ժամանակ Պափանի ամբողջ վիճակի առաջնորդ Ներսէս եպիսկոպոսի խոչոր կնիքը: Յետոյ կարգով շարված էին միւս վանքերի եպիսկոպոսների և վարդապետների կնիքները: Նրանցից յետոյ Սիւնեաց աշխարհի զանազան իշխանների, մէլիքների և տանուտէրների կնիքները վերջին տեղն էին բռնում: Դրանցից շատերին երիտասարդը անձտմի ճանաչում էր, իսկ ոմանց անունները միայն լսած էր: Նամակը սկսվում էր օրհնութիւններով և բովանդակում էր իր մէջ խիստ տիսուր նկարագրի Սիւնեաց աշխարհի ցաւալի դրութեան մասին: Նա պատկերացնում էր հայոց ճաշկած ժողովրդի վերջին աստիճանի թշուառութիւնը, մահմելականների անդիթութիւնները, խաների անսահման բըռնութիւնները, բնակիչների անդադար կոտորածները, գերութիւնները, յափշտակութիւնները, — բոլորը արիւնով, արտասուբով և խորին ցաւակցութեամբ գրված:

«Դանակը սսկարին է հասել»... այս խօսքերով վերջանում էր նամակը — «մեր երեսին պատուի մի կաթիլ անգամ չեն թողել... մեր կնիքներին, մեր աղջիկներին մեր աչքի առջև բռնաբարում են և մենք լուս նայում ենք... Մեր վանքերը,

մեր եկեղեցիները անասունների ախոռասուն են դարձնում և մենք համբերում ենք... Մեր տաճարների սրբութիւնները կողոպառմ են և խաչերը շների վլնքից քաշ են տալիս, իսկ մենք ձայն հանել չենք համարձակվում... Մեր զաւակներին, մեր ձեռքից խելով, օտար երկններում վաճառում են, մենք արգելել չենք կարողանում... Մեր ձեռքի վաստակը մեղանից յափշտակում են, մեզ թողնում են քաղցած, իսկ մենք բողոքել չենք կարողանում... Ոչ ոք չէ լսում մեր ձայնը, ոչ ոք չէ սրբում մեր արտասուքը: Մնացել է վերևում — Աստուած, իսկ ներքեռում գու, Դաւիթ թէկ: Խեղդաման եղած հայրենիքի վերջին հառաջանքը կոչում է քեզ: Լսիր նրա ձայնը, լսիր նրա աղաչանքը, օգնութեան ձեռք մեկնիր: Այն հայրենիքը, որ քեզ սնուցել է, որ քեզ կեանք է տուել, քեղանից կենանութիւն է սպասում: Մի թող տուր նրան իսպառ մահանալ: Ժողովրդի յոյսը քեզ վրա է դրած: Քո հզօր աջը պէտք է փրկէ նրան: Այդ է Աստուծոյ և մեր Տէր Յիսուսի քրիստոսի կամքը: Ուրիշ ձար չէ մնացել. ամեն բան փորձեցինք, ամեն հասր գործ դրեցինք, ամեն ստորութիւն յանձն առինք, բայց բռնակալի գաղանութիւնը ամոքել չը կարողացանք: Մեր ստրկութեան լուծը օր ըստ օրէ ծանրացաւ, մեր վիճակի դառնութիւնը օր ըստ օրէ ստո-

կացաւ։ Այժմ ժողովուրդը ուխտել է կատարել մի վճռական գործ՝ կամ միանգամազ կոտորվել և բնաջինջ լինել, կամ բոլորովին ազատվել մահմեղական բռնակալութիւնից։ Բայց ժողովրդին պէտք է մի փորձված ձեռք, որ առաջնորդէ նրան։ Այդ ձեռքը Նախախնումութեան կամքով պէտք է լինի քո՞նը։ Այն օրը, երբ դուսոք կը կոխես հայրենիքի հոգի վրա, ժողովուրդը մի մարդու պէս կը կանգնի և քո դրօշի ներքոյ կը սկսէ մաքրել երկիրը մահմեղական պըղծութիւնից։ Ամեն ինչ պատրաստված է։ մնում է քո հրամանը, —և ահա ժողովուրդը կը շարժվի... Շտապիր, Դաւիթ բէկ, ազգը, հայրենիքը և եկեղեցին կանչում են քեզ և իրանց աշատութիւնը քո ձեռքից են սպասում։...

Մի սոսկալի սառսուռ տիրեց երիտասարդի մարմին, երբ նա աւարտեց նամակի ընթերցումը, Նրա սիրաը սկսեց անհանգիստ կերպով բարախիլ և ձեռքերը սկսեցին դողդողալ։ Նա ընկաւ այն ցաւալի դրութեան մէջ, որպէս մի մարդ, որ յանկարծ լսում է սիրելի ծնողների մահուան բօթը։ Բայց այստեղ մնոնողը հայրենիքն էր, մեռնողը մի ամրողջ ժողովուրդ էր, իսկ ինքը — նոյն ժողովրդի հարազատ որդին։ Յանկարծ զարթեցան նրա մտքում վաղեմի յիշողութիւնները, որ մինչեւ այնօր հանգած էին։ Նա յիշեց այն հանդիսաւոր խոստումը, որ եր-

դումով ուխտել էր իր ծնողների գերեզմանի վրա։ Եւ կարծես, այդ թշուառների ուրուականները, նոյն վայրկենում դուրս դարով իրանց հանգստի խորքից, լի յանդիմանական ցասումով, սկսեցին պախարակել նրան, «զու երդմնազանց ես»... Նա զգաց մի սարսափելի սոսկում և նամակը ցած ընկաւ նրա ձեռքից։ Երկար նա գտնվում էր հոգիկան խորին խոռվութեան մէջ, որպէս մի յանցաւոր, որ յանկարծ զգում է խորի խայթը... Ի՞նչն էր մինչև այնօր կապել նրան մի օտար երկրի հետ, ինչն էր մոռանալ տուել նրան հայրենիքի թշուառութիւնը։ Այդ հարցը ծագեց նրա մտքում, երբ միանգամով պատկերացաւ նրան տիսուր և վշտալի անցեալը...

Նա շտապով բացարեց երկրորդ նամակը։ Դա բարեկամի նամակ էր լի վաղեմի յիշաստակ-ների ջերմ զգացմունքներով։ Նրան գրել էր Ստեփանոս Շահումեանը, Դաւիթ բէկի մահ-կութեան ընկերը։

«Յիշիր, Դաւիթ, այն ցաւալի օրը, — գրում էր նա ի միջի այլոց, — երբ ես Ֆաթալի խանի բանտումն էի, իսկ դու, ողբալի կրակի բոցերից մի բախտով ազատված, զանվում էր ձեռունի ներքինապետի խնամակալութեան ներքոյ։ Յիշիր այն կրակը, յիշիր այն բոցերը, որոնց մէջ այրվեցաւ քո հայրը, քո մայրը, քո

Քոյրերը: Այն կրակը դեռ չի հանդէլ: Նա հըրդեհում է մեր ամբողջ հայրենիքը: Նա ճարակում է մի ամբողջ ժողովուրդ: Ո՞վ պիտի հանգցնէ նրան, եթէ ոչ այն մարդը, որ իր անձի վրա փորձել է նրա բնլոր գծոխային տանջանքը...

Մի քանի տառերից յետոյ շարունակում էր նա,

«Ոչ ոք խելացի չի կոչի այն մարդուն, որի տունը հրդեհով պաշարված է, որի զաւակները կրակով պատած են, որի կայքը այրվում է, իսկ նա, այդ բոլորը թողած, շտապում է իր հարեւանի տունը կրակից ազատելու համար: Քո եռանդը, քո ջանքերը վրաց խարխուր ջանը պահպանելու մասին, յիշեցնում է ինձ այդ համեմատութիւնը: Ի՞նչ կը շահվի քո քաջութիւնից, քո պատերազմական տաղանդից հայոց թշուառաշխարհը, երբ գու քո բոլոր ուժերը, քո մտքի և սրտի բոլոր գորութիւնը վատնում ես յօպուտ օտարի, մինչդեռ քո հայրենիքը քեզզիսիներին աւելի կարօտութիւն ունի: Գու այժմ քո հզօր ուսերի վրա տանում ես բոլոր ծանրութիւնը մի քայքայված տէրութեան, որ ընկնելու վրա է: Գու շատ անդամ պահպանեցիր նրան իր անկումից, գու շատ անդամ ազատեցիր նրան իր թշնամիներից, շատ անդամ յաղթող հանդիսացար սարսափելի կորիւների մէջ: Բայց որքան շահվեցաւ այդ բոլորից հայոց թշուառ աղբը...

«Դաւիթ, մենք գասընկերներ ենք եղել. մենք Տաթեի վանքում, հանգուցեալ Յարութիւն վարդապետի մօտ միասին էինք կարդում հայոց պատմութիւնը: Կարծես, այդ աղզի ճակատագրի մէջ մը անէծք կայ: Նա ստեղծում է մէծ մարդիկ, ստեղծում է հանճարներ, միայն օտարներին ծառայելու համար: Ակսեալ աղքերի պատմութեան ամենախորին հնութիւնից, Հայուստանը միշտ տուել է թէ իր գրացիներին և թէ հեռաւոր ժողովուրդներին իր զաւակների ամենալընարիները: Բարելացոց, եղիպատացոց նշանաւոր պետական մարդիկների թշում առաջին տեղը բանում են հայերը: Հայերը տուեցին Հոօմինն և Բիւզանդիային ոչ միայն քաջ զօրապետներ, այլ մինչև անդամ կայսրներ: Ահուելի Պարսկաստանը իր ամենանեղ զորաժամմը միջոցին փրկութիւն էր գանում հայ զօրապետների ձեռքով: Վայրենի մանզօները, միջին Ասիայի խորքերից դուրս գալով, հայ զօրապետների առաջնորդութեամբ, ոսնակոսի արեցին ամբողջ պետութիւններ: Բաղդադի և Դամասկոսի արաբական խալիֆաներ հայ զօրապետների ձեռքով տիրեցին անսահման երկրներ: Խաչակրները իրանց տմենույաջող պատերազմներով պարտական են հայոց քաջերին: Մինչև անդամ ամենահեռաւոր Հընդկաստանի թագաւորութիւնները երկար ժամանակ օգուտ էին քաղում հայ զօրապետների

խելքից և քաջութիւնից: Ե՞նչու եմ խօսքս երկարացնում: Ո՞ր երկիրը, ո՞ր ազգը, ո՞ր թագաւորութիւնը չէ շահվել հայոց ուժերից: Նոյն իսկ քո Վրաստանը, Դաւիթ, քանիթ-քանի անդամ վայելել է հայ մարդու օգնութիւնը, ըստ միշտ ապերախտ, միշտ անշնորհակալ է մնացել դէպի հայը: Եթէ այդ անհոգ, թեթեամիտ աղջը այսօր գոյութիւն ունի, դրանով նա պարտական է հայերին: Հայաստանը, իրբեն մի բնական վահան, միշտ պաշտպանել է նրան պարսիկների, արաբացիների և մօնզօնների յարձակումներից: Արևելքից հեղեղի նման եկած բոլոր բարբարուների արշաւանքները թափել են իրանց անզթութիւնը Հայաստանի վրա և անցել: Իսկ Վրաստանը միշտ մնացել է թագնված մեր ետևում: Եւ եթէ պատահել է մեղ նրանցից օգնութիւն խնդրել, միշտ սուտ խոստումներով խարել են մեզ: Բայց հայը, միամիտ հայը, միշտ մնացել է հաւատարիմ, միշտ անձնանուեր և միշտ զոհաբերող դէպի օտարը: Նա թողել է իր տան գործը, մոռացել է իր ցաւերը և օտարի տան հոգըն է հոգացել: Նա թողել է իր երկրի աւերակները և օտարի համար պալատներ է կանգնել: Նա մոռացել է իր խորտակված գան ու գաւաղանը և օտարի գրօշի փառքն է բարձրացրել: Միթէ այդ բոլորը դու չը տեսար մեր պատմութեան մէջ: — ահա դրանումն է մեր գըլ-

խաւոր հիւանդութիւնը: Մենք մեղ ծառայել չը գիտենք, մենք մեղ համար անշնորք ենք, իսկ օտարի համար չորհալի: Նթէ հայոց բոլոր հանձարները վասնված չը լինէին յօգուտ օտարների, եթէ նրանք ծառայած լինէին իրանց հայրենիքին, ես հաւատացած եմ, որ այսօր Հայաստանը այս թշուառ գրութեան մէջ չէր լինի... Հիմ խօսքը, դու էլ կը հասկանաս, Դաւիթ, աւելի տղիւ և սարեխիդք ծառայողների մասին է, որոնք թէն իրանց հայրենիքին մի օգուտ չեն հասցըել, բայց ուղղակի վաս էլ չեն տուել: Իսկ որքան շատ է այն դաւաճանների թիւը, որոնք մի արիւնոտ գործիք գաւնալով օտարների ձեռքում, սկսել են իրանց հայրենիքը աւերակ դարձնել, սկսել են իրանց հարազատ եղբայրներին կոստրել: Թէ առաջիններին և թէ վերջիններին ես շատ չեմ զանազանում միմեանցից: Զանազանութիւնը այսքան է միայն, որ մէկը վասառում է ուղղակի կերպով, գիտակցաբար, իսկ միւսը վասառում է կողմնակի կերպով, անգիտակցաբար: Մէկը, իրբեն ծախված դաւաճան, Վասակի նման արիւնով և կրակով լեցնում է Հայաստանը, իսկ միւսը, իրբենիքն Վարդան է արդան, պարսից զօրքերի զլուխն անցած, Քուշանների հետ է պատերազմում և իր յաղթութիւններով ուժ և զօրութիւն է տալի Հայաստանի թշնամուն: Ե՞նչ ես կարծում, Դա-

ւիթ, դա նոյնքան վեստակար չէ, որպէս առաջինը: Ես գոյնէ վեստակար եմ համարում: Ես կարծում եմ, եթէ Վարդանը վերջը իր սուրը չը գարձնէր պարսկիների գէմ, նոյնքան վեստակար կը լինէր, որքան Վասակը: Ծառայել հայրենիքի թշնամուն, իր ազգի կործանողին, բարձրացնել նրա փառքը և զօրութիւնը,—այդ նշանակում է ի վեստ իր ազգի գործել. Մեծ տարբերութիւն չը կայ այդ երկու մտքերի մէջ՝ գող լինել կամ գողի բարեկամ: Օտարի ծառայութիւնը մի այսպիսի բան է, որովհետեւ բոլոր օտարները մեր թշնամիներ են: Մենք բարեկամ չունենք, և չենք էլ կարող ունենալ, քանի որ մենք ինքներս մեղ բարեկամ չենք: Ով որ իր ազգը, իր հայրենիքը չէ սիրում, իրաւունք չունի օտարներից սէր պահանջելու: Մեր թշուառ վիճակը մենք ինքներս ենք ստեղծել մեզ համար. ուրիշ ոչ ոք մեղաւոր չէ»...

«Ես զիտեմ քո մեծահոգութիւնը, Դաւիթ, դու այն տեսակ մարդիկներից ես, որոնց համար հայրենիք և ազգութիւն չը կայ, որոնց հայրենիքը լայնածաւալ աշխարհն է, իսկ ազգութիւնը՝ ընդհանուր մարդկութիւնը: Դու պատրաստ ես օդնել ամեն տեղ, ուր խոցութիւն և բռնութիւն կը գտնես: Բայց «չապիկը աւելի մօտ է մարմնին».... «Պէտք չէ խորայէլի որդիների հացը ձգել հեթանոսների չնկրին».... Յիշտմ ես այդ աւետա-

րանական խօսքը: Մեր զաւակները քաղցած թողնելով, օտարների որդիների հացի մասին հոգալը մի մեծ առաքինութիւն չի համարվի մեզ համար: Մենք այնքան սակաւ միջոցներ ունենք, մեր ուժերը այնքան անբաւական են մեզ համար, որ պէտք է ինայենք նրանց, իսկ մենք աննպատակ կերպով սպառում ենք...

«Ես ոչի՞չ նշանակութիւն չեմ տալիս այն փառքին, այն հոչակին, որ հայք ստանում է օտարների ծառայութեան մէջ: Ես այդ համարում եմ մինչև անդամ մի տեսակ յանցանք դէպի մայրենի երկիրը, ես այդ համարում եմ մի տեսակ ապերախտութիւն դէպի այն ազգը, որի արինն է կրում մարդ: Այդ խօսքերը թող չը վիրաւորեն քեզ, Դաւիթ, ես խօսում եմ ընկերի և բարեկամի հետ: Խ՞նչով ևս դու կատարում քո պարտքը դէպի հայրենիքը: Ախար այն մարմինը, այն արինը, այն սիրաը, այն հոգին, — բոլորը, ինչ որ ունես դու, պատկանում են քո հայրենիքին, բոլորը այսուղից ես ստացել: Խ՞նչու չես յետ տալիս նրան այն, որ ստացել ես: Միթէ դու այն վատ պարտազանցներից մէկը չես լինի, եթէ կուրանաս քո վճարը: Այս, կը լինես, և մեզանից ամեն մէկը նոյն վատութիւնը արած կը վենի, եթէ այդպէս կը վարմի...»

Յետոյ նա Դաւիթ բէկի ուշաղրութիւնը դարձնում էր Սիւնեաց աշխարհից նրան ուղարկված

հանրագրի վրա, յորդորում էր ժողովրդի ներկայացուցիչների ձայնը յարգել, յորդորում էր թողնել վրաց ծառայութիւնը և փութով աճապարել զէսի հայրենիքը: Նկարագրում էր Հայաստանի խառնաշփոթ քաղաքական դրութիւնը, բացարում էր պարսից պետութեան ջլատումը և նրա օրըստօրէ քայլայումը, որից պէտք էր օդուտ քաղել, նպատակայարմար ժամանակը չը կորցնել և ժողովուրդը ազտուել այդ ազգի բարբարոսութիւնից: Յետոյ մի փոքր գգուելով իր ընկերի անձնասիրութիւնը, նա աւելացնում էր.

«Մեր տղնուական դասը վչացած է, Գաւիթ, նրանց վրա մեծ յոյս գնել չէ կարուի: Գարերի ընթացքում, պարսից ազգեցութեան ներքոյ, ազնիւ արիւնը նրանց երակներում խարդախսիցաւ, Այժմ ժողովրդին պէտք է փրկէ ժողովրդի մարդը—նրա միջից դուրս եկած, նրա հարազատ որդին: Ո՞վ կարող է լինել այդ մարդը, բացի քեզանից, Գաւիթ, բացի մի անձնից, որ իր վրա փորձել է ժողովրդի բոլոր տանջանքը, բոլոր ցաւերը: Քո կոչումը մեծ է այդ դորձի մէջ: Հանգամանքները ստեղծեցին քեզ ժողովրդի փրկիչը լինել:—Եւ այդ պիտի կատարես դու...»

—Կը կատարեմ... ասաց նա խորին ցաւակցութեամբ և նամակը ցած դրեց:

Բ.

Այնուհետև Գաւիթ բէզը հրամայեց կանչել իր մօտ նամակաբերին:

—Ի՞նչպէս է քո անունը, հարցրեց, երբ յայտնվեցաւ նա:

—Աղասի, ձեր ծառան, պատամխանեց նամակաբերը, մի առանձին անձնուվասահութեամբ կանգնելով բէկի առջև:—Իմ հայրը մէլիք Վարթանէսի մօտ տնտես էր, իմ մայրը այնտեղ լուացարար էր. ևս նրանց ընտանիքի մէջ եմ ծնվել և նրանց հացով եմ մեծացել, Նրանց տան կործանման ժամանակ իմ հայրը սպանվեցաւ, անիրաւ պարսիկները նրան խէնջարներով ծակծկեցին, ստիպում էին, որ ցոյց տայ մէլիքի բոլոր հարստութիւնը. Բայց հայրս բուռ մնաց և աւելի լաւ համարեց մեռնել, քան իր տիրոջ կայքերի մատնիչը լինել. Նրանից յետոյ մայրս շատ չապրեց, կոկիծը նրան շուտով գերեզման տարաւ, երբ ևս Ստեփաննոսի հետ գերի ընկայ Ֆաթալի խանի ձեռքում: Երբ թորոս իշխանը մեղ աղատեց, այնուհետև ևս չը բաժանվեցայ Սփեփաննոսից: Որպէս իմ հայրը ծառայել էր նրա հօրը, ես էլ սկսեցի ծառայել որդուն:

—Այդ բոլորը լաւ, նրա խօսքը ընդհատեց բէկը.—Դու այն ասա, հիմայ Բնէ է շնում քո տէրը:

—Ի՞նչ կարող է լինել թեքերը կարգած արծիւը.

Նրա հօր երկրներին այժմ տիրում է ուրացող
մէլիք Ֆրանգիւլը. ինքը իշխանը գլուխ զնելու
տեղ չունի. մեռմ է նրան Քօրօղուի նման թա-
փառել մի տեղից միւս տեղ, պատժել, վրէժ-
խընդիր լինել ուր որ անիրաւութիւն, անարդա-
րութիւն կը տեսնիի:

— Մարդիկ ունի իր ձեռքի տակ:

— Մի փոքրիկ խումբ միայն, լայց այդ
խումբը արժէ հաղար մարդու. բոլորը մնը երկրի
քաջերից ընտրեալներն են, բոլորը մի հոգու
պէս կապված են իրանց սիրելի պետի հետ:

— Դժւ էլ իշխանի խմբիցն ես:

— Այս:

Դաւիթ բէկին մնծ բաւականութիւն եր
պատճառում խօսակցութիւնը իր հայրենակցի
հետ. այդ մասամբ լցուցանում եր տարիներով
տարագիր երիտասարդի սրտի կարօտութիւնը:
Նա հրամայեց Աղասոն նստել իր մօտ: Աղասին
տեղաւորվեցաւ խարոյկի մօտ, օթոցի վրա: Նրան
շատ զարմացնում էր բէկի անշուք կացութիւնը:
Նա սպասում էր գտնել վրաց թագաւորի հոչա-
կաւոր զօրապետին փառաւոր պալատի մէջ,
շրջապատած աշխարհի բոլոր շքնութիւններով:
Իսկ այժմ ինչ էր ահմանում, — մի գետնափոր
խրճիթ, որի նմանը Աիւնեաց երկրի ամեն մի
զիւղացն ունէր: Ո՞րքան աղքատութիւն է տի-
րում այդ երկրում, մտածում էր Աղասին. երբ

երկրի նշանաւոր պետական մարդը այդպէս է
ապրում, ապա ինչ կը լինի խեղճ ժողովրդի
դրութիւնը:

Աղասու մտածութիւնները ընդհատեց բէկը,
հարցնելով, թէ մէլիք Ֆրանգիւլը և Դավիթ ու-
րացողը ինչ տեսակ յարաբերութիւնների մէջ
են:

— Որպէս երկու շներ, պատասխաննց Աղա-
սին, — միմեանց խեղդում են, և ամեն մէկը աշ-
խատում է միւսի ձեռքից ոսկորը խել:

— Խանը ռըխն աւելի է համակրում:

— Խանը իր օգտին է նայում, որը աւելի
շատ կաշառք է տալիս, նրա խօսքն է լսում:

Դաւիթ բէկի տան մէջ բնակվում էր մի վրացի
ընտանիք նրա սեպհական զիւղի ճորտերից: Այդ
զիւղը բէկը ընծայ էր ստացել վրաց թագաւո-
րից, այն փառաւոր յաղթութիւնից յիսոյ, որ
նա կատարեց լէդիների դէմ: Բէկի ամբողջ
տնտեսութիւնը այդ ընտանիքի ձեռքում էր.
Հարմները և աղջիկները ծառայում էին որպէս
աղախիններ, իսկ տղամարդիկը որպէս սպասա-
ւորներ: Նրանք ընտաներար, առանց քաշվելու,
անդադար ներս էին մօնում և դուրս գալիս,
իրանք էլ չը հասկանալով, թէ ինչ բանով են
զբաղված: Բէկը հրամայեց ընթրիք պատ-
րաստին:

Մի քանի կնիկներ մօտեցան խարոյկին, յա-

տակի կենարօնում թաւալված գերանների ծայրերը մօտեցրին միմեանց, կրակը բոցավառվեցաւ, տարածելով իր շուրջը խիստ ախորժ լուսաւորութիւն։ Խարոյի վրա, առաստաղից քարշ էին ընկած մի քանի շղթաներ, ջահեր կախ տալու շղթաների նման, Նրանց ծայրերը վերջանում էին կեռ կարթերով և հասնում էին մինչև խարոյի։ Նրանցից կրակի վրա քարշ էին տալիս մեծ և փոքրիկ կաթսաներ, երբ պէտք էր մի քան երիւլ։ Կնիկները քարշ տուեցին կաթսաները և ոկտեցին ընթրիքի պատրաստութիւն տեսնել։

—Այսօր բերած փասիաններից մի քանիսը խորովեցէք, ասաց բէկը, դառնալով պէտի կնիկները։

—Տէր ես, պատրասիաննեցին կնիկները խորին հաճութեամբ, և նստելով կրակի շուրջը, մերկ գեանի վրա, սկսեցին մի և նոյն սենեակում փետրահամն անել փասիանները, որոնք բէկի այն օրվայ որսորդութեան արդիւնքն էին։

Բէկը դարձեալ շարունակեց իր խօսակցութիւնը նամակաբերի հետ Այիննեաց աշխարհի վրա։ Բայց երկու մանկահասակ կնիկների մէջ անց էր կենում մի այլ, աւելի հետաքրքիր խօսակցութիւն։

—Ի՞նչ սիրուն փետուրներ են, ասաց նրանցից մէկը, Թինան, մի առանձին հրճուանքով։ — Եթէ այդ փետուրներն էլ հաւաքելու լինեմ ինձ

համար, իմ փետուրէ բարձը լցված կը լինի, կը դնեմ զլխա ու այսպէս անուշ քնով կը քնեմ։ Վերջին խօսքերի արտասանելու միջոցին երիտասարդ կինը ձեռքը դրեց ականջին, դեղեցիկ աչքերը խփեց և զլուխը մի կողմ թեքեց, ցոյց տալու համար, թէ ինչպէս անուշ քնով պիտի քնէ։

Թինայի ազդ երեակայական բաւականութիւնը զրգուեց նրա աշխատակցի՝ Դարօի նախանձը և հետեապէս նրա բարկութիւնը, և նա սաստիկ խթելով Թինայի կողքը, ասաց.

—Ի՞նչու միայն քեզ համար, խողի զաւակ, ապա ևս բարձ չեմ ուզի։ Ինչ որ լինի՝ ինձ համար, Ես էլ կուզեմ։

—Դու Աստուծոյ կրակը ու սաստանայի ցաւը կուզես, պատրասիանեց Թինան, չը մոռանալով նոյն կերպով լիթել Դարօի կողքը։ — Քո այդ մէջմունի զլխին խօսի բարձը աւելի սաղ կը դայ։

Թինայի համեմատութիւնը չափազանց էր։ Դարօի զլուխը ամենելին մէյմունի նմանութիւն չունէր, ընդհակառակին, նա աւելի թարմ և ախորժելի դէմք ունէր։ Այդ վիրաւորանքը մի կողմից, և գուցէ կողքի ցաւը միւս կողմից, զրգուեցին Դարօին երկու ձեռքով պինդ բռնել Թինայի ծամերից և այնպիսի սաստիկ ուժով

ձիգ տալ, որ փոքր էր մնում կրակի մէջ պիտի դլորէր նրան:

—Վայ...վայ...զոչեց թիսան և ինքն էլ փոխարձաբար բոնեց Դարօի ծամերից:

Սկսեցին միմեանց քաշքել: Աղմուկը նրանց վրա դարձրեց բէկի ուշաղութիւնը: Բայց, երեւ, այդ տեսակ զործողութիւնները այնքան յաճախ կրկնվում էին բէկի տան մէջ, որ նա մի առանձին նշանակութիւն չը տուեց, միայն զգուշացրեց, որ իրան չը խանգարեն:

—Թիսա, Դարօ, այդ ինչ խարար է, այս տեղ կուելու տեղ չէ, եթէ ուզում էք միմեանց խեղել, գնացէք դուրս:

Մինչ երկու կնիկները պատշաճը և քաղաքավարութիւնը պահպանելու համար պատրաստվում էին իրանց կոխը տեղափողել սենեկակից դուրս, վրա հասան նրանց ամուսինները: Նրանցից իւրաքանչիւրը վառելու փայտերից մի կոտր վեր առնելով, սկսեց իր կնոջը ծեծել: Խռովութիւնը աւելի աղմկալի կերպարանք ստացաւ:

—Ոնզգամներ, ասում էին նրանց,—կուելու ժամանակ էք գտել, չէք տեսնում մեր տէրը այս գիշեր հիւր ունի:

Կարծես, հիւրի մօտ միայն պէտք էր համեստ լինել: Երկու կնիկները ընդունեցին այդ իրատը և իրանց մոքում յետաձեցին կոխը մի ուրիշ ժամանակի: Խաղաղութիւնը կրկին տիրած կը

լինէր, եթէ այդ միջոցին ներս չը վաղէր երկու հարսների կատաղած սկսուրը, կարգ և կանոն սիրող քեթեանը: Իսկ խեց մի փայտի կտոր և սկսեց իր որդիների պակաս թողածը ինքը լը-րացնել: Հարսները սաստիկ ձիչ բարձրացրին:

—Հա այդպէս... հա այդպէս... կրկնում էր բարկացած պառաւը ու խփում:

—Բաւական է, քեթեան, հանգստացէք, ասում էր բէկը փոքր ինչ վրդովված ձայնով և հրամայում էր դարձել:

—Կրանց պէտք է ծեծել, տէր իմ, պատասխանում էր բարեսիրտ քեթեանը, շարունակելով իր գործը.—Բանի օր է, որ ծեծ չեն կերել, դրա համար կատաղել հն: Որանց սկսուր է ծեծել, միշտ ծեծել:

—Բաւական է, դարձեալ կրկնեց բէկը:

Բարկացած պառաւը այժմ դարձաւ դէպի իր տէրը:

—Այդ բոլորը ձեր մեղն է, տէր իմ, ասաց նա գլուխը շարժելով, —այդ բոլորը ձեր թուլութիւնիցն է: Եթէ դուք էլ միւս աղմաների նման ծեծեիք, այսպէս չէին լինի: Այդ բոլորը ձեր մեղն է: Մենակ դրանք չեն, որ կատը կտրած են, ամենքը այսեղ փչացել են, նրա համար որ, դուք չէք ծեծում: Այսպիսի աղայ ես չեմ որ, դուք չէք ծեծում: Այսպիսի աղայ ես չեմ տեսել: Մալիկ տուէք մեր հարեան Գիօրգիին, ինչ-

պէս իր ճորտակի հոգին հանում է. դրա համար նրանից վախենում են:

Բէկը ժպտաց միայն և ոչինչ չը պատասխանեց: Ճորտութիւնը այդ ողորմելի ժողովրդին անասնական զրութեան էր հասցրել, որի մէջ ծեծը ընդունված էր որպէս զլիաւոր պայման բանաւոր մարդուն կարգի և պատշաճի մէջ պահելու համար: Յւ զարմանալին այն էր, որ ինքը ժողովրդը այն աստիճան սովորած էր այդ զրութեանը, որ բոլորութիւն անբնական էր համարում, երբ չէին ծեծում: Նա նմանում էր մի զրաստի, որ շատ կը զարմանար, եթէ իր տէրը չը մտրակէր:

Աղասին չէր հասկանում, թէ ինչ էր խօսվում իր շուրջը, որովհետեւ վրացերէն չը վիտէր: Քայց ինչ որ տեսան, նրա վրա խիճտ անախորժ տըպաւորութիւն գործեց: Այդ ինչ տեսակ անզգամ կնիկներ են, այդ ինչ տեսակ վայրենի մարդիկ են, մտածում էր նա: — բաւական չէ, որ կնիկները օտար մարդու հետ խօսում են, օտար մարդու մօտ երեսները բաց են անում, բայց այնքան անսամօթ են, որ միմեանց ջարդում էլ են: Նա մոտաբերում էր սիւնեցի հայ կնոջ ամօթխածութիւնը: որը ոչ թէ օտարի, այլ իր տոհմակիցների հետ անզամ իրաւունք չունէր ոչ խօսելու, ոչ դէմքը ցոյց տալու: Խոկ Աղասին այստեղ բոլորութիւն այլ տեսակ կհանք էր տեսնում

և համարում էր այդ երկիրը կատարելապէս վայրենիների աշխարհ:

Բոլորութիւն անտեղի չէր պառաւ քեթեանի նկատողութիւնը, Դաւիթ բէկը իսկապէս թոյլ էր իր տնտեսութեան մէջ: Ամենամեծ մարդիկն անդամ, որոնք պետութիւններ են կառավարում, որոնք աշխարհին օրէնքներ են տալիս, երբեմն իրանց տունը, իրանց ընտանիքը կառավարելու չունեն: Դաւիթ բէկը, որպէս պատերազմական մարդ, ուշազրութիւն չէր գարձնում ընտանեկան մանր գործերի վրա: Նա գոն էր, եթէ իրան հանգիստ կը թողնէին աւելի խոշոր քաների վրա մտածելու համար: Այդ պատճառով նրա բարի դէմքը, որ մի բոպէ առաջ փոքր ինչ խօսովեցաւ, կրկին իր սովորական պարզ արտայայտութիւնն ստացաւ, երբ աղմուկը ու խոռվութիւնը դադարեց:

Թիսան և Դարօն, երեխայի նման մոռանալով իրանց կերած ծեծը, մոռանալով միմեանց ծամերը քաշքանը, այժմ հաշտ, ուրախ, ժպանով ու ծիծաղելով, և միմեանց Հետ քաղցրիկ խօսքեր խօսելով, վետրահան էին անում վասիանները: Երեխ, դրանց սրտերը ոխակալութեան ծանօթ չէին, երեխ, դրանք չը զիտէին, թէ ինչ բան է վիրաւորանքը:

— Թիսա, ցաւդ առնեմ, առում էր Դարօն, յօնքերի շարժուածքով ցոյց տալով Աղասու

վրա, — այդ մարդը ողտեղից է եկել: — Մարկ
տուր, ինչ սիրուն բեխեր ունի:

— Աչքերը աւելի սիրուն են, հաղիւ լսելի
ձայնով նկատում էր թիւնան, — ով դիաէ, որքան
շատ ճորտեր կունենայ դա:

— Դրա համար էլ մեր աղան այսպէս պատիւ
է տալիս, իր մօտ է նստեցնում: Երեսում է, աղ-
նուական մարդ, է. մեր թաւադ ների մէջ
այստնսակ տղամարդիկ շատ քիչ կան: Տեսնում
ես, ինչ լաւ հագնված է, ասաց Դարօն մի ա-
ռանձին հոգեզմայլութեամբ:

Թէև Աղասու հագուստը բաղկացած էր զա-
դաքէ արխալուղից և Ախւնեաց երկրում գործ-
ված, հասարակ չալէ չուխայից, բայց այդ դրա-
ւում էր երկու մանկահասակ կնիկների ուշադ-
րովթիւնը, որովհետեւ իրանց երկրում ճորտերի
տէր թաւադներն անդամ այսպիսի հագուստ հագ-
նում էին միայն հանդիսաւոր օրերում:

Նրանք մաքրեցին փասիանները փետուրներից,
լուսացին, խտակիցին, չետոյ պտուտակաւոր շամ-
փուրների վրա խրելով, քարշ տուեցին կրակի
վրա: Շամփուրները կախված էին առաստաղից
քարշ ընկած շղթայից, և պտուտվելով կամաց
կամաց խորովում էին փասիանները:

Դարժի և թիւնայի մի քանի բոպէ առաջ կա-
տաղած սկիսուլը, Քեթնանը, այժմ բաւական
քարի դէմք ընդունելով, զրադիված էր կերակուր-

ների կաթսանելով, որոնք նոյնպէս քարշ էին
ընկած առաստաղի շղթաներից խարոյկի վրա:
Կերակուրները կաթսաների մէջ մի առանձին
մելամաղձական ձայնով ըլլիսըլիսկում էին, տա-
րածելով իրանց շուրջը խիստ ախորժելի հոտ:
Մի քանի չափահաս աղջիկներ անդադար դուրս
էին գալիս և ներս մտնում, կատարելով պառա-
ւի պատուէրները: Նրանք ճրագի փոխարէն բըռ-
նած ունէին իրանց ձեռքում խէժաւէտ եղենի
վառած տաշեզներ, որոնք լցրել էին տունը ա-
նուշ խնկահոտութիւնով: Դրանք Քեթնանի աղ-
ջիկներն էին, թուով երեք հոգի, որոնց երեցին
կոչում էին Սօփիօ, միջնակին Փէփէլօ, խոկ
կրտսերին Նինօ: Այդ ուրախ, պարզամիտ արտ-
րածները, կոլոլված չղեղիչն դերիանների մէջ,
բորլիկ ոտներով վազվում էին, թոթուում էին
կրակի շուրջը, երբեմն առս բերելով, երբեմն այն
տանելով, և խրաքանչիւր սխալ դործելու մի-
ջոցին՝ պառաւ մօր զգուշացնող յիշոցները ա-
մեններն չեին խանգարում նրանց ուրախութիւնը,
որի պատճառը իրանք էլ չը զիաէին:

— Սօփիօ, հարցրեց երեց քրոջից միջնակ քոյ-
րը՝ Փէփէլօն, նրան մի կողմ տանելով, — այդ
մարդը միշտ պիտի մնայ մեր տանը:

— Զեմ իմանում, պատասխանեց սառնութեամբ
Սօփիօն, — կարելի է մնայ, կարելի է դնայ: Ով է
իմանում:

— Ես կուզէի, որ նա միշտ թեր տանը մնար, ասաց գետիլոն ժապոելով.—դու չէիր ուզի.

—Հողեմ նրա զլուխը... ինչիս է պէտք... պատասխանեց Սօփիօն իր գեղեցիկ դէմքի վրա մի ծաղրական խոճոռ դործելով:

—Սիրուն տղամարդ է:

—Սիրուն տղամարդ է, քեզ համար պահիր, ասաց Սօփիօն, ձեռքի հինգ մատներով աննկատելի կերպով «մըճիկ հանելով» (*) դէպի Աղասու կողմը:

Մանկահասակ աղջիկներին յատուկ է իրանց առաջին սերը արտայայտել արհամարհանքով։ Նրբ գիւղացի հասարակ աղջկան մի սիրային խօսք ես ասում և նա պատասխանում է քեզ բարկութեամբ կամ ապտակով, կարող ես այնուհետեւ վստահ լինել, որ նա ընդունեց քո առաջարկութիւնը։ Այդ կէտից պէտք է բացատրել Սօփիօն արհամարհանքը դէպի Աղասին։ Սիրնեցի վայելչադէմ երիտասարդը արդէն իր վրա էր դարձրել աղջիկների և հարսների բարի ուշադրութիւնը, թէն նրանցով մէկի հետ չէր խօսացել, թէն ինքը նրանց վրա ուշադրութիւն չէր դարձնում։

Փոքրիկ տնակի մէջ կեանքը հետղհետէ աւելի ուրախ, աւելի բաղադրեալ կերպարանք էր ըս-
*) «Մըճիկ հանել» նշանակում է քօքօլայ անել։

տանում։ Պառաւ Քեթեանի որդիները, որոնք թէկի տանը ծառաների և սպասաւորների պաշտօն էին կատար ^շ աւարտելով իրանց գործը ախոռատնում կամ՝ մարագում, այժմ եկել, ընտաներար շարվել էին կրակի շուրջը։ Մէկը տաքանում էր և խորին հոգեզմայլութեամբ ականջ էր զնում կերակուրների եփ գալու ձայնին, միւսը խորովզաղ վասիանների հոտովն էր հրապուրվում, երրորդը իր պատառուսած տրեխներն էր կարկատում, իսկ հինգերորդը մանր աւազով մաքրում էր մի ժամգոտած հրացան։ Նրանց մօտ թաւալվում էին մի խումբ կիսամերկ երեխաներ, պառաւ Քեթեանի թոռնիկները, մէկը ծուլօրէն յօրանչում էր, միւսը նիրհում էր, իսկ մնացածները, որ աւելի արթուն էին, աչքները չռած, ապուշ ապուշ նայում էին կաթսաների վրա։ Խարոյկի մեզմ բացերը պլավում էին, լուսաւորելով այդ ամրող նախնական կացութիւնը, որ իր պարզութեան մէջ կրում էր նահապետական կեանքի բոլոր վայելչութիւնները...

Բէկը լուռ մտախոհութեան մէջ թեք էր ընկած տախտի վրա։ նա, կարծես, չէր նկատում, թէ ինչ է կատարվում իր շուրջը։ Ուերը նեցուկ տալով զլիխն, նա ընկողմանած էր բարձի վրա և նրա միաքը սլացել էր հեռու, հեռու դէպի հայրենի աշխարհը։ Նա ^ա իշում էր իր թշուառ մանկութիւնը, յիշում էր իր անորախտ, չքաւոր

ծնողներին, յիշում էր այն բոլոր տանջանքը, այն բոլոր ցաւերի դառնութիւնը, որ մաշում էր նրանց: Յտարութեան մէջ անցուցած տասն և հինգ տարին երեսում էր նրան որպէս մի երազ, և քնից արթնացած մարդու նման, այժմ պատկերանում էր նրա մտքում միայն տիտուր և վրշտերով լի անցեալը, որ նա վարել էր հայրենական երկրում: Նա կրկին վեր առեց եպիսկոպոսների, վարդապետների, մէլիքների, տանուտէրների գրած հանրագիրը, սկսեց նորից կարդալ:

Աղասին լուր նստած էր տախտից ցած, յատակի վրա: Նրա ուշաղը ութիւնը ալժմ գրաւել էին երկու հարսները, որոնք տաշտի մէջ սիմինարի ալիւրից խմոր էին հունցում, այդ խմորից գնդակներ էին չինում, և խարոյկի շիկացած ածուխները բաց անելով, գնդակները թաղում էին տաք մոխրի մէջ, կրկին ծածկում էին ածուխներով: Այսաեղ, մոխրի մէջ առանց այրվելու, եփում էին գնդակները: Դա այդ երկրի հաց թխելու ձեռ էր, որ ոչ սակաւ զարմացնում էր Աղասուն, յիշեցնելով նրան իր հայրենիքի սպիտակ, թղթի պէս բարակ լաւաշները, որ պատրաստվում էին թօնրի մէջ: Ի՞նչպէս ուտում են այս տեսակ հայցը, մտածում էր Աղասին, այն ևս այսպիսի տան մէջ: Նա այժմ սկսեց նայել սենեակի պատերի այն հակատի վրա, որ պա-

տած էր պարսկական գորգով, որ կողմումը գըրված էր և բէկի տակառը: Այսաեղ տեսարանը բաւական դրաւիչ էր: Պատի վրա կարդով քարչ էին ընկած զանազիւ, տեսակ հին և նոր զէնքեր, զանազան տեսակ անօթներ: Այսաեղ կարելի էր տեսնել երկաթէ մանր օգակներից հիւսիած շապիկներ, որ զրահի տեղ էին գործածվում: Այսաեղ կային պարսկական ճաշակով շնչված, հնագարեան սաղավարտներ երկաթէ վակասներով: Այսաեղ կային վահաններ, նիզակներ, տասպարներ, որ կրում էին վաղեմի ժամոնակների արհեստի կոշտութիւնը: Գրանց թւում կարելի էր տեսնել և նոր ժամանակի զէնքերը. թրեր, տործանակներ, հրացաններ, լեզգու խէնջարներ, բուլոր բաւական գեղեցիկ և չքեղ կերպով պատրաստված: Գրանց շարքում զետեղված էին՝ հազին եղջիւրներից շնչված և արծաթով պատած զինու գաւաթներ, զանազան տեսակ չիրուխներ, գունավոր փայտից շնչված զինու սրուակներ, որսորդական փողեր, մի խօսքով բոլորը, ինչ որ կայացնում էր տան ափող զվաւոր հարստութիւնը:

Սկսնեակի միւս պատերի վրա Աղասին տեսնում էր քարչ ընկած աւելի հասարակ առարկաներ, որպիսիներն էին ձիու սանձեր, թամքերի պարագայք, մարդիկ կամ ձիաներ բոնելու առաստնակներ (արկան), և դրանց թւում կարելի էր

տեսնել՝ մինը միւսի հետ կապված, խեցեղէն
փաքրիկ թմբուկներ, դարիաներ, որոնք մանկա-
հասակ հարսների և աղջիկների երաժշտական
սեպհականութիւնն էին:

Բէկը վերջացնելով հանրագրի կրկին ընթեր-
ցումը, դարձաւ դէպի Աղասին այդ հարցով.

— Դու այսուեղ զալու ժամանակ ֆաթալի
խանը Ղափանհեմն էր, թէ մի ուղիւ տեղ:

— Խանը Ղափանում չէր, պատասխանեց Աղա-
սին, սրտում ուրախանալով բէկի հետաքրքրու-
թեան մասին,— ես զալու ժամանակ նա իր ցե-
ղով անցել էր Արաքսը Ղարաղաղի լեռների վրա
ամառը անցկացնելու համար:

— Ի հարկէ, նա այնուեղ կը մնայ մինչեւ աշ-
նան վերջը:

— Ի հարկէ, կը մնայ. Խաչնարածները, մինչեւ
ջուրը չը սառչի, չնա վերաղառնում իրանց ա-
մարանոցից:

Վերջն աեղեկութիւնները մի յուռադրական
ուրախութիւն աղջիյին բէկի սրտին և նրա մի
քանի բոպէ առաջ մռայլված դէմքը փոքր ինչ
պայծառացաւ: Կա այժմ զաանվում էր այն հո-
գեկան բերկրանքի մէջ, որպէս մի մարդ, որ
տեսնում է իր առջև նպաստող հանգամանքներ,
որոնք կարող էին հասցնել ցանկալի նպատակին:

Նրա մտածութիւնները ընդհատեց նի աղմուկ,
որ լսելի եղաւ դրսից:

Գ.

Բակից լսելի եղաւ չների հաչելու խասնա-
ձայն աղաղակը, որպէս թէ նրանք մէկի վրա
յարձակված լինէին, Պառաւ Քեթևանի երկու
որդիները, Փրիգօնը և Նիկօն, մահակները առ-
նելով, դուրս վաղեցին տեսնելու, թէ ինչ է
պատահել: Աղմուկը աւելի խոռվեալ կերպարանք
ստացաւ: Մէկի սպառնալից հայհոյանքները
խառնվում էին չների կատաղի հաչելու հետ:
Կանայքը նոյնպէս վաղեցին դէպի դուրս, բայց
հասնելով սենեակի շէմքին, նրանք սարսափելով
յետ-յետ քաշվեցան և սասափիկ ձիչ բարձրացրին:
Այդ միջոցին դռնից հայհոյանքներով ներս պըր-
ծաւ մի վիթխարի մարդ, որ երկու ձեռքով պինդ
բռնել էր մի ահազին զամփոփ ականջներից և
իր հասակի երկայնութեամբ վեր էր բարձրացրել:
Շան երեսը դարձրած էր դէպի իր ախոյանը,
նա լայն բերանը բաց արած, սպիտակ ժանիքները
ցոյց էր տալիս, մոնչում էր, հեծկլտում էր և զօրեղ
թաթերով ճանկուտում էր վիթխարիի կուրծքը,
բայց դարձեալ չէր կարողանում իր գլուխը ու
ականջները աղատել նրա ձեռքից:

— Այսուհետեւ կը խելօքանաս, ասում էր վիթ-
խարին,— էլ Բայինդուրի վրա չիս յարձակվի, երբ
քո ականջներից լաւ կը քաշեն:

Վիթխարիի վարմունքը, որ սկզբում սարսափ
աղջեց ասանեցիների վրա, այժմ շարժում էր բոլո-

ըի ծիծաղը, որոնք ցըջապատելով նրան, խնդրում էին, որ բաց թողնէ շանը և նրա պատիժը բաւական համարէ: Վիթխարին սաստիկ ուժով շըպատեց գազանին մի քանի ճայլ հեռու, որը մընաց յատակի վրա անշարժ: Յետոյ մի առանձին վեհութեամբ կանգնելով նրա դիակի մօտ, խօսեց.

Այս այդպէս, անպիտան, այսուհետեւ կը սովորես, թէ ինչպէս պէտք է վարվել Բայինդուր իշխանի հետ: Պարսից շահընշահը նրան «բաթման-դլիճ» Բայինդուր էր կոչում, իսկ դու, անպիտան, ում հետ ես խաղ խաղում...

Այդ իրաւ է, որ պարսից շահընշահը Բայինդուր իշխանի անպարտելի ուժի համար նրան քա թման-դլիճ ախտղոս էր տուել, որ նշանակում է՝ մի բաթմանի ծանրութեամբ թուր կրող: Բայց ողորմելի շանը ինչով էր հետաքրքիր, թէ նա պարսից թագաւորից ինչ տիտղոս էր կրում:

Նկատելով, որ շունը ոչինչ չէ պատասխանում, թողեց նրան յատակի վրա, և մօտենալով բէկին, ինքն իրան առում էր.

Ինչպէս տէրն է, այնպէս էլ իր չներն են. քաղաքավարութիւն ասած քանի հոտն անգամ չեն առել:

Դաւիթ բէկին վաղուց յայտնի լինելով իշխանի տարապայման բնաւորութիւնը, ոչ միայն չը

նեղացաւ այդ խօսքերից, այլ սկսեց ժպտալ նրա վիրաւորանքի վրա, որ պատճառել էին անքաղաքավարի չները:

—Դու բաւական պատժեցիր անպիտանին, իշխան, ասաց բէկը, հրաւիրելով նրան նստել.— այսուհետեւ կը հասկանայ, թէ ինչպէս պէտք է վարպել բաթման-դլիճի հետ:

Մօտենալով բէկին, իշխանը նկատեց Աղասուն, որ զարմացած նայում էր իր շուրջը կատարվող կօմեղիայի վրա:

—Դա որոնեղից լոյս ընկաւ, հարցրեց նա, իր խոշոր աչքերը լայն բացելով և ուղիղ մտիկ տալով Աղասու երեսին:—Երեխ, թոկից փախած մէկը կը լինի, անպատճառ թոկից փախած, թէ չէ, մի բարի պառեղ այս կողմերը չի գայ:

—Մեր երկրիցն է, իշխան, պատասխանեց բէկը, զգուշացնելով, որ Աղասու հետ ես մի անկարգութիւն չը սարքէ:

—Մատներս կը կտրեմ, եթէ թոկից փախած չը լինի:

—Ոչ, մի քաջ և լաւ տղայ է:

—Այսինքն՝ Ցիսուս Քիսոս Քիսոսսի փափուճները գողացողներից... Աչքերիցը երեսում է:—Այդպէս չէ: Կրջին հարցով դարձաւ նա դէպի Աղասին:

Վիթխարիի նկատողութիւնները այն աստիճան վիրաւորեցին Աղասուն, որ չը նայելով պարսից

թագաւորը նրան բաթման-դլիճ էշ կոչում, ինքը պատրաստ էր իր խէնջարը խրել նրա կուրծքը և ցոյց տալ, թէ իր հետ էլ այդ տեսակ հանաքներ անել չէ կարելի: Բայց տեսնելով, որ բէկը յարգանքով է վերաբերվում դէպի այդ մարդը, զսպեց իր բարկութիւնը և հանգիստ մնաց:

Վիթխարին բարձրացաւ, նստեց բէկի մօտ, թախտի վրա: Տանեցիք այդ ժամանակ զբաղված էին ուշաթափ եղած չնովը. մէկը սառ ջուր էր ածում նրա վրա, միւսը ականչից էր քաշում, երրորդը պոչիցը, մի խօսքով, ինչ որ գիտէին, ամեն բժշկական հնարներ գործ էին դնում, որ նրան ուշի բերեն: Ղերջապէս ջարդված դադանը վերկացաւ, և հարբած մարդու նման, օրորվելով, զլուխը տատանելով, կամաց-կամաց հեռացաւ սենեալից, իր մտքում անիծելով պարսից թագաւորի բաթման-դլիճին, որ այնպէս խիստ վարդեցաւ իր հետ:

Բայց պարսից թագաւորի բաթման-դլիճը ուշադրութիւն չը դարձրեց նրա վրա. նրա ուշադրութիւնը այժմ գրաւում էին խարոյկի վրա եփ եկող կաթսաները և շամփուրների վրա խորով-վող փասխանները:

—Գրողը տանէ քեզ, գիթեան, դարձաւ նա դէպի պառաւը, ինչ խաբար է այս գիշեր, հարսանիք ունես, ինչ է:

—Զիս տեսնում, որ մեր տէրը այս դիշեր

հիւր ունի, էլ բնչու ես հարցնում, պատասխանեց պառաւը անփոյթ կերպով և շարունակեց իր դորձը:

—Տեսնամ, եմ, քաւթառ, տեսնում եմ...ձեր տէրը հիւր ունի... ասաց նա խռպոտ ձայնով: Զէնց ես այսոնդ եկած ժամանակ քո աչքերը քուանում են:

Պառաւը ոչինչ չը պատասխանեց, մտածելով, որ շատ հեռու կը տանէր նրա հետ վիճելը, մանաւանդ նա նկատում էր, որ իշխանը, որի հանաքներին ամենքը սովոր էին, այժմ փոքր ինչ խմած պէտք է լինէր:

—Ո՞րտեղ էիր, հարցրեց նրանկոյ բէկը, կամենալով սկսել մի լուրջ խօսակցութիւն.

Բայց իշխանը, փոխանակ նրան պատասխանելու, դարձաւ դէպի պառաւի մանկահասակ հարսներից մէկը, և իր մօտ կանչելով, ասաց.

—Մօտ եղ, Դարօ, մօտ եղ, —դու. էլ ինչ որ փոխվել ես, խոզի զաւակ, չես էլ մտածում բարեկ Բայինդուրի հետ:

Դարօն կարմրելով, դողդողալով, մօտեցաւ: Վիթխարին բռնելով նրա ձեռքից, այնպէս սաստիկ հուփ տուեց, որ խեղճ կինը ողորմելի ձայնով ձչաց և փոքր էր մնում, որ սիրաը թռւանար:

—Դու քո ուժը հէնց կանանց մասների վրա

ես փողձում, իշխան, ասաց նրան բէկը հեղնական ժամանով:

—Այդ ինձ ուրախութիւն է պատճառում, բէկ, մեծ ուրախութիւն, պատասխանեց իշխանը ծիծաղելով:

—Որպէս կատուին ուրախութիւն է պատճառում մկան ծւծոցը, նրան կեղեքելուց առաջ:

—Այդպէս չէ:

—Ուզիդ այդպէս, իմ խելացի տղաս, լաւ հասկացար, Աստուած է վկայ, լաւ հասկացար: Ի գուր չէ, որ վրաց թագաւորը քեզ նման իմաստունին իր վէզիրէ շնել: Խելքդ ծով է, ինչ ասել կուզէ, ամեն բան հասկենում ես:

8
113
[բէկը ժապաց և ոչինչ չը պատասխանեց: Պառաւ Քեթեանի աղջիկները, Աօփիօն և Փէփէլօն, այդ միջոցին դողդողալով, տավստի վրա պատրաստում էին ընթրիքի սեղանը, վախենալով, մի գուցէ Գարօի հետ պատահածը իրանց էլ պատահի: Բայց նրանց բախտից վիթխարին այդ ժամանակ գարձաւ դէպի երկու աղջիկների եղայլներից մէկը, Նիկօն, հրամայելով.

—Ե՞յ, քեզ եմ ասում, Նիկօ, գնա գինու մի նոր կարսո բաց արա, այն կարմրիցը, հասկանում ես:

—Անցեալ օրվայ բաց արած կարսոը դեռ կէս չէ եղել, աէր իմ, պատասխանեց Նիկօն տե-

դից չը շարժվելով.—այն էլ կարմիր է, նոյնքան կարմիր, ինչպէս նռան հատիկը:

—Քեզ ինչ որ ասում են, այն լոիր, իշխուս, զատողութիւն անել պէտք չէ, գոչեց վիթխալին բարկանալով:—Հիմայ անքան հիւրեր կը գան, եթէ քո մայր Քեթեանը իր գլուխն էլ ուտացնէ, չէ կարող կշտացնել նրանց:

Նիկօն աւանց այլ ևս հակառակելու, վեր առեց բահը, իր եղբայր Փրիդօնի հետ գնացին կարմիր զինու մի նոր կարսո բաց անելու: Նրանց քոյր Նինօն, եղենի վառած տաշեղը ձեռքին բռնած, լուսաւորում էր նրանց ճանապարհը: Գինու կարսաները, թւով աւելի քսն հարիւր, թաղած էին բէկի տանը կից պարտիզում, գեանի մէջ: Լորկու եղբայրները անցան դէպի պարտէզի այն կողմը, որտեղ թաղված էին կարմիր զինու կարսաները: Նիկօն սկսեց բանով փորել գետինը, իսկ նրա եղբայրը ճանկերով յետ էր քաշում հողը: Շուտով երեաց կարսոի խուփը, որը վեր առնելով, կախէթի աղնիւ ըմպելիի անուշտութիւնը հիացնելու չափ հրապելիի անուշտութիւնը հիացնելու համար Յուրանց: Երկու եղբայրները, նախ քան զինին դէպի տուն կրելը, Այրին ահազին փայտեայ գաւաթը, իւրաքանչւրը մի-մի գաւաթ խմեցին, չը մոռացան մի գաւաթ ևս իրանց քոյր Նինօն տալ իր ծալաւը յագեցնելու համար: Ցեսոյ ոչխարի տիկերը եցնելով, կարսոի

բերանը կրկին ծածկեցին հողով, և վեր առած զինին տարան տուն:

Վիթխարին փորձի համար պահանջեց, որ նոր բաց արած դինուց տան իրան. երբ բաւական լայնածաւաշ՝ բաղիան դատարկեց նա, մը առանձին հաճութեամբ ասաց.

—Այդ ես հասկանում եմ, դրուստ Յիսուս Քրիստոսի սուրբ հաղորդութեան զինին է:— Վո՞նց չէ, իչի զլուխ, դարձաւ նա դէպի նիկօն, —դու ուղում էիր քացախով լցնել մեր փորը: Այս դինով ես էլ չնորհակալ կը լինեմ, Ասուած էլ:

—Ի՞նչ եղան այդ անպիտանի քրը այսքան ժամանակ ուշացան, խօսեց նա ինքն իրան,—ես նըրանց ջրաղացի մօտ թողեցի, որանդ կորան, դեռ չեն երևում:

Բէկին լւա յայտնի լինելով, թէ ինչ հիւրերի է սպասում վիթխարին, ամենեին չը հարցրեց, ովքեր պէտք է լինեն եկողները. միայն նա աւելի դոհ կը լինէր, եթէ այս զիշեր իրան հանդիստ թողնէին իր մոքերի հետ զբաղվելու համար:

Բայց պառաւ Քեթեանը, չը համբերելով, հարցրեց:

—Ո՞վքեր պիտի գան:

—Գրողները, որ հոգիդ առնեն, քաւթառ, պատասխանեց նա ծիծաղելով:—Համբերութիւն

ունեցիր, հիմայ կը տեսնես սոված գայլերի նըման ներս կը թափիւն:

Բայց ի՞քը վիթխարին, չը կարողանալով համբերել, վեր կացաւ, որ տեսնէ, թէ ինչու ուշացան հիւրերը: Բէկը մտածելով, որ նոր անկարգութիւններ կարող են պատահել, հրամայեց ծառաներին, որ չներին կապեն:

—Պէտք չէ, ասաց նա.—«Չունը շան միս չի ուտի»... և դուրս եկաւ սենեալից:

Վիթխարիի հեռանալուց յետոյ Աղասին հարցրեց բեկից.

—Այդ մարզը զիժ է, թիչ է:

—Ո՞չ, նա մի չափազանց բարի և անկեղծ մարդ է, ասաց նրան բէկը:

Բայցնուր իշխանը, պարսից թագաւորից «բաթման-զլիճ» տիտղոսը կրող հսկան, բնիկ սիւնեցի էր, ազգով հայ: Նա քառասուն և հինգ տարեկան հաղիւ կը լինէր: Բայց թափառական կեանքը մի կողմից, որ նա վարել էր երբեմն պարսից, երբեմն տաճկաց ծառայութեան մէջ, իսկ աղմկալի և արկածներով լի կնանքի դառնութիւնները միւս կողմից, պատել էին նրա զլուխը վաղահաս ալիքներով, որ բոլորովին չէին համապատասխանում նրա ուրախ, մշտագուտարթ դեմքին, որը տակաւին պահպանել էր իր երիտասարդը, զական թարմութիւնը: Դեռ Վրաստան չեկած, Բայցինդուր իշխանը որպէս զօրապետ ծառայում էր

Ատրապատականի պարսից փոխարքայի մօտ և շատ սիրված ու յարգված էր նրանից։ Բայց նրա սիրային յարաբերութիւնները փոխարքայի հարեմական կնիկներից մէկի հետ առիթ՝ տուեցին նրան թողնել, թաւրիզը և հեռանալ դէպի Վրաստան։ Այստեղ գտաւ նա Դաւիթ բէկից պաշտպանութիւն և նրա ձեռնտւութեամբ յաջողվեց վրաց ծառայութեան մէջ մտնել։

Առհասարակ ամեն դարեղի ընթացքում, երբ հայոց քաջերից մէկը կամ յունաց, կամ պարսից, կամ արաբացոց, կամ վրաց ծառայութեան մէջ յաջողութիւն է գոյել, հռչակ և նշանակութիւն է ստացել, բարձր տատիճանների է հասել, այնուհետեւ փոքր առ փոքր խմբվել են նրա շուրջը ուրիշ շատ հայեր, որոնք իրանց ազգակցի մօտ որ և իցէ պաշտօն գտնելու փափազով դիմել, են նրան և մնացել նրա մօտ։ Այսպէս էլ Դաւիթ բէկի հռչակիլը հրապուրեց դէպի Վրաստան հայոց երիտասարդներից շատերին։ Ամեն կողմից հայ փախստականներ, անաջողակներ, բախտայնդիրներ, դալով նրա մօտ, սիրավել ընդունելութիւն էին գտնում և նրա օգնութեամբ ծառայութեան մէջ էին մտնում։ Բէկը մեծ հաւատունէր հայերի քաջութեան, խելքի և հաւատարմութեան վրա, այս մտքով աշխատում էր, որքան կարելի է, իրան շրջապատել իր համազգիներով։ Այսպիսինների թիւը քսանից աւելի կը

լինէր, որոնցից մէկն էր Բայինդուր իշխանը, Բէկի գուռու ամեն ժամանակ բաց էր նրանց առջև և նրա սեղանը բոլորի համար հասարակաց էր դարձել։ Գրանով պէտք է բացատրել Բային-էր դարձել։ Գրանով պէտք է բացատրել Բային-էր դուր իշխանի ընտանիութիւնը, որով այնպէս տիրաբար էր վարպում բէկի զինու կարասների հետ։

— Հիմայ դու կը տեսնես այստեղի նշանաւոր հայ տղամարդերից մի քանիսին, ասաց բէկը դառնալով դէպի Աղասին, — նրանցից ոմանք մեր աշխարհիցն են։

Աղասին անհամբերութեամբ սպասում էր Բայինդուր իշխանի վերադարձին, որ գնաց հիւրերին դիմաւորելու, քեթեանը տհաճութեամբ մըրմըրթում էր։ Հիւրերի այցելութիւնները ոչոքին այնքան նեղութիւն չեն պատճառում, որպէս նրան, Պառաւ տանտիկինը ստիպված էր մինչեւ առաւօտ անքուն մնալ, որին խիստ կարօտ էին նրա յոդնած և մաշված անզամները։ Իսկ այս գիշեր նրա տհաճութեանը չափ չը կար, երբ բէկը հրամայեց կերակուրների թիւը աւելացնել։

Դ.

Պոնից լոելի եղաւ պարկապղուկի^(*) մեղմ հնչիւնները, որոնց ներդաշնակում էր աշուղի տիսուր երգը։

*) Վրացիք կոչում են ստվելի իւ

«Աղջիկ, աղջիկ, սիրուն աղջիկ,
 «Թէ ինձ չը տաս դու մի պաշիկ,
 «Ես պարոնին գանգատ կանեմ,
 «Սրտիս ցաւը նրան կը յայտնեմ:

 «Աղջիկ, աղջիկ, սիրուն աղջիկ,
 «Թէ չը դառնաս դու իմ կնիկ,
 «Ես պարոնին գանգատ կանեմ,
 «Յոր մօր դրկից քեզ կը լուեմ:

 «Թէ պարոնն էլ ինձ չը լսէ,
 «Խոր գերեզմանն ինձ կը ծածկէ,
 «Այն ժամանակ ես Աստուծուն,
 «Կը բողոքեմ միւս կեանքում:»

Դա ստրուկի երգ էր, որ իր հոգեկան, սիրոյ
 զգացմունքների մէջ ես զատաւոր է ընարում
 պարոնին, որ նրանից է սպասում բոլորը,
 ինչ որ քաղցր, ինչ որ բարի է իր համար:

Փողովրդական բանաստեղծի երգը գուրս կո-
 չեց մանկահասակ աղջիկներին ու հարսներին,
 որոնք ուրախ խումբով վաղեցին հիւրերի ա-
 ռաջ: Պառաւ քեթեանի որդիները նոյնակս
 գուրս եկան չներին զսպելու համար: Բէկի տան
 ընդարձակ բակը լցվեցաւ խուռն ամբոխով:
 Հիւրերի հետ եկած սպասաւորները, երկայն,
 ձողաձև կերոնները բոնած ձեռներին, լուսաւո-
 րում էին այդ աղմկալի բաղմութիւնը, որ իր

խառնաձայն բացականչութիւններով թնդեցնում
 էր զիշերային լուսութիւնը: Հիւրերից մէկը, զի-
 նու ահազին լիտրան ձեռքին բռնած, անդա-
 գար ածում էր և մասցւցանում էր իր ընկեր-
 ներին: Ոմանք պարում էին, ոմանք թռչկոտում
 էին, իսկ ոմանք իրանց աններդաշնակ երգերով
 խլացնում էին, աշուղի նուագածութիւնը, ա-
 ռանց ուշադրութիւն դարձնելու նրա պարկապը-
 զուկի երաժշտական եղանակին:

Նրանք խմբով մօտեցան բէկի սենեակի գը-
 րանը, այնտեղ կանգնեցին, գոռում, գոչում էին,
 որ նա գուրս գալ և իրանց ընդունէ: Բայց բէկը
 չը շարժվեցաւ իր տեղից, ոչ թէ նրանց չը
 պատմելու համար, այլ այսպիսի այցելութիւն-
 ները այնքան յաճախ էին կրկնվում, որ տա-
 նուտէրը աւելորդ համարեց մի առանձին նշա-
 կութիւն տալ նրանց քմահածութեանը:

—Կը կոտրենք գուռը, եթէ դուրս չը դաս, —
 կը կոտրենք, գոշում էին ամեն կողմից:

Այդ միջոցին բայինդուր իշխանը ներս մտաւ,
 և բռնելով բէկի ձեռքից, համարեա զօռով
 քաշեց նրան, ասելով:

—Լսիր, ինչ որ ասում է քեզ պարսից շահն-
 շահի բաթման-դլիջը. քէփի ժամանակ մեծն ու
 պսակիը մէկ զին ունեն. —գնանք:

Երբ բէկը յայտնվեցաւ, եկուտրները ընդու-
 նեցին նրան ուրախսութեան աղաղակներով: Նը-

բանցից մէկը գինով լիքը բաժակը դէմ արեց:
Բէկը ընդունեց, և բոլորի կենացը խմելուց յետոյ,
հրաւիրեց նրանց իր մօտ: Բոլորը խմբով
ներս մտան: Եւնեակը լցվեցաւ խառն բաղմութիւնով: Բաց տեղ մնացիլ էր միայն խորոյկը,
որ այդ միջոցին աւելի եռանդով բոցավառվում էր: Հիւրերը մի քանի բոսէ կանգնած մնացին,
երգեցին, պարեցին, թռչկոտացին, և խսպառյունուց յետոյ, տեղաւորվեցան տախտի վրա,
ուր առաջ նստած էր բէկը: Նրանց հետ եկած սպասաւորները գնացին տան տիրոջ ծառաների մենեակը, բէկի գինու կարսաների բարիքը վայելելու համար: Մի քանի բոսէից յետոյ լսվում էին նրանց ուրախութեան խառնաշփոթ աղաղակները:

Աղասին զարմացած նայում էր այդ անհոգ, զուարձասէր մարդկանց վրա, որոնց նմանը միայն բարեկենդանի օրերում կարելի էր տեսնել, երբ թէ աղքատը, թէ հարուստը, երբ թէ խելացին, թէ անխելքը անձնատուր են ընում մի աեսակ դժութեան հասցրած ուրախութեան: Նա մտածում էր. միթէ դրանք պիտի լինեն իր հայրենիքի փրկիչները, միթէ դրանցից մի լաւքան կարելի էր սպասել:

Բացի Բայլնուուր իշմանից, մնացած հիւրերը տասն և երեք հոգի էին: Նրանց մէջն էր արցախեցի Մխիթար, սպարապետը, միակ տղամարդը,

որ որոշվում էր բոլորից իր ծանրութեամբ, որը գործի հետ միացնել գիտեր և սաւաք մտածմունքը, իսկ քաջութեան հետ՝ անվեհեր վճռականութիւնը, Նրանց մէջն էր լոռեցի Աւթանդիլ զընդապետը, մի չափազանց ջերմառանդ և կրօնամոլ մարդ, որի մէջ ծիսապաշտութիւնը այն աստիճան մնահաւաստութեան էր հասել, որ ամեն անգամ, երբ պատահում էր նրան իր պասը լուծել, հաւատացած էր, որ այդ մեղքը մի այլ ապաշխարութեամբ չէ կարող սրբել, բայց միայն մի թուրք կամ պարսիկ սպանելով: Նրանց մէջն էին միծ Գիօրգին և փոքր Գիօրգին, որոնք, որպէս երկու երկուորեակներ, շատ նման էին միմեանց թէ դէմքով, թէ բնաւորութեամբ, միայն փոքր Գիօրգին իր աչքերից մէկը թիֆլիսում կորցրել էր մուշտէկուի մէջ և միշտ մի առանձին փափագով ցանկանում էր գիտենալ, թէ ով էր այդ արատը հասցնողը, որ ինքն էլ առիթունենար փոխարէնը նրա երկու աչքերը հանելու: Նրանց մէջն էր երեանցի, մէկ ոտքից կադ օհանէսը, մի փոքրիկ նենդուոր մարդ, որ իր չափազանց խորամանկութեան համար յայտնի էր մականունովս «օյինբաղ»: Նրանց մէջն էր շուշեցի Զաքարիայ իշմանը, մի ահապին տղամարդ, որ միշտ պարծենում էր, թէ իր պապը սովորութիւն ունէր ճաշին ամեն անգամ մի արող խորոված գառն ուտել: Նրանց մէջ էր

գող Ծատուրը, որը Ղազախի կողմերիցն էր, և որի մասին պատմում էին, երբ նրան չէ յաջողվում ուրիշց մի բան գողանալ, նա գողանում է իր սեպհական տրեխները, թաղյնում է և միւս օրը սկսում է բորիկ ոսներով ման գալ, որ տրեխները նրա մօտ չը տեսնեն և գողութիւնը չը յայտնվի։ Նրանց մէջն էր պատանի Մօսին Նախիջեանի կողմերից, որ իր գեղեցիկ աչքերի համար յայտնի էր անունովս Հկարագեօղ։ Բայցի զրանցից, այնտեղ էին շամախեցի Թաթէոս բէկը և գանձակեցի աղայ Եղիալարը, որոնց երկումն էլ սաստիկ վիրաւորիլում էին, երբ իրանց ընկերները առանց տիտղոսի լոկ անուններով էին կանչում նրանց։ Նրանց հետ էր և վաղարշապատցի Յարութիւն առնուտէրը, որ սաստիկ նախապաշտամունք ունէր տէրտէրների, վարդապետների և առհասարակ եկեղեցականների վերաբերութեամբ, և միշտ ասում էր, երբ ինքը երազում զրանցից մէկին տեսնում է, այն օրը տանից չէ դուրս գալիս, որովհետև գիտէ, որ անպատճառ մի չար բանի պիտի հանդիպի։ Բայցի այդ ամեն կողմերից հաւաքված, փախըստական հայերից, նրանց մէջ կային երկու վրացի աղնուականներ, որոնց մէկին կոչում էին Սօսիկօ, իսկ միւսին Դաթիկօ, այս վերջնի մասին պատմվում էր, երբ նա գերի ընկաւ Պարսկաստանում, և երբ պարսիկները առաջար-

կեցին նրան, թէ ինչ կը պահանջէ, որ մահմիտականութիւնը ընդունէ, նա պահանջէց մի զոյդ պամիճներ (զանկապան) միայն։
Հիւրերը նստած էին տախտի վրա, մէկը ծալապատիկ, միւսը ընկողմանած, երրորդը բոլորովին պառկած, մի խօսքով, որպէս պահանջում էր իւրաքանչչւրի հանգստութիւնը, բայցինդուր իշխանը մինչեւ անդամ իր երկայն ոսները դրել էր գող Ծատուրի ուսերի վրա և այնպէս թեք էր ընկած, անդագար զգուշացնելով նրան, թէ չը մտածէ իր տրեխները գողանալ, որովհետև ինքը մեռ քնած չէ։ Եշուզը կանգնած նրանց հանդէպ, գեռ շարունակում էր իր պարկապղուկը ածել, թէն ոչ ոք նրա վրա ուշադրութիւն չէր դարձնում, բայցի տան կնիքներից, որ այդ մի ջոցին շըջապառել էին իրանց սիրելի երդչեն և հիանում էին նրա երաժշտական ճարտարութեամբ։ Պատաւ գեթեանը միայն տհամ էր իր մտքում անիծում էր իր սև բախտը, տակով, «էլի որ սաստանան բերեց այդ անզգամիներին»... Աղասին նստած էր տախտի մօտ, յատակի վրա։
— Ո՞րտեղ էր, զարձաւ գէպի նրանց բէկը մի առանձին հեղնական ժպիտով, որ ակամայ երեւաց նրա բաղմահոր գէմքի վրա։
— Ամեն տեղ, և ոչ մի տեղ, պատասխանեց զաղախեցի գող Ծատուրը։ Հիմայ տեսնում ես, այստեղ ենք։

— Ակսեցինք զիւղի ծայրից, ասաց երեանցի կաղ Օհանէսը, նկատելով, որ գող Ծատուրի պատասխանը այնքան բաւականացաւցիչ չէր: — Սկսեցինք զիւղի ծայրից, երգելով, խմելով գալիս էինք և ամեն տուն մտնում էինք, երբ զիւնու լիտրան դատարկվում էր, այնտեղ լցնում էինք, յետոյ դուրս գալով, կրկին շարունակում էինք մեր զրօսանքը:

— Մի բան մոռացար, կաղ սատանայ, նրա բացատրութիւնը ուղղեց Բայինդուր իշխանը, գլուխը վեր բարձրացնելով մութաքայի վրայից. — յետոյ մտանք սպարապետի տունը, նրան էլ քարշ տուեցինք մեզ հետ:

— Հա, յետոյ մտանք սպարապետի տունը նըրան էլ քարշ տուեցինք մեզ հետ, շարունակեց կաղ սատանան, աւելացնալով. — սպարապետը պառկած էր, մենք նրան քնած տեղից զօռով վեր կացրինք:

Վերջին խօսքերը վերաբերում էին Միկիթար սպարապետին, որը այդ միջոցին հետաքրքրութեամբ նայում էր Աղասու վրա:

— Ո՞վ է այդ երիտասարդը, հազիւ լսելի ծայնով հարցրեց նա Դաւիթ բէկից:

— Մեր կողմերիցն է, պատասխանեց նա նոյն պէս կամաց ծայնով:

— Ի՞նչ գործ ունի այստեղ:

— Ես առաւտեան կասեմ քեզ... պատասխա-

նեց բէկը, և այդ խորհրդաւոր խօսակցութեանը վերջ տալու համար, դարձաւ գէպի պառաւ Քեթեանը, պատուի ելով, որ ընթրիքի սեղանը պատրաստեն:

Հիւրերը պատի երկարութեամբ շարվեցան ավախի վրա, երբ Ծինան և Դարօն մօտեցան և սկսեցին տարածել նրանց առջև ընթրիքի սեղանի սփռոցը: Տախտը այնքան ընդարձակ էր, որ կարող էր տեղաւորել իր վրա թէ սեղանը և թէ բազմականներին: Կերակուրները տրվեցան պղնձէ հասարակ պնակների մէջ: Աղասուն ևս հրաւիրեցին սեղանակից լինել:

Եթէ կերակուրները կարելի է ընդունել որպէս մի ժողովրդի ճաշակի նրբութեան արդիւնք և որպէս նրա բարեկեցութեան արտայայտութիւն, Աղասին այդ մասին ևս մի նպաստաւոր կարծիք չը կազմեց Վրաստանի վրա: Կերակուրների մէջ չէր երևում ոչ պարսկական խոհանոցի կատարելազործութիւնը և ոչ հայկականի բազմատեսակութիւնն ու համեզութիւնը: Նրանք աւելի կոյր և անշնորը հետեւողութիւն էին կովկասեան կիսավայրենի լեռնաբնակների՝ Եղգիների ու չըրքէղների նահասեական խոհանոցին, քան թէ ազգային ինքնուրացն ճաշակի արդիւնքը բարութիւն էին: Տաք մոխրի մէջ խորոված սիմինդրի հացը նոյնպէս դեռ չէր դուրս եկել իր նախնական զբութիւնից: Յառաջաղիմութիւն

նկատվում էր միայն զինու գործածութեան ա-
նօթների մէջ, այսաեղ արհեստը բաւական զար-
գացած էր երևում: Գինու լիտրան, որ զրած էր
տօլուբաշիք (մատուռակի) մօտ, ներկայացնում
էր ֆերուզայի գունով ջնարակած մի ահազին ա-
ման, որ նախած էր սե, անկանոն զծերով: Նը-
րանից ածում էին՝ աշխաթով զարդարած մոծ եղ-
ջիւրների մէջ և այնպէս խմում էին: Թիֆլիսի
հայ ոսկերիչները թափել էին իրանց արժեստի
բոլոր ճարտարութիւնը այդ գեղեցիկ գաւաթների
վրա, որոնցից երկուսը բաւական էին մի մար-
դու հարփեցնելու համար: Բայց նրանք երկար
պարավում էին մի ձեռքից մինս ձեռք, թէ
հիւրերը դեռ սեղան նստելուց առաջ մի փառա-
ւոր նախատօնանք կատարած էին կախէթի աղ-
նիւ ընդպելի վերաբերութեամբ:

Քէկը սկզբից խիստ տխուր էր և լուս, բայց
նրա մտախոն զէմքը հետզհետէ պայծառանալ
սկսեց, որքան եղջիւրները շաբունակում էին կա-
տարել իրանց հանգիստաւոր չքանը: Միթիթար
սպարապետը նոյնպէս լուռ էր. մնացած հիւրերի
ուրախութիւնը արտայայտվում էր խառնածայն
աղաղակներով, վայրենի գոռում-գոչումներով և
երբեմն հատուկուր երգերով: Բոլորը եռանդով
խմում էին: Տօլուբաշին սպառնալիքներ էր կար-
գում այն սեղանակցի գէմ, որ կը համարձակվէր
մինչև վերջին կաթիւը չը դատարկել եղջիւրը:

Զեղծումներ գործելու դէպքում եղջիւրի մէջ
մնացած հեղուկը թափում էին ծոյլ, անշնորք
խմողի վրա: Աղասուն վիճակիցաւ մի քանի
անգամ մկրտիւլ կախէթի կարմիր գինով, մին-
չև նա, այլ ևս չը կարողանալով դիմանալ, ան-
նկատելի կերպով դուրս դնաց, մտաւ ախոռա-
տունը և այնտեղ պառկից իր ձիռւ մօտ:

Սենեակի մէջ աղմուկը, շփոթութիւնը հետզ-
հետէ աւելի խորվեալ կերպարանք էր ստանում:
Հարսները, աղջիկները, պուփները կորցրած, սե-
ղանի շուշջը պտղավում էին, կատարելով հիւ-
րերի անդադար հրամանները:

— Իմ պապը ամին անգամ, մի ամբողջ խոր-
ված գառն էր ուստում, դու հիմայ ինձ այդ ծը-
տելով պիտի կշացնես, ջաղուբաղ պառաւ, ա-
ստում էր շուշեցի Զաքարիայ իշխանը, դառնալով
զէպի քեթեանը, և խորված փասխանի ամբողջ
կէսը իր բերանը դնելով, կարծես, ցոյց աւալու
համար, թէ ինքն էլ կարող է հանգուցեալ պապի
գովելի օրինակին հետեւել:

— Քո պապը մի ամբողջ խորված զառն էր
ուստում, այդ ծշմարիտ է, պատասխանում էր նը-
րան բայինդուր իշխանը ծիծագելով: — բայց զի-
ւան որ նա իր թրի մի զարկով ահազին եղան
զլուկն էր կարում, իսկ գու, մոծ պապի պատիկ
զլուկն էր կարում, իսկ գու, մոծ պապի պատիկ
զաւակ, մի փոքրիկ հորթի վիզն անդամ կտրելու
չնորք չունես:

—Ես իմ թուրը կարող եմ և գոմէշի վզի վրա փորձել, պատասխանում էր վիրաւորված Զաքարիան, ձեռքը դէպի իր սուրբ տանելով:—Դաւիթ, հրամացեցէք ձեր ախոռատնից դուքս բերեն մի գոմէշ, ես հէնց այս բոպէիս ցոչց կը տամ իմ հունարը, թող պարսից շահնշահի քափման-դիմքը» տեսնէ, որ մեծ պատի պատիկ զաւակը այնքան պատիկ է, որքսն նա կարծում է:

Բէկը նկատելով, որ այդ վէճը կարող էր շատ հեռու տանել նրանց, երկուսին էլ հանդստացրեց, ասելով.

—Քէֆի ժամանակ սրի փորձ չեն անում, այդ կարող ենք թողնել առաւօտեամն, եթէ կամենում էք անպատճառ հրապարակի վրա ձեր հունարը ցոյց տալ:

Ցեսոյ նա դարձաւ դէպի պառաւ քեթեանը, պատուիրելով, որ մի երկու գառը մորթել տայ Զաքարիայ իշխանի ախորժակը գոհացնելու համար:

Դրսից ծառաների, սպասաւորների ուրախութեան աղաղակները բոլորովին խլացնում էին հիւրերի խօսակցութիւնը: Նրանց սեղանը տւելի ճոխ էր և գինին աւելի տուատ: Նրանք շուտով իրանց համար զուռնայ ու սազանդարներ բերել տուեցին, սկսեցին ածել, երգել և պար գալ: Ծառաների այդ յանդուգն մրցութիւնը, կարծես, զրգուեց բայինդուր իշխանի նախանձը,

որը սեղանից վճիր բարձրացաւ, ձայն տալով.

—Պար, պար, բայինդուր իշխանը պար է ու զում:

Պարսից շահնշահի «բաթման-դիմք» որոտացող ձայնը բաւական էր տան կնիկների ուշադրութիւնը դարձնել զուարճութեան այդ եղանակի վրա, որ հէնց իբանց ցանկութիւնն էր, որի մասին մի թեթև ակնարկութեան էին սպառում: Թիսան ժպտելով մօտեցաւ, վեր առեց պատից կախ տուած դայիրան, իսկ Դարօն ցած բերեց նոյն տեղից քարշ ընկած խեցեզէն թըմբուկները, մինը մեծ, միւսը փոքր, որոնք կապած էին միմեանց սիրիմներով (*): Նա տուեց թմբուկները մի փոքրիկ աղջկայ ձեռքը, որը զրկելով, կանգնեց նրա հանդէպ: Աշուղն էլ իր պարկապղուկը սարքելով, կանգնեց նրանց մօտ: Երաժշտական խումբը կաղմիցցաւ, մնում էին պարողները: Այդ միջոցին Սօվիօն, Փէփէլօն և Նինօն շարվեցան միմեանց մօտ, և իւրաքանչին մնամբերութեամբ սպասում էր իր հերթին, որ սկսէ պարը: Մի անմեղ ուրախութիւնն, իր բոլոր ողջախոհական պարզութեամբ փայլում էր այդ թիթեռնիկի պէս անհոգ, մանկասակ աղջկների դէմքի վրա: Նրանք գեռհիւրերի զալուց շատ առաջ մի առանձին խընամք էին տարել իրանց զարդարանքի վրա և ա-

*) Ա ի ր ի մ նշանակում է կաշեայ բարակ փոկ:

մեն մէկը հագել էր իր պահեամից ինչ որ նոր էր, ինչ որ լաւ էր: Այժմ կազմ և պատրաստ, մնում էր նրանց թռչկոտել, թռչկոտել թէկուզ մինչև լոյս:

— Առաջ դու սկսիր, զաւակս, ասաց Բային-դուր իշխանը, բռնելով ամենակրտսեր քրոջ, Նինօի, ձեռքից և կանգնեցնելով նրան մէջտեղում:

Նինօն շարժվեցաւ: Յինան իր դալար մատներով սկսեց ածել փոքրիկ բոժոժներով զարդարած զայիրան, իսկ Գարօն փայտեայ բարակ ձօղերով սկսեց արկտըկացնել խեցեղէն թմբուկները: Աշուղն էլ զու էլ տախս իր պարկապըզուկին: Բոլոր հիւրերը երաժշտութեան հզանակի համեմատ սկսեցին ծափ տալ:

Նինօն պարում էր: Նրա բոլոր անդամները շարժողութեան մէջ էին, և կարծես, մինը միւսի հետ մրցութիւն էին անում, թէ որը աւելի արագ, թէ որը աւելի սքանչելի կերպով կարսդէ պառյաներ գործել: Յոզնած Նինօից յետոյ ըսկսեց Փէփէլօն և ապա Սօփիօն: Երկու միւս քոյրերի պարը ոչինչով չէր զանսպանվում առաջինից, միայն զրամնը աւելի ծափահարութիւններ ստացան զլխաւորապէս այն պատճառով, որ իրանց պտոյաների և թուչքների մէջ ցոյց տռեցին զարմանալի ճորտպկութիւններ:

Երբ ընդհանուր զուարձութիւնը աւելի տա-

քացաւ, պարի մէջ խառնվեցան և հիւրերից մի քանիսը: Նախ սկսեցին Սոսիկօն և Ղաթիկօն, երկու վրացի աղնուականները միասին: Դա խակապէս պար չէր. նրա մէջ չը կար ոչ վայելչութիւն և ոչ կիրթ ճաշակ.—Պա լեզկինների զրդոված ջղերի արդիւնաբերութիւնն էր, երբ լեռնակամն մարզը իր ուրախութեան, իր հոգու ցնցումները արտայայտում է վայրենի, անկանոն շարժումներով և կատաղի թռիչքներով: Այդ իսկ պատճառովայդ պարը կոչվում էր Եղկու պար, տղամարդերի մէջ նա դեռ պահպանել էր իր վայրենի բնաւորութիւնը, իսկ կնիկների մէջ բաւական մնդմացած էր:

Բարեկօննեան խառնակութիւնը բոլորովին ընդհանուր զարձաւ, մանաւանգ այն ժամանակ, երբ սպասաւորների խումբը զբացի սեննակից իրանց զուանայալ ներս մտան: Ծառաները խառնվեցան իրանց տէրերի հետ և սկսեցին միասին պարել: Այդ միջոցին Յինան և Գարօն, որ մինչև այժմ ածում էին զարիալի ու թմբուկի վրա, իրանց երաժշտական զործիքները յանձնեցին Սօփիօնին և Փէփէլօնին, իրանք էլ միացան պարողների հետ: Զուռնայի ձայնը, զարիալի ու թմբուկների արված կորպուսը, ծափահարութեան որոտը, արբած բազմութեան խառնաձայն աղաղակը, բաղմաթիւ առների արոփիւնը, — բոլորը միախառնվելով, ներկայացնում էին մի վայրենի,

խառնաշփոթ քաօս։ Այսաց թագաւորի աւագանին զուարձանում էր...

Այդ խառնակութեան ժամանակ ոչ ոք չէր կարողացել նկատել, որ մի գնդաճն մարդ ներս էր մտել, և միանալով ծառաների հետ, եռանդով ծափ էր տալիս և բոլոր ուժով աղաղակում էր։ Բայց նա չը կարողացաւ երկար անյայտ մնալ Բայինդուր իշխանի արծուի տեսութիւնից, որը մօտենալով նրան, մի սաստիկ բամբաչայ (*) խփեց զլսին, ասելով.

—Բարձրվ, Սաքուլ, բարով! —Գետինը մտնես, երբ եկար:

Իշխանի ծանր բամբաչայից շշմած, շշկոած Սաքուլը չը կարողացաւ իսկոյն պատասխանել որովհետեւ նրա ահագին մօրթէ գտակը իշխանի ձեռքի սաստիկ զարկից, իր սովորական տեղը թողնելով, այժմ իջել, հասել էր մինչև նրա բերանը, բոլորովին ծածկելով թէ աչքերը և թէ չէկ մօրուքը։ Նա փոքր ինչ ուշքի գալուվ, ըշտապից գտակը վեր քաշել, որ տեսնէ, թէ ով էր իր հետ այսպիսի կոպիտ հանաք անողը, որ նրա համեմատ պատասխանէ, —այդ միջոցին իշխանի երկրորդ բամբաչան իջաւ նրա զլսի վրա և փոքրիկ դլուխը բոլորովին թաղվեցաւ

*) Բամբաչայ ժամանակական լեզուով նըշանակում է համակերով զարկել,

ահագին գտակի մէջ, որ այժմ հասել էր մինչև Սաքուլի ուսեբը։

—Զես լսում, քեզ եմ ասում, պառաւ աղուէս, երբ եկար, կրկնեց իշխանը իր հարցմոնքը։

—Տօ, հէր օրհնած, մի թող տուր աչքերս բաց անեմ, երեսիդ մտիկ տամ, բարսվ, հազար բարով ասեմ, քէփդ հարցնեմ, յետոյ ի հարկէ կասեմ, թէ երբ եկայ։ — Ի՞նչ ես չար հրեշտակի նման հողիս առնում, պատասխանեց Սաքուլը գտակը ուղղելով, որը այժմ այն աստիճան լայնացել էր, որ էլ իր սովորական տեղում չէր կանգնում։

—Եդ անիծված գտակը ինչու այդպէս զժվեցաւ... զժգոհութեամբ քրթմնջում էր նա, անդադար ուղղելով գտակը, և երբ տեսաւ հնար չը կայ, ջիբից հանեց իր քնթի ընդարձակ աղլուխը (որը մի և նոյն ժամանակ երես սրբիչ էր) զրեց զլսի վրա, որ գտակի ծաւալը փոքրանայ։ Իսկ այդ բաղդը երկար չը տեսեց։ Իշխանի խօսակցութիւնը Սաքուլի հետ նրա վրա դարձրեն բոլոր հիւրերի ուշազրութիւնը, որոնք թողնելով իրանց երգն ու պարը, հաւաքվեցան նրա շուրջը, և իւրաքանչիւրը չը ինսայեց հետեւել Բայինդուրը, իշխանի բարի օրինակին, մի-մի բամբաջուր իշխանի բարի օրինակին, մի-մի բամբաչայ նրա զլսին տալով, սիրելութեամբ ողջուշայ նրա զլսին տալով, սիրելութեամբ ողջունակը նրան։ Այժմ գտակը այն աստիճան լայնանել նրան։ Այժմ գտակը այն աստիճան լայնացաւ, որ ոչ միայն քնթի աղլուխը, այլ եթէ մի

փոքրիկ բարձ ես իր գլխի վրա դնելու լինէր,
գտակը գարծեալ մեծ կը գար:

—Առում են, Սաքուլ, ինչու չես մհծանում,
խօսում էր նա ինքն իրան, ուշազրութեամբ
զննելով գտակը՝ մի գուցէ պատուված լինէր.—
Ել որտեղից մեծանայ Սաքուլը ամեն անդամ,
երբ այդպիսի բամբաջաներ եմ ուսում, բոյը
մի թիվ կարճանում է, կարծես, գետինն է մըտ-
նում..

—Այսպէս մտնի, որ էլ գուրս չը գայ, որ քո
սե երեսը մարդիկ չը տեսնեն, գարշելի, վրա
բերեց Բայինդուր իշխանը, և սիրով բոնելով
նրա ձեռքից, նստեցրեց տախտի վրա:

Սաքուլը այժմ իր չարագուշակ գտակը դրեց
տակը ու այսպէս նստեց, ոչ թէ փափկութեան
համար, այլ աւելի այն նախազդուշութեամբ, չիցէ
թէ նրա հետ մի նոր վասնդ ես պատահի: Նա
այնքան երկիւղ չունէր իր գլխի մասին, որ սո-
վորած էր բամբաջաների, որքան իր գտակի մա-
սին, եթէ զուարձամէր հիւրերը իրանց ձեռքերի
ծանրութիւնը միւս անդամ կը փորձէին նրա
վրա:

Բայց Սաքուլի խորսամանկութիւնը շարժեց
Բայինդուր իշխանի ծիծաղը, որը դառնալով
գէպի հիւրերը, ասաց.

—Այժմ ես հաւատում եմ, բոլորովին հաւա-

տում եմ այն առակին, որ պատմում են այդ
անպիտանի մասին:

Սաքուլի մասին առակի ձեւ ստացած անցքի
պատմութիւնը կուլոր հիւրերին յայտնի լինելով,
իշխանը հարկաւոր չը համարեց նորից կրկնել
բայց որովհետեւ մեր ընթերցողին անձանօթ է
այդ անցքը, մենք կը պատմնք, գլխա-
ւորապէս այն նպատակով, որ այդ փոքրիկ
պատմութեան մէջ նկարվում են Սաքուլի բնա-
ւորութեան յատկանիշներից մի քանի խոշոր
գծեր:

Ո՞ի անդամ Սաքուլը գործով պիտի գնար
վրաց թագաւորի տունը. ամպամած, անձրեւային
օր էր. փողոցներում թանձր ցեխ էր կանգնած.
տեղ-տեղ ջուրը բոլորովին լճացել էր. Որպէս
զի իր, առանց զրան ևս մաշված, արեխները չը
փշանան, Սաքուլը աւելի բարւոք համարեց
տրեխները հանել, ձեռքում բոնել և այնպէս
մերկ ու բորբիկ ոտներով գնալ: Այդ աւելի
յարմար է, մտածեց Սաքուլը, որովհետեւ այս-
պիսով տրեխներս մաքուր կը մնան, իսկ երբ
կը հասնեմ թագաւորի տանը, այն ժամանակ
ոտներիս ցեխը կը լուանամ, կրկնն արեխներս
կը հագնեմ և այնպէս ներս կը մտնեմ: Այդ
կարգագրութիւնը վատ չէր լինի, եթէ ճանապար-
հին մի դժբախտութիւն չը պատահէր: Երբ նա
շտապով վազում էր, յանկարծ մի մեխի կատը

Խրվեցաւ նրա մերկ ոռքի մէջ։ Յաւը այնքան սաստիկ եղաւ, որ Սաքուլին ուշաթափ տուն տարան։ Երբ մեխի կտորը դուրս հանեցին, նա ուշի եկաւ, և նայելով վէրքից հառղ արիմին, ինքն իրան միսիթարեց այդ խօսքերով։ «Հաւ էր, որ արեխներս հագիս չէին, թէ չէ, այդ անիծված մեխը կարող էր և տրեխս ծակել»...

Այդ նշանաւոր ժլատի համար ոռքի ծակիվը փոյթ չէր, միայն թէ արեխները անվասա մը նային։

Սաքուլը աղքով հայ էր, բնիկ թիֆլսեցի։ Նա ոչ տուն ունէր, ոչ կին ունէր, ոչ զաւակներ և ոչ հեռաւոր կամ մօտաւոր տոհմայիններ։ Վրաստանում պարապվում էր վաշխառութեամբ։ Վրաց աղնուականներից ոչ մէկը չը կար, որ Սաքուլին պարտական չը լինէր։ Ամեն մարդ թքում էր նրան, մրում էր նրան, ծեծում էր նրան, բայց դեռ ոչ ոք մինչև այն օր այնքան քաջութիւն չէր ունեցել, որ կարողանար Սաքուլի անողորմ տօկոսները չը վճարել։ «Սաքուլը քարից փող կը դուրս բերէ»—այդ էր ամենի կարծիքը նրա մասին։ Վրաց աղնուականների ընդարձակ կալուածների արդիւնաբերութիւնը հազիւ բաւականանում էր լրացնել յաքուլի տօկոսները։

Նա, ինչպէս վերեռում յիշեցինք, մի գնդաձե մարդ էր, տարիքը անցած յիսունից։ Նրա կար-

կատաններով պատած արխալուխը, կաբան, արը-րեխները, գոտիլը, իրանց ժամանակագրութեամբ, գուցէ քատորդ դարով մէայն պակաս լինէին նրա տարիքի ամբողջ թից, —և իր հագուստի այդ պատկառելի հնութիւնը՝ ինքը Սաքուլը միշտ մնձ պարծանքով յիշում էր։ Եթէ բոլորովին սիսալ ևս համարվէր ժողովրդական նախապաշտրմոնքը թէ կարմիր-շիկամազ մարդիկը աղամորդու դարմ չեն լինում, այլ գետնի տակիցն են դուրս գալիս, —բայց Սաքուլի վերաբերութեամբ այդ կարծիքը պէտք էր բոլորովին ուզիդ համարել մանաւանդ երր ի նկատի առնենք, որ նրա երեսի կաշին սպունգի պէս ծակծկած ու ծաղկատար էր։ Նրա նման մի չարագործ ոչ միայն դժուար էր գտնել աղամորդիների մէջ, այլ խաւարի ծնունդների մէջ անգամ հազիւ թէ կը պատահէր մի այնպիսի գարշելի արարած։

Վերջնին ժամանակներում Սաքուլը աւելի ընդարձակեց իր գործունէութիւնը և բացի վաշխառութիւնից պարապվում էր գերեվաճառութեամբ։ Լեզկիների և կովկասեան այլ լեռնաբնակների անդադար յարձակումները Վրաստանի վրաց արին նրա առջև առևտուրի ու վաստակի մի նոր ասպարէզ։ Լեռնաբնակները գերիներ էին տանում Վրաստանից, ի հարկէ, ընտրելով միշտ նշանաւոր ընտանիքներից։ Սաքուլը յանձն էր առնում վերադարձել գերիներին,

սկզբից պայման կապելով նրանց ազգականների հետ, թէ կը ստանայ այսքան գումար, Յետոյ նա գնում էր Գաղլատան, և գնելով յետ էր բերում գերիներին, ստանում էր խոստացած գումարը: Նոյն առևտուրը նա կատարում էր և գերգած էշպիների վերաբերութեամբ, եթէ պատահմամբ ընկնում էին վրացիների ձեռքը: Լեռնաբնակների բոլոր ցեղապեսների հետ ծանօթ էր Սաքուլը, և ամեն անգամ նրանց տունը գնալիս, նրանց կանանց համար ընծաներ էր տանում, և ամեն տեղ սիրալի ընդունելութիւն էր գտնում: Գերեվարմերը, Սաքուլի գալուստը լսելով, խկոյն հաւաքում էին նրա շուրջը, սկսվում էր սակարգութիւնը: Տարակոյս չը կայ, սակարգութիւնը վերջանում էր միշտ յօդուտ խորամանկ գերեվարմանի, որի համար մեծ աշխատութիւն պէտք չէր միամիտ լեռնցուն խարելու համար: Այսուամենայնիւ, Սաքուլը այնքան ընդարձակ վարկ էր ստացել Գաղլատանում և լեռնաբնակները այն աստիճան հաւատարմութիւն ունեին դէպի նրա ազնւութիւնը, որ շատ անգամ գերիներին յանձնում էին նրան առանց փող ստանալու, համոզված լինելով, որ Սաքուլը իր խօսքը յարգող մարդ է, կը տանէ և փողերը յետոյ էլ կուղարկէ: Աւ իրաւ, Սաքուլը այդ գէպքում յարգում էր իր ստած խօսքը, և երբէք չէր պատահէլ, որ նա որ և իցէ զնզում գործած լինէր

իր յարաբերութիւնների մէջ լեռնաբնակների վերաբերութեամբ: «Շատ ուտելլը քիչ ուտելուց էլ կը զրկէ մարդուն», անդադար կրկնում էր նա թուրքի առածը: — Եթէ մի անգամ բերեմ ու նրանց փողերը չը վերադարձնեմ, այսուհետեւ ևս մինչև մահ պիտի զրկեմ ինձ իմ փառաւոր վաստակից: Այդ գատողութիւնից պարզ յայնին էր, որ Սաքուլը ուղղութեան, հուատարմութեան և ձմարտի վրա չէր նսցում նրանց բարոյուկան կողմից, այլ բոլորովին գործնական կէտից էր ընդունում պարտաճանաչութեան պահանջը:

Այս այդ մարդին էր, որին այնպէս անքաղաքակարի կերպով ընդունեց Բայիննդուր իշխանը, որ նոր էր վերադարձն Գաղլատանից, բերելով իր հետ գերիների մի ամբողջ քարաւան, և այժմ ստան, անվրդով կերպով նստած էր իր գտակի վրա, և բարեսիրած ժամփով ընդունում էր բէկի արքած հիւրերի գառն կատակները: Յայց նրա պատմութիւնը թէ իր ճանապարհորդութեան և թէ իր վերադարձի մասին մասց անկատար, որովհետեւ բէկի յոզնած հիւրերը փոքր առ փոքր սկսեցին հեռանալ, աղմկալի սենեակը բոլորովին դատարկվեցաւ և ամեն տեղ ակրեց խորին լուսութիւն:

Այսուհետեւ բէկը երկար, միայնակ նստած, Սաքուլի հետ խօսում էին: Կոչ գործ ունէր

Վրաստանի սուաջին պետական մարդը այդ գերեվաճառի հետ:

Ե.

Այժմ պատմենք համառօտ կերպով, թէ Դաւիթ բէկը Վրաստան գալով, նախ որպէս սկսեց իր ասպարէզը:

Ընթերցողը յիշում է այն սոսկալի, փոթորկային գիշերը, երբ նա Ֆաթալի-խանի բանակից ճանապարհ ընկաւ, յիշում է և այն, որ նա ունէր իր հետ ծերունի ներքինապետից յանձնարարական նամակ հայաղպի Օրբէլեան իշխանի վրա, որը պէտք է պատանի Դաւիթի հոգաբարձուն և խնամակալը լինէր նրա պանդխտութեան մէջ: Բայց ծերունի ներքինապետի բոլոր կարգադրութիւնները պատանու ապահովութեան մասին հակառակ ընթացք ստացան, որը նախատեսել, ի հարկէ, նա սկզբից չէր կարող:

Պատանին գալով Մըցիւէթ, գտաւ Օրբէլեան իշխանին մի շաբաթ առաջ մեռած: Նրա բարեկամները դեռ սուզի մէջ էին: Թէև պատանին ներկայացրեց նրանց ներքինապետի նամակը, բայց հանգուցեալի տոհմայիններից ոչ ոք կարողացաւ ճանաչել, թէ ով էր նամակի հեղինակը, կամ որքան նշանակութիւն պէտք էր տալ նրա գրածներին: Նկատելով այդ սառն ընդունելութիւնը, պատանին ինքն անյարմար համարեց մի անախորժ բեռն լինել օտար ըն-

X.
տանիքի վրա, որ առանց դրան ևս անբախտացած էր: Սիրտը լի եռանդով, քսակը լի ոսկիներով, որ ստացել էր նա Սիրիից, վճռեց իր աշխատանքով ապրել, առանց մի ուրիշն ծանրութիւն պատճառելու:

Նա յետ դարձեց իր հետ եկած մարդիկներին, զրեց ներքինապետին, թէև իշխանը, որի վրա յոյս ունէր նա, մեռած է, բայց ինքը այնքան ուժ է զգում իր մէջ, որ առանց խնամակալի ևս կարող է այդ երկրում մի պարապմունք գտնել և անկախ ու անկարօտ ապրել: Վերջայնելով իր նամակը անհուն չնորհակալութիւններով ծերունու բարերարութիւնների մասին, պատանին աղաչում էր նրան, որ այլ ևս իր համար հոգ չը տանէ, որովհետեւ ինքը կարող է կնանքի մէջ իրան ճանապարհ բաց անել: Իսկ պատանու անձնավստահութիւնը չը պառկվեցաւ այն փայլուն յոյսերով, որ երևակայում էր նա:

Ի՞նչ կարող էր անել մի անփորձ պատանի օտար, անձանօթ երկրում, ուր սարկութիւնը ոչնչացրել էր ամեն արդիւնաբեր վաստակ, ուր աշխատանքը ոչինչ գին չունէր, չուր ժողովրդի մեծ մասը ձրիաբար էր գործում մի քանի ծոյլ, չւայլ, անկարգ աղնուականների համար միայն: Իսկ ինքը պատանին ոչ մի գործի համար պատրաստված չէր. արհեստը, որ արհեստաւորների

բացակայութեան պատճառով կարող էր այդ երկրում փոքր և շատէ գործադրութիւնն գտնել, — արհեստ չը գիտէր նա: Գիւղում մնված, զիւղում մեծացած, կատարեալ գիւղացի էր նա, փոքր ի շատէ ծանօթ դիւղական տնտեսութիւնն: Խոկմի աշխատութիւնն, որ բոլորովին անարգված էր և որի համար հաղարաւոր ձրի բանող ձեռքեր կային այդ երկրում, — զա էր գիւղական տնտեսութիւնը:

Ակզեռում նա սկսեց ծախսել իր հետ բերած ուկիները, որ ընծայել էր նրան Սիւրին. Կը փողերը սպառվեցան, սկսեց վաճառել իր հազուսաները: Միակ բանը, որ նա ամենայն սրբութեամբ պահեց իր մօտ, — զա էր ծերունի ներքինապետի ընծայած թուրը, որը վճռեց չը կորցնել, եթէ քաղցածութիւնից մեռնելու ևս լինի:

Բայց այդ տեսակ կեանքը երկար շարունակվել չէր կարող, պէտք էր մի որ և իցէ գործ գտնել: Ակզեռում նա իրան այնքան չէր խոնարհեցնում, որ ստոր աշխատութիւններից սկսէ, յետոյ այդ վիճակի հետ ևս հաշտովեցաւ, դարձեալ ոչ ոք նրան գործ չէր տալիս: Գժրախտութիւնը օրըստօրէ աւելի և աւելի զգալի էր դառնում: Հայրառութիւնը չէր ներում նրան, որ իր թշուառութեան մասին ծերունի ներքինապետին կամ Սիւրին տեղեկութիւն տայ: Բայց ե-

թէ շատ էլ ցանկանար, ինչ միջոցով կարող էր զբել նրանց: Հազորդակցութիւններ բնաւ չը կային, պէտք էր առանձին սուրհանդակ վարձել, բայց ինչ գումարով, քանի որ ինքը բոլորովին աղքատ էր, և զի յանձն կառնէր փողի համար Վրաստանի սահմաններից գուրա գնալ, մի այնպիսի ժամանակ, երբ ճանապարհները լիքն էին աւազակներավ, երբ մի սնիսի համար մարդու զլուս էին կտրում:

Նա ապրում էր մի հայ մանրավաճառի տանը, որը իր պարզամիտ հիւրին ըստ կարգին կողապետելուց յետոյ, նրա քսակը պարպելուց և նրա հագուստները մերկացնելուց յետոյ, երբ տեսաւ, որ այլ ևս շահվելու ոչինչ չէ մնացել, իր հիւրասէր տան դռները ցոյց տուեց նրան, ասելով:

— Որդի, ձեզ համար մի ուրիշ տեղ ճարեք, տեսնում էք, ևս մեծ ընտանիքի տէր եմ, իմ զաւակները հազիւ եմ կարողանում պահել:

Նա առանց մի խօսք ասելու հեռացաւ: Խորին յուսահասութեան մէջ թաղեց աւանը և վիմեց զէպի մերձակայ լեռը: Հազին սանամաններ չունէր: Իր պանդիտութեան օրերում, անծանօթ, օտար աշխարհում հանդիպեց նա միակ հային, որից յոյս ունէր փոքր և շատէ օժանդակութիւն դանել, խոկ նա կողոպտեց նրան, յետոյ արտաքսեց: Այժմ ամայի անապատների

միայնակութեան մէջ աշխատում էր թագանել իր անբախտութիւնը: Ամուռնային առաւօտը հիացնելու չափ սքանչելի էր, բայց նա բնութեան մէջ ոչինչ գեղեցկութիւն չէր նկատում: Թըռչունները անհոգ չըկըզկում էին, ծաղիկները ուրախ ժպտում էին, համբուրզելով արեգակի առաջին ճառագայթների հետ, բայց այդ բոլորը աւելի բարկացնում էին նրան, աւելի լցնում էին նրա սիրող մի անսահման տիրութեամբ, թէ Բիշու Աստուծոյ բոլոր արարածները կարող էին ուրախ, բախտաւոր լինել, իսկ ինքը ոչ:

Ամբողջ օրը թափառեց նա սորելի վրա, դաշտերում, անտառներում, լինքն էլ չը գիտէր, թէ ինչու համար: Ամեն անդամ մի մարդ տեսնելու, փախստականի նման աշխատում էր չը մօտենալ նրան: Այսպէս անցկացրեց նա, մինչև երեկոյացաւ, մինչև խաւարը փոքր առ փոքր սկսեց պատել աշխարհը: Այժմ մտածում էր վերադառնալ գիւղը. բայց ում մօտ գնալ, որի դուռը բաղիւել: Միակ ծանօթ մարդը, իր արիւնակիցը, չը պահեց նրան, այն մարդը, որի մէջ ցաւակցութիւն էր որոնում, որին պատմել էր իր բոլոր դժբաղդ անցեալը: Այժմ ումը դիմել: Արացու արհամարհանքը, ատելութիւնը, դառն զգուանքը դէպի ամեն մի հայ նետի պէս ծակուամ էր նրա սիրող. վրացուց օգնութիւն խնդրել մահուան չափ ծանր էր նրան: Երկու օր նա ոչինչ

չէր կիրել. այժմ ամեն հոգսերից աւել տանջում էր նրան քաղցը: Մարմնի մէջ զգում էր սաստիկ թուլութիւն: ուժերը հետզհետէ նուազում էին: Մտածեց փոքր ինչ հանգստանալ:

Գիշերային խաւարը բոլորովին թանձրացել էր, Նա դուրս եկաւ նեղ շափողից, որ տանում էր՝ ինքն էլ չը գիտէր՝ թէ ուր, և առանձնացաւ մի ձորակի մէջ: Այսակ լւաւ էր, այստեղ նրան ոչ ոք չէր տեսնի: Նա իր յոգնած մարմինը ցած թողեց, պառկեց խոտերի վրա: Մի քանի բոպէ դիակի նման անշարժ մնաց, յետոյ աչքերը բաց արեց, որ տեսնէ, թէ որտեղ է գտնվում: Ոչինչ հասկանալ չը կարողացաւ: Ամբողջ օրը թափառել էր նա, իսկ այժմ որտեղ էր բերել նրան չար բախտը, — դժուար էր զիտենալ: Նա նայեց դէպի աստղալից երկինքը, Այս դիմեր ինչ որ հանգիստ չէին, անդադար շարժվում էին և իրանց տեղում չէին կանգնում: Ի՞նչ էր պատահել: Աչքերը կրկին փակեց և մի քանի բոպէ մնաց չփոխութեան մէջ: Յետոյ դարձեալ բաց արեց, տեսաւ, ամբողջ երկինքը պտղավում էր իր շուրջը. ամեն ինչ տակն ու վրա էր լինում. աստղերը նոյնպէս կամ դէպի աջ էին վագում, կամ դէպի ձախ. զարմանալին այն էր, որ ինքն էլ նրանց հետ պտղավում էր: Ի՞նչու էր այսպէս լինում: Ծիթէ աշխարհի վերջը հասել էր: Նա աչքերը կրկին փակեց, որ

ոչինչ չը տեսնէ: Այժմ նրան տիրեց երկիւղի նման մի բան: Սնահաւատութիւնը, խառնված երկիւղի հետ, սկսեց սաստիկ խռովել նրա երեւակայութիւնը: Մտածում էր, թէ մահուան տագնապի մէջ է զանվում ինքը. թէ ահա չուտով կը յայնովր հոգէառ հրեշտակը և ամնն ինչ կը վերջանայ.... Բայց ինչու էր ուշամում նա. ինքը ուրախութեամբ, մեծ որտախութեամբ կը ցանկանար հանդիպել նրան: Կեանքը նըանից աւելի անտանելի չէր կարող լինել, քան թէ որ էր: Այսպիսի հոգեկան տանջանքների մէջ երկար չարչարվում էր նա, մինչև փոքր ինչ հանգատացաւ: Բայց աչքերը բաց անել չէր համարձակվում: Աշխատում էր քնել, բայց քո՞նն էլ մօտ չէր դալիս: Ոչ մահը, ոչ բունը, այդ ինչ պատիժ էր: Արդեօք սովածութեան պատճառով քնել չէր կարսղանում, թէ սրտի յուզմունքը խռովութեան մէջ էր ձգել նրան:

Նա աչքերը բաց արեց միւս օրը, տեսաւ, որ արեգակը կանգնել էր կէսօրվայ տեղը. սար, դաշտ և ձոր լցված էր պայծառ, անսահման լուսաւորութեամբ: Գիշերվայ խաւարի հետ անցել էին և նրա մե մտքեղը. այժմ նրա սրտում տիրում էր խորին, անդիտակցական անդորրութիւն: Պատճառը ինքն էլ չը գիտէր: Արդեօք իր շուրջը զարթած նոր կեանքը, թէ Աստուծոյ գեղեցիկ աշխարհի հրապուրանքը կրկն թափեցին նրա

^{cs} հոգում կեանքի քաղցրութիւնը,—այդ անկարող էր նա բացատրել, միայն նրա գունաթափ գէմփի վրա փայլեց մի անձնավատահ ժայլա և նրա նոյնպէս գունասկած շրթունքից դուրս թռան ձետեսեալ խօսքերը. «Ես դեռ չի պիտի մեռնեմ... ինձ հարկաւոր է դեռ երկար ապրել... ես ուխտ ուխտեցի իմ ծնողների գերեզմանի վրա... ես երդումով նոյն ուխտը կրկնեցի Սիւրիի և ծերունի ներքինապետի մօտ... ես պէտք է կատարեմ իմ խստմունքը»....

Բայց պէտք էր մի բանով յագեցնել իր քաղցը, որ կարելի լինէր շարունակել սպառվող կեանքը: Նա մօտեցաւ իրանից ոչ այնքան հեռու հոսող առուակին, սկսեց քաղել նրա ափերից մի քանի տեսակ ծանօթ բոյսեր, որոնց հում-հում ուտել անկարելի էր, միայն կերակուրների մէջ և աղցանի համար էին գործածվում: Ակսեց ուտել այդ բոյսերը, բայց նրանք փոխանակ յագեցնելու նրա քաղցը պատճառեցին ստամոքսի մէջ սաստիկ ցաւ: Նա տհաճութեամբ դէն դցեց քաղած բոյսերը և մի քանի բոպէ մնաց յուսահատ շփոթութեան մէջ, ամենեին չը նկատելով, որ այդ միջոցին խօսակցելով, ծիծաղելով, երգելով անցնում էին նրա մօտից մի խումբ կնիկներ: Նրանք վերադառնում էին ոչխարների հանգրուանից, և կաթի կծերը շալակած, դիմում էին դէպի գիւղը:

— Ամիկ առւէք, մտիկ առւէք, ինչ է ուսում
այդ մարդը, ասաց նրանցից մէկը իր ընկերու-
հիներին, ցոյց տալով պատահու վրա:

— Երեխ, քաղցած է խեղճը, ասաց մի սիրուն
տասերկու տարեկան աղջիկ, որ որոշվում էր
բոլորից թէ իր հագուստի նորութեամբ և թէ իր
շարժմունքի համարձակ ձևերով:

— Քաղցած չէ, պատասխանեց նրան մի պա-
ռաւ աղջիկ, — երեխ, զիժ է, տեսնում էք, աչքե-
րը ինչպէս վառվում են:

— Ի՞նչ աս խօսում, կէկէլ, զիժը դու ես, պա-
տասխանեց նրան փոքրիկ աղջիկը, և իր ձեռքի
պղնձէ թասը մօտեցրեց կնիկներից մէկին, խըն-
դրելով, որ կաթ ածէ:

Կինը ուսից ցած բերեց կաթով լիքը կուժը,
լցրեց պղնձէ թասը, և փոքրիկ աղջիկը երկու
ձեռքով բռնելով, վաղեց պատահու մօտ: Կա-
տիթը ապշած նայում էր այդ մանկահասակ բա-
րեսրտութեամն վրա, որին, կարծես, երկինքը ու-
ղարկել էր իրան օդնելու համար:

— Ա՛ռ, խմբիր, ասաց նա մանկական անկեղծ
կարեկցութեամբ, — ես քեզ համար հաց էլ կը
բերեմ:

Պատահին իր չնորհակալութեամբ լի աչքերը
դարձնելով այդ հրեշտակի նման չքնաղ արարա-
ծի վրա, ընդունեց թասը. Աղջիկը կրկին դարձաւ
իր ընկերուհիների մօտ և այս անգամ բերեց

մի կտոր հաց: Նրա վարմունքը այն աստիճան
սրտաշարժ էր, որ պատահին բոլորուն զարմա-
ցած մնաց: Նա աւելի խօսք չը գտաւ, որ յայտ-
նէ իր չնորհակալութիւնը, միայն դատարկած
թասը յետ տալով, ասաց.

— Թող Աստուած օրհնէ քեզ, սիրուն աղջիկ:

Այդ օրհնութիւնը այնքան խորիթ թւեցաւ, որ
փոքրիկ աղջիկը ծիծաղեց, և խառնվելով իր ըն-
կերուհիների խմբին, հեռացաւ:

Իսկ պատահնուն այժմ սաստիկ հետաքրքրում
էր այն միտքը, թէ ով էր դա, ում աղջիկը, որ
այդ հասակում ունէր այնքան գութ և ցաւակ-
ցութիւն զէպի մարդկանց թշուառութիւնը: Նա
մտածեց, թէ ոչխարհների հօտը շատ հեռու չը
պիտի լինէր և սկսեց զիմել զէպի այն կողմը,
գուցէ հովիւներից որ և իցէ տեղեկութիւն կը
ստանար:

Ճանապարհը, որ տանում էր զէպի այն կողմը,
ծածկված էր ոսնակոխ եղած խոտերով և ոլոր-
մոլով պատոյտներով անցնում էր բլուրների վրա-
յավ: Տեղ-տեղ կորչում էր նա խիտ թուփերի
մէջ, տեղ-տեղ շարունակվում էր կանաչազարդ
արօտամարգերի միջով: Այստեղ արեգակի պայ-
ծառ ճառագայթները թափել էին ձորերի և դաշ-
տերի վրա մի սքանչելի ջերմութիւն, իսկ այն-
տեղ, փոքր ինչ հեռու, կապուտակ երկինքը

միախառնվում էր կովկասեան ձիւնապատ սարերի դարեսոր սառնամանիքի հետ:

Յագեցնելով իր քաղցը, կաղզուրելով սպառված ուժերը, պատանին շտապով առաջ էր զբնում: Եւ իրաւ, ոչխարների հօտը շատ հեռու չէր, բլուրների միւս կողմում, կէսօրվայ տօթի պատճառով, նրանց պառկեցրել էին թուփերի հովանու տակ: Կուշտ ու գոհունակ անասունները, հանդարտ չոքած ծնկների վրա, երբեմն իրանց միամիտ աչքերը այս կողմ և այն կողմ էին դարձնում և մեծ ախորժակով որոճում էին: Տեղտեղ երկու չարաձախ այծեր, կանգնած ետեի ոտների պլզակների վրա, միմնանց հանդէպ, իրանց եղջիւրների ուժն էին փորձում: Փոչը ինչ հեռու ահազին չները, զլուխները առջենի թաթիկների վրա դրած, պառկել էին, և զգոյշ, խորամանկ աչքերով նայում էին իրանց շուրջը: Տեմնելով պատանուն, նրանք խմբով վրա վաղեցին և անշուշտ պատառ-պատառ կանէին, եթէ նա չը խլէր այնտեղ ընկած փայտի կտորը և նրանով չը պաշտպանվէր: Շների բարձրացրած աղաղակը նրա վրա դարձրեց հովիսներից մէկի ուշադրութիւնը, որը կէսօրվայ տօթից թուլացած, պառկել էր վայրենի տանձենու տակ: Նա չը շարժվելով իր տեղից, հեռուելոց ծոյլօրէն կանչեց.

— Այ մարդ, այ մարդ, այս կողմից, այս կողմից:

Պատանին մի կողմից շների հետ կուելով, միւս կողմից իր շուրջը աչք աժելով, դիմեց դէպի կոչող ձայնը: Շները հովիսին մօտենալով, փոքր ինչ հանգստացան, երբ նկատեցին, որ նա չէ քաջալերում իրանց վարմունքը: Պատանին բարեկելով, նստեց նրա մօտ: Հովիսը հասակն առած մարդ էր, այն լեռնային մարդերից մէկը, որ ստէպ անսասունների հետ ապրելով, կորցրել էր բոլորը, ինչ որ մարդկացին էր, և սեպհականել էր վայրենի անսասնականը: Բայց, որպէս երեսում էր, նա իր ոչխարների նման միամիտ, մի և նոյն ժամանակ բարեսիրա էր:

— Ի՞նչ սատանայ ես, թէ որ փայտը չը վեր առնէիր, իմ շները կը պատառուեին քեզ, ասաց նա ծիծաղելով, որպէս թէ մի մեծ դիւտ էր տրել իր նկատողութեան մէջ:

— Հա, եթէ փայտը չը վեր առնէի, շները կը պատառուեին ինձ, պատասխանեց պատանին ինքն էլ ծիծաղելով:

— Ի՞նչ սատանայ ես, կրինեց նա, շարունակելով իր բարեսիրա ծիծաղը, — ծրտեղից զտար այն փայտը, շատ հաստ փայտ էր:

— Այս, շատ հաստ փայտ էր, ասաց պատանին, — այնտեղ ընկած էր, երեի կորողները մոռացել էին:

— Անողատառ, կտրողները մոռացել էին, կրկ-

9
129

նեց հովիւը.—Ենչպէս հասկացար, Աստուած է վկայ, շատ սատանայ ես,

Կամենալով միանգամից վերջացնել փայտի պատմութիւնը, պատահին ոչինչ չը պատասխանեց: Բայց հովիւը դարձեալ կրկնեց.

—Այդ լաւ է պատահել որ կտրողները մոռացել են, Աստուած է վկայ, թէ որ փայտը չը լիներ, իմ չները քեզ կենդանի չեն թողնի:

—Այդ ես էլ եմ իմանում, նրա իմաստուն կարծիքը հաստատեց պատահին:—Այդ ոչխարները ումն են:

—Ումը պէտք է լինեն, պատասխանեց նա մի առանձին հպարտութեամբ.—մեծ պարոնի ոչխարներն են:

Մեծ պարոն ասելով, պատահին հասկացաւ, թէ ում մասին էր խօսքը, և սկսեց աւելի յարդանքով վերաբերվել գէպի իր խօսակիցը, երբ իմացաւ, որ նա թագաւորի հովիւն էր:

—Մեծ պարոնը ուրիշ ապրանք էլ ունի, հարցրեց նրանից:

—Աշխարհումը ով ունի այնքան ապրանք, որպէս մեր մեծ պարոնը, պատասխանեց հովիւը զարմացական կերպով զորվսը շարժելով.—այստեղ արածում են նրա ոչխարները, այնաեղ, սարի միւս կողմում, արածում են երկու քսանից աւելի կովեր, նոյնքան եղներ ու գոմէչներ: Բա-

ցի դրանցից, աասը էշ ունի, հինգ ջորի ունի, քսանից աւելի ձի ունի:

Այսքան ապրանք իս մեր Տաթենի մէլլիք Դափթն էլ ունի, իր մոքումը ասաց պատահին, ամենենին չը զարմանալով մեծ պարոնի հարստութեան վրա:

—Այս օրերս էլ ընծայ են բերել երկու ինչ որ անասուններ, անունները չեմ իմանում, աւելացրեց հովիւը:

—Ի՞նչ տեսակ անասուններ:

—Ինչ որ սատանայի նրան անասուններ. Երկայն ուսներ ունեն, երկայն, ծուռը վիզ ունեն, քանի օր առաջ մեծ պարոնի դրանը զուռնայ ածեցին, ողջ աշխարհը հաւաքվեցաւ այնտեղ. Նրանց գուրս էին բերել, թամաշայ էին անում:

—Ես էլ այնտեղ էի, տեսայ, դրանք ուղարկեր են. մեր երկում շատ կայ. չոքեցնում են, յետոյ բեռնում են:

—Դրուտ այդպէս, չոքեցնում են յետոյ բեռնում են, ինչ լաւ իմացար, ճշմարիտ, շատ սատանայ ես եղել:

Սատանայ բառը, որ այնքան յաճախ դորձ էր ածում հովիւը, նրա լեզում բոլորովին այլ իմաստ ուներ. զա նշանակում էր խելացի, ամեն բան իմացող, ամեն բան շուտ հասկացող: Բայց զգուշանալով, մի գուցէ ուղտի պատմութիւնն էլ այնքան հեռու տանէր շատախօս հովուին,

որպէս փայտի պատմութիւնը, նաև կարձ կտրեց,
սկսելով մի այնպիսի խօսակցութիւն, որից կա-
րող լինէր տեղեկութիւն ստանալ փոքրիկ աղ-
ջկայ մասին:

—Այդ ոչխարհները օրը քանի անգամ կթում
են, հարցրեց նա, իր շուրջը նայելով, որպէս
թէ ոչխարհներին է նայում:

—Բանի անգամ պէտք է կթեն, պատաս-
խանեց հովիւը իր խռապոտ ձայնով.—Երկու
անգամ են կթում. մէկը կէսօրին, մէկը երեկո-
յեան, երբ ոչխարհները տուն են դառնում:

—Կէսօրին, երիի, դաշտումն են կթում:

—Դաշտումը, ապա որտեղ: Չը տեսար, կնիկ-
ները կաթի կծերը տանում էին:

—Տեսայ: Երեի, մեծ պարոնի տուն էին տա-
նում:

—Ապա որտեղ պիտի տանէին: Այնտեղ էին
տանում:

—Այդ կնիկները ովքեր էին:

—Ո՞վքեր պիտի լինէին. մեծ պարոնի քոծերն
էին:

Պատանին փոքր առ փոքր համսում էր իր
հետաքրքրութեան առարկային:

—Երանց մէջ մի փոքրիկ աղջիկ կար, կարմիր
գերիայ ունէր հագած, ով էր նա:

—Դու թամարի մասին ևս հարցնում, ասաց
հովիւը բարեսիրո ժպիտով:—Թամարը մեծ պա-

րոնի եղբօր աղջիկն է. շատ անգամ քօծերի
հետ զալիս է ոչխարհների մօտ, և երբեմն ինձ
համար իւզով հաց է բերում, Ես էլ նրա համար
քաղում եմ անտառից զկեռ, յուն, կաղին և
ուրիշ պատւզներ: Շատ լաւ աղջիկ է թամարը:
Եթէ նրա մայրը չը մեռնէր, թամարը այսպէս
չէր լինի. Մեր այժմեւն տիկինը լաւ մտիլ չէ
տալիս թամարին: Այս, լաւ է, որ տղան շուտով
մեռնի ու խորթ մօր ձեռքը չընկնի: Հանգուցեալ
տիկինը շատ լաւ տիկին էր. ես դեռ պահել եմ
արեւները, որ մի անգամ նա ինձ ընծայեց:

Այնուհետեւ նա սկսեց պատմել, թէ թամարի
մայրը մեռնելուց յետոյ, թէկ նրա հայրը կրկին
ամուսնացաւ, բայց իր նոր կնոջ հետ ապրեց
մի քանի տարի միայն: Մի անգամ լեզկիների
յարձակման ժամանակ, կոփուի մէջ վէրք ստա-
նալով, մեռաւ. նա: Այնուհետեւ թամարը մնաց
բոլորովին որբ, իր խորթ մօր ապով: Այժմ թէ
թամարը և թէ խորթ մայրը կհնում են մեծ
պարոնի տանը, և մեծ պարոնը իր դաւակներից
չէ չոկում թամարին:

Վերջացնելով իր պատմութիւնը, հովիւը իր
կողմից սկսեց հետաքրքրիր մնել պատանու բնչ
ազգից և որտեղացի լինելու մասին, հարցրեց,
թէ նա բնչ է շնում վրաց երկրում. բնչով է
ապրում, և երբ պատասխան ստացաւ, թէ ոչնչ
պարագմունք չունի, ասաց.

— Տեսնում եմ, որ դու քաջ տղայ ես, շատ քաջ. իմ չների ձեռքից մինչև այսօր մի մարդ էլ չի պուծել, իսկ դու նրանց շշկուացրիր:— Կը ցանկանամ ինձ մօտ մնալ:

— Քեզ մօտ ինչ չինեմ, հարցրեց պատահին ծիծաղելով:

— Ի՞նչ պիտի շինես. ես ինչ որ շինում եմ, դու էլ այն կը շինես, պատասխանեց հովիւր, իր թաւամաղ յօնքերի տակ թափնված աչքերը լայն բացելով և ուղիղ պատահու երկսին նայելով:— Լսիր, տղաս, շարունակեց նա, — իմ օգնականներից մէկը իմ ցռւալը դողացաւ, յետոյ փախաւ. հիմայ ինձ մէկ մարդ է հարկաւոր. դու իմ օգնականը կը դառնաս ու ինձ հետ ոչ խարներ կարածացնես, մնձ պարսնի ոչխարները, հասկանում ես, դա պստիկ դործ չէ:

Այդ առաջարկութիւնը, թէն մկպում շատ ծիծաղելի թուեցաւ պատահուն, թէն նրան շատ հրապուրիչ չէր մեծ պարսնի հովուի օգնական լինելը, բայց, կարծես, մի ներքին ազգմամբ սովիպիցաւ նա հաշտվել այդ վիճակի հետ: Գլխաւոր շարժառիթը, որ զրդեց նրան կապվել այդ նոր պարապմունքի հետ, այն էր, որ սա առիթ կը տար երբեմն տեսնել գեղեցիկ թամարին, որի ամբախտ պատմութիւնը մի կոզմից, իսկ իրան ցոյց տուած կարեկցութիւնը միւս կողմից, թոգել էին նրա սրտում մի խուլ, հա-

մակրական զգացմունք, որը թէն ինքը բացատրել չէր կարողանում, բայց միանգամայն տիրել էր նրա հոգուն: Բացի դրանից, նրան քաղցր էր, առժամանակ գոնէ, իր սրտի վշտերը ցրվել ւեռների, դաշտերի, անտառների առանձնութեան մէջ, հեռու լինել մարդերի բնակութիւնից, որոնցից ոչ մի միխարութիւն չէր դանել նա: Այդ պատճառով նա աւելի բարուք համարեց կենակցել միամիտ հովիւնների հետ, լսել նրանց պարզ, հասարակ պատմութիւնները, քան թէ լսել աւաղակ հայ մանրավաճառի անդադար նախատինքները, որը այնքան անխիղճ կերպով կողոպտեց նրան:

— Դէ, ասա, տղաս, մնում ես ինձ մօտ, կրկին հարցրեց հովիւր:

— Կը մնամ, պատասխանեց պատահին:

Զ.

Հովիւր, որ ընդունեց իր մօտ պատանի գաւթին, կոչվում էր Սիկօ: Գաւասաւն տարեկան հազիւ կը լինէր նա. մի հաստուպինդ մարդ էր Սիկօն թէ իւելքով և թէ մարմուլ: Նրա ընտանիքը շատ մեծ չէր. երկու աղջկներ և մի տղայ ունէր Սիկօն: Ոլրէս ամեն վրացի, դէսի իր ընտանիքը բնաւ հոգ չունէր Սիկօն: Նա այն աստիճան ընտելացած էր իր ոչխարների հետ և այնքան սիրում էր նրանց, որ բոլորովին մոռացնէր թէ կնոջը և թէ զաւակներին: Խիստ հա-

զիւ էր պատահում, որ Սիկօն իր տան շէմքի վրա սոք կոխէր, այդ պատճառով Մըցիսէթի մէջ առակ էր դարձել ամեն մի հնութեան մասին առել. «այդ անցքը այն տարում պատահեց, երբ Սիկօն եկել էր իր տունը»: Ամբողջ ցերեկը իր հօտի հետ անց էր կացնում նա արօտատեղերում, իսկ գիշերը պառկում էր իր տիրոջ դոմի մէջ, որ մի քանի քայլ միայն հեռու էր իր տընից: Որպէս վարձ իր ծառայութեան համար, ամեն տարի մեծ պարոնի կալից ստանում էր Սիկօն հինգ ջոււալ սիմինդր, հարիւր չափ գինի, տասերկու բիեալ փող, մի շապիկ, մի ստաշոր, երկու զոյգ տրեխաներ, մի խօսքով մօտաւորապէս նոյնքան, որքան ստանում էր մի գնդապետ: Այդ նախամէճելի ոօճիկը տալիս էին Սիկօի տանը և նրա ընտանիքը կերակրվում էր: Իսկ պատանի Գաւիթիք, մեծ պարոնի մեծ հովուի օգնականը, ոօճիկ չէր ստանում: զրա համար պէտք էր դեռ եղկար ծառայութիւն: նա ստանում էր ամեն առաւտօտ միայն օրտկան հաց, որը իր մախաղի մէջ դրած, տանում էր հետը, բայց դրանից, ըստանում էր ամեն տարի մի ձեռք հագուստ:

Այսուամենայնիւ, նա շատ գոհ էր իր նոր վիճակով: Լեռնային օղը, արձակ կեանքը նրա վրա խիստ բարերար ազդեցութիւն դործեցին: Եղանակի խստութիւնից կոշտացած և արելից այրված նրա դէմքը, թէե այժմ կորցրել էր իր

նախկին քնքութիւնը, բայց աւելի այրական կերպարանք էր ստացել, որ արտայայտում էր երկաթի առողջութիւն և մարմնի անհամեմատ զօրութիւն: Նրան այժմ գժուար էր ձանաչել իր հովուական նոր հագուստի մէջ, որ սաքից մինչև զլուխ բաղկացած էր անսասունների կամ մորթից կամ կաշուց: Գլխին դրած ունէր մուրգուղ^{*)} այծի մօրթից գլակը, որի երկայն, զանգուր մազերը թափվում էին մինչև երեսի կէսը, կիսով չափ ծածկելով աչքերը: Այդ տալիս էր նրա դէմքին մի ահաւոր արտայայտութիւն: Շապիկի վրա հագել էր գառան մօրթից պատրաստած, կարճ մուշտակը, գօտեորած նեղ, կաշեայ փոկով, որից քարշ էին ընկած լեզկու խէնջարը, վառօղի և գնատակի ամաններ, և իւղով լցրած, երկաթի մի տուփ զէնքեր օծելու համար: Մուշտակի լերկ սեկը ծառայում էր որպէս երես, իսկ մաղսո կողմը որպէս աստառ: Այն շալվարը պատրաստված էր աեղային կաշտ չուխայից, որի ստորին մասը, ծնկներից ցած, հաւաքված էր կաշուց կարած զանկանների մէջ: Յետոյ մէրկ, առանց գուլբայի ոտների վրա կապել էր տրեխները:

Հայրենիքից բերած իր բոլոր հարստութիւնը — ձին, հագուստը, վաղերը — ծախսելէն յետոյ,

^{*)} Մուրգուղ այծերի մի աեսակն է, որ երկայն, զանգրահեր մազեր ունի:

նա կարողացաւ պահել զի՞նքերը միայն։ Ներքին ասպետի թանգագին ընծան, Սիւնեաց աշխարհի մի հոր թագաւորի թուրը, նա ինսամքով վաթաթելով, պահ էր տուել իր նոր խնամակալի։ Սիկօի տանը. նրան չէր գործածում, իսկ մնացածը՝ հրացանը, առողջանակները և խէնչարը գործ էր ածում։ Աւագակների բազմութիւնը առիթ էր տուել հովիւներին ցուլի հետ կրել և հրացան, իսկ մախաղի հետ գնտակի ու վառօղի ամաններ։ Յաճախ կրկնվող զօղութիւնները պատճառ էին տալիս պատանի Դաւթին անդադար կռուել վտանգների դէմ։ Նա գործ ունէր բացի տւաղակներից և գաղանների հետ։ Լեռները, անտառները լիքն էին զայլերով, արջերով և վագրներով, իսկ զրանցից աւելի վասթար էին վայրենի օսերը, խմերենները, խէվսուրները և կովկասեան լեռների բազմաթիւ, խառնիճաղանձ ցիղերը։ Ամենի դէմ պէտք էր պահպանել հօտը, ամենի հետ պէտք էր կռւել։ — Ո, հա այդ սրի, վառօղի և արեան դպրոցից ստացաւ պատանի Դաւթը իր սկզբնական պատերազմական կը թութիւնը։

Բարեխրա Սիկօն այնքան ներողամիտ էր դէպի իր պատանի օգնականը, որ երբեմն նրան թոյլ էր տալիս հեռանալ հօտից և պարապել որսորդութիւնով։ Այսպիսով նա աւելի վարժվել որսորդութիւնով։ Այսպիսով նա աւելի

ջողվում էր գնտակահար առնելու ոչ միայն նապաստակներ նրանց փախչելու միջոցում, այլ շատ անդամ սպանում էր արագալազ, վայրի այծեր, եղջերուներ, արջներ և այլ անասուններ։ Շուտով նա մեծ հոչակ ստացաւ թէ իր ընկերների և թէ շրջակայ լեռների հովիւնների մէջ։ Նրա համբաւը հասաւ մինչեւ մնդամ մեծ պարոնին, որին ծանօթ լինելու պատիւն ունեցաւ, երբ իր որսերից երբեմն տանում էր տիրանկան սեղանի համբար և փոխորէնը նրան ընծայում էին վառօղի, գնտակ, և առատ զինի էին խմեցնում մեծ պարոնի մառանից։

Ենձ պարոնի այդ ողորմածութիւնը դէպի պատանին չափազանց ուրախացնում էր բարեսիրա Սիկօնն, և նա մի առանձին հախաղգացմունքով շատ անդամ կրկնում էր նրան։ — Ես իմանում եմ, ոու վերջը թաւագ գալու (ալնուական) էր դանաս։

— Ինչով, հարցնում էր պատանին, ինքն էլ չը հաւատալով իր ականջներին։

— Ի՞նչպէս թէ ինչով, կը դառնաս էլի, պատափանում էր նա հասնատ հաւատով և պատմում էր պատանուն զանազան օրինակներ, որոնցից կարելի էր եղրակացնել թէ իր ենթադրութիւնը անտեղի չէր։

— Միանդամ, պատմում էր նա, մեծ պարոնը ընթրիք պիտի տար իր զրանիկներին, « ավ կը

Անի այն քաջը, որ կը որւայ մի եղջերու իմ սեղանի համար, ասաց նա իր դիւանին: Իոլոր թաւաղների որդիները վեր առեցին իրանց հրացանները, վազեցին դէպի լեռները, դէպի անտառները, ամբողջ օրը ման եկան և զիշերը դարտակ վերադարձան: Այդ միջոցին մեծ պարոնի տունը ներս մտաւ քէչալ Դառչօն, մի ահազին եղջերու շալակած: «Շատ լաւ տղայ ես, Դառչօ», ասաց նրան մեծ պարոնը, իր ձեռքը նրա ուսին խփելով և խկոյն հրամայեց հրովարտակ գրել, նրան թաւաղութիւն չնորհեց, և բացի դրանից քառասուն տուն էլ ճորտեր բաշխեց:

—Ո՞վ էր այդ Դառչօն, հարցրեց պատանին զարմանալով:

—Ո՞վ պէտք է լինէր. մի անլործ, արքեցող անսպիսան, որ ամբողջ օրով կը բանէր ամեն մի մարդու տանը, եթէ նրան մի գաւաթ դինի կը տային:

Խոկ պատանին ոչ ազնուականութեան վրա էր մտածում և ոչ ճորտերի, նա իրան բախտաւոր ու երջանիկ էր համարում, երբ երբեմն տեսնում էր գեղեցիկ թամարին, երբ լսում էր նրա բերանից մի քանի քաղցր խօսքեր և երբ զմայլում էր նրա դէմքի անմեղ ժպիտով:

Թամարը այժմ սկսել էր աւելի յաճախ գալ ոչխարների մօտ: Նրա համար անտառային

պառողներ քաղելու հոգսը, որ առաջ կատարում էր Սիկոն, այժմ յանձն էր առել պատանին: Նա գնում էր անտառի ամենախոռու տեղերը, մանում էր թուփերի ամենախճանակած թաւուտների մէջ, պատառուտում էր իր հագուստը, փշերով ծւատում էր իր ձեռքերը, հաղար ու մէկ լուսնդների էր ենթարկում իր անձը, նրա համար նորանոր պառողներ գտնելու համար: Ահա այն բարձր ժայռից քարշ ընկած մացառների մէջ երեսում են հասուն մորիներ, կամ կարմիր ելակներ, բայց այնտեղ բարձրանալու համար կարելի է ոտքը կոտրել, գլուխը ջախջախել, — այդ մի և նոյն էր Դաւթի համար, վըտանդներից չէր վախճնում նա: Նա պատրաստ էր մինչև անգամ մահ յանձն առնել, միայն թէ կարողանայ քաղել խնդրած պառողները: Նա լցնում էր այդ պառողները իր ձեռքով հիւսած փոքրիկ զամբիւլների մէջ և պահում էր թամարի համար:

Մի անգամ պառողները թամարին տալու ժամանակ պատանին լնծայեց նրան և մի փունջ ծաղիկ: Դաւթիթը զուրկ չէր քնքոյշ զգացմունքներից, բայց նրան պակասում էր կիրթ ճաշակը: Նա իր փունջը կազմել էր ամբողջապէս գեղին ծաղիկներից:

—Ես գեղին ծաղիկներ չեմ սիրում, ասաց թամարը, թէս լնդունելով փունջը:

—Ապա ինչ գոյն ես սիրում, հարցրեց պատահին, սաստիկ կարմիրելով իր անշնորքութեան վրա:

—Կարմիր, վարդագոյն, մանիշակագոյն, կապոյտ, ու դրանց նմանները, պատասխանեց թամարը, մի և նոյն ժամանակ չը դադարելով ճաշակել իրան մատուցած պտուղների հասուները:

—Ի՞նչու գեղինը չես սիրում:

—Չեմ սիրում, ինքու էլ չեմ իմանում, թէ ինչու չեմ սիրում, սաաց նա իր փունջի վրա նայելով. —Ես գեղին գունով շորեր էլ չեմ հագնում, երբ ինձ համար կարում են:

—Դու, երեխ, կարմիրն ես սիրում, պատասխանեց պատահին մի առանձին հրճուանօք նայելով թամարի վրա: —Առաջին անգամ, երբ ես քեզ տեսայ, էլի այսպէս կարմիր գերիայ ունէիր հագած, ինչպէս հիմայ:

—Առաջին անգամ որտեղ տեսար ինձ, հետաքրքրութեամբ հարցրեց թամարը: —Այդ երբ էր:

—Երկու տարի առաջ: Ես քեզ տեսայ ճանապարհին, քօծերի հետ տուն էիր գնում. դու ինձ կաթ խմացրի: —Չես յիշում:

Թամարը մատը զբեց բերնին, գեղեցիկ, երկայն թերթերունքներով պատած վերնակոպերը խոնահեցրեց, մտածութեան մէջ ընկաւ. Բո-

պէական լուռթիւնից յետոյ, զլուխը բարձրեց, և ուղիղ պատանու երեսին նայելով, ասաց.

—Չեմ յիշում: Երկու տարի դրանից առաջ... ես քեզ ճանապարհին կաթ խմացրի... չեմ յիշում... կրկնեց նա մի առանձին խորհրդաւոր ձայնով:

Այն, երկու տարի առաջ.... պատասխանեց պատահին սրտի բարախմունքից գողդովուն ձայնով: — Այն օրից ես յանձն առայ ձեր հովուը վնել:

—Ի՞նչու, հարցրեց թամարը և մի նույրը ժպիտ փայլեց նրա սիրուն շրթունքների վրա:

—Որ կարողանամ քեզ շուտ-շուտ տեսնել.

Վերջին խօսքը լսելու ժամանակ, թամարը ծիծաղելով փախաւ դաւթի մօտից, իսկ հեռանալու միջոցին կանգ առեց, և ապշած պատանու ականջներին հասան հետեւեալ խօսքերը, երբ նու իր ուրախութեամբ լի դէմքը դարձնելով, սաաց հեռուից.

—Ես թէ գեղին ծաղկիներ չեմ սիրում, բայց այդ փունջը ինձ հետ կը տանեմ, նրա համար որ դու ես քաղել, —կը պահեմ ու միշտ կը պահեմ սրտիս վրա...

Այդ խօսակցութիւնը պատանու և թամարի մէջ տեղի աւնեցաւ ոչխարների կայարանից փոքր ինչ հեռու, մի առուակի ափի մօտ: Խիտ

թուփերը ծածկում էին նրանց թէ հոլիվների և թէ թամարի հետ եկած աղախինների աշքերից: Վերջինները այդ ժամանակ զբաղված էին ոչխարները կթելով: Բայց թէ պատահին և թէ մանկահասակ աղջիկը չը կարողացան նկատել, որ նրանցից մէկը, սատանայի նման թուփերի մէջ թագնվելով, ուշադրութեամբ լսում էր երկու սիրահարների մտերմական խօսակցութիւնը, և մէծ հետաքրքրութեամբ զննում էր նրանց բաղդաւոր երեսների դժերի ամենափոքր՝ շարժումները, և արտայալառութեան ամենաթեթև նշմարը:

Թամարի հեռանալուց յետոյ նա դեռ երկար մնաց իր գարանի մէջ, բարկութեամբ նայում էր դաւթի վրա, որը այդ բոպէում անշարժ արձանի նման, սառած, ապշած կամդնել էր, բոլորովին չը կարողանալով իրան հաւատացնել, թէ տեսածը իրողութիւն էր, թէ լսածը թամարի խօսքերն էին: Նա շտապով վագեց օրիորդի ետեից, որ գոնէ միանգամ ես տեսնէ նրան, բայց նա աղախինների խումբի հետ գնացել, հեռացել էր արդէն: Այդ միջոցին թուփերի մէջ թագնված գարանակալը գուրս եկաւ իր գաղտնարանից, և զարտուղի ճանապարհներով վազ տալով, հասաւ իր ընկերուհիներին:

Այնուհետև պատահի՛ ամեն առաւօտ, դեռ վաղորդեան ցոլը չը բարձրացած, քաղում էր

լեռներից թամարի սիրառ ծաղկները, փունջեր էր կապում, զցում էր աղբիւրների յստակ ջրերի մէջ, որ թարմ ու անթառամ մնան թամարին ընծայելու համար, բայց ծաղկները օրերով, շաբաթներով մնում էին աղբիւրների մէջ, գունատվում էին, թառամում էին, իսկ թամարը չէր երեսում: Պատահին նորերն էր քաղում, նոր փունջեր էր կապում, բայց թամարը չէր գալիս ու չէր գալիս նրանց տանելու համար, ի՞նչ էր պատահել, արդեօք հիւանդ էր նա, — պատահին ոչինչ տեղեկութիւն չունէր: Վերջին տեսութիւնից յետոյ անցան շաբաթներ, անցան ամիսներ նա թամարին չէր տեսել: Նա բոլորովին կորցրեց իր սրտի ուրախութիւնը և օրըստօք սկսեց աւելի տխուր, աւելի լսու ու մանջ լինել: Պատահնու տրտմութիւնը, նրա անմիտիթար հալումաշ լինելը չէր կարելի, որ աննկատելի մնար իր ընկերներից, որոնց բոլորի ուրախութիւնն էր նա, որոնք անդադար հարցնում էին նրա թախծութեան պատճառը, բայց ոչինչ չէին կարողանում գուրս բերել լուս և ծածկամիտ դասելուց:

Սիկօի իրաւասութեան ներքոյ գանվող հովիւների թիւը, բացի գաւթից, վեց հոգի էր: Գաւթիթը իր բնաւորութեան քաղցրութեամբ սիրելի էր դարձել ամենին: Ոչխարների հանգստի մօտ, գիշերային խարոյկի շուրջը բոլորած, պա-

տանին շատ անգամ զուարձացնում էր նրանց իր երգելով: Որպէս սիւնեցի, զիտէր նա ածել թառի վրա և խիստ յաջողակ ձայն ունէր. բայց վերջին օրերում նրա ձայնը բոլորովին լռեց:

—Ի՞նչ է պատահել քեզ հետ, մի գիշեր հարցրեց պատահի գէվօն, դանելով նրան ոչխարհների կայարանից հեռու, պառկած մի ժայռի մօտ:

—Ոչինչ, պատասխանեց Դաւիթը, իր տեղից չը շարժվելով.—քէփս մի փոքր լաւ չէ, կարելի է մրսած լինեմ:

Դաւիթի ընկերների մէջ գէվօն միակն էր, որ բոլորից աւելի մուշկիմ էր նրա հետ, և վերջին ժամանակներում լռութեամբ հետազոտում էր նրա դրութիւնը, թէն ընկերոջը ոչինչ չէր յայտնում:

—Ես զիտեմ, ասայ նա, խոնարհվելով իր ընկերոջ երեսի վրա,—դու ոչ հիւանդ ես և ոչ մրսած ես, բայց զիտեմ, թէ ինչու է քէփդ վատ:

—Ի՞նչու է վատ, հարցրեց Դաւիթը, զլուխը վեր բարձրացնելով:

—Դու ինձանից ծածկում ես, Դաւիթ, ևս կարծում էի, դու ամեն բան կասես ինձ, խօսեց գէվօն փոքր ինչ վիրաւորգած կերպով:

—Ի՞նչ բան պիտի ասեմ քեզ. դու ինքդ ասում ես, թէ ամեն բան խմանում ես:

—Հա, խմանում եմ...

—Ի՞նչ ես խմանում:

—Դու նրա համար ես տխուր, որ թամարը էլ ոչխարհների մօտ չէ զայլա:—Բայց զիտես, թէ ինչու համար չէ դավիս:

—Ես ոչինչ չը զիտեմ, թէ դու մի բան զիտես, ասա:

—Կասեմ, պատասխանեց Գէվօն բարեկամական կարելցութեամբ և սկսեց պատմել իր հաւաքած տեղեկութիւնները: Նա յիշեցրեց Դաւիթին նրա վերջին անգայոշ տեսութիւնը թամարի հետ, յիշեցրեց նրանց սիրային խօսակցութիւնները, աւելացնելով, որ այդ միջոցին աղախիններից մէկը, թուփերի մէջ թագնված լսում էր նրանց, և նա գնացել, բոլորը խմացում է տուել նրա խորթ մօրը:

Վերջին խօսերը լսելու ժամանակ Դաւիթը բոլոր մարմնով գողաց. նրան տիրեց մի տեսակ սոսկում, կարծես, ամբողջ քարածայուը, որի տակին պառկած էր նա, փուլ եկաւ նրա վըշին: Նրա երկիւղը, նրա սարսափը իր մասին չէր, նա այն տեսակ երկչուս բնաւորութիւններից չէր, որ վախենար իր յարաքերութիւնների մի իշխանազն աղջկայ հետ յայտնվելուց, թող թէ, դա մեծ պարունի եղբօր աղջիկը վնէր. Շատ-շատ, կը թողնէր այդ երկիւը և կը հեռանար, իր հետ տանելով Թամարի թէ սէրը և թէ արտութիւնը: Բայց նա վախենում էր նոյն խոկ թամարի մասին, որ իր պատճառով պիտի տանջ-

վէր, պիտի հալածվէր, անարդ նախատինքներ պիտի կրէր:

—Դրանցից ոչ մէկը չի լինի, միլիթարեց նրան բարեսիրո Գէվօն, —զրանք կարող էին պատահել, եթէ թամարի մայրը խորի մայր չը լինէր: Բայց նա բաւականացաւ մըայն նրանով, որ արգելեց թամարին տնից դուրս գալ:

—Նա կարող է յայտնել մնձ պարոնին, ասաց Դաւիթը վրդովիած ճայնով:

—Նա ոչ ոքին չի յայտնի, և խստութեամբ պատուիրել է այն աղախնին, որ շուռ մնայ:

—Դու հրտեղից գիտես:

—Ես գիտեմ... այն աղախնը իմ բարեկամն է.... Նա ասաց, թէ տիկինը այն աստիճան առում է թամարին, որ գուցէ շատ ուրախ կը լինի, եթէ նա խայտառակվելու համար կը պսակվի մի հովուի հետ:

—Եւ ինչու է արգելում նրան այստեղ գալ, հարցրեց Դաւիթը, փոքր ինչ հանգստանալով:

—Ո՞վ է իմանում, ինչ սատանայական մտքեր ունի, պատասխանեց Գէվօն ծիծաղելով:

—Ես նրա սատանայական մտքերը կը ոչնչացնեմ... խօսեց պատանին խորհրդաւոր ճայնով: ևս երբէք չեմ թողնի, որ թամարը խայտառակինիր...

Է.

Անցաւ աշունը, անցաւ ձմեռը, անցան ամ-

տահ էին սպիտակ, փօշենման մառախուզով: Օդի մէջ ծաւալվում էր գարնամային խիստ ախորժ, անուշահոտ թարմութիւն: Սպիտակ, դեղին, կապոյտ ձնածաղիկը, համեստ մանիչակը, նոր հալված ձիւնի տակից աղատվելով, պատել էին կանաչաղարդ ծորերի, բլուրների երեսը: Այստեղ գիւղական աղջիկները աղմկալի խումբերով ման էին գալիս, ծաղկիներ էին հաւաքում: Այնտեղ, նոր հալված ձիւնից առաջացած հարիւրաւոր վտակների ափերի մօտ նրանց մայրերը քաղում էին զանազան բանջարեղէններ աղցանի համար: Մի փոքր հեռու արածում էին ոչխարները և հովիւների աղդարար ճայնի արձագանքը երբեմն խուլ հնչիւններով տարածվում էր բլուրների մէջ: Այդ բոլորը, լուսաւորված վաղորդեան արեգակի տաք, փափուկ ճառագայթներով, չնչում էր գիւղական կեանքի խաղաղ պարզութեամբ:

Կուր գետի ափի մօտ, աւերակ մատուռից փոքր ինչ հեռու, մի կանաչաղարդ տափարակի վրա մնձ պարոնի բազմաթիւ սպասաւորները և ամեն հասակի աղախնները ճաշի պատրաստութիւն էին տեսնում: Մի տեղ գառներ էին մորթում, միւս տեղ արդէն յօշոտած միսը շարում էին շամփուրների վրա: մի տեղ փառած փայտակոյտերի վրա կաթաներով ջուր էին տաքացնում խաշլամայի համար, միւս տեղ եր-

բողջ ութ տմիսներ, երբ Դաւթի տեսութիւնները թամարի հետ ընդհատված էին: Այդ ութը երկար ու ծանր տմիսների ընթացքում պատահներն ընդամենը մի երկու, երեք անգամ միայն առիթ էր ունեցել տեսնել նրան, այն ես հեռուից, այն ես ծածուկ:

Զատկից յետոյ կանաչ կիրակի օրն էր: Այսօր կուր գետի ափի մօտ պիտի կատարվէր մի հանդիսաւոր կրօնական տօնախմբութիւն: Մեծ պարոնը իշխանական գերզաստանի հետ, նրա դրանիկները իրանց ընտանիքների հետ, մի քանի նշանաւոր ազնուականներ, բոլորը միասին հաւաքված, պիտի մի աւերակ մատուռ ուխտ գնային և այնտեղ, բաց օդի տակ, պիտի մի լաւ քէֆ անէին»: Մըցսէթի ընակիչներից շատերը, վազդօք գիտենալով այդ, խմբւել էին գետի եւ գերքում, ծածկել էին բլուրները, որ հռուից թամաշայ անեն: Այդ առաւօտ մեծ պարոնի հոգիւներն էլ իրանց հօտը քշեցին գէպի այն կողմի լեռները, որպէս դի առիթ ունենան իրանք ևս տեսնելու, թէ ինչպէս են ուրախանում մեծ մարդիկը:

Այն առաւօտ ինքը եղանակը յարմարվում էր երկրի իշխանի ուրախ արամագրութեանը, Հայելու պէտ պայծառ, ֆէրուզայի պէտ կապոյտ երկնքի վրա ամպի մի կառը անգամ չէր նիրեւմ, միայն հեռաւոր սարերի կատարները դեռ պաշ

կաթեաց կաովարաների վրա կնիկները հաց էին թխում: Մի կողմից էլ մեծ պարոնի մառանից, աւանակների վրա բարձած, տիկերով գինին բերում էին ու դարսում այդ գաշտային խոհանոցի մօտ:

—Գիգօ, դու ինչպէս ես կարծում, մեծ պարոնի խոյը կը յաղթէ, թէ Արչիլ թաւագի որդու խոյը, հարցրեց Գիգօից գիւղացի Լեկօն, որը նրա մօտ նստած գետնի վրա, հռուից նայում էին, թէ ինչպէս են ճաշ պատրաստում:

—Ո՞վ չէ իմանում, որ մեծ պարոնի խոյը կը յաղթէ, պատասխանեց Գիգօն իր խելացի համեմատութեամբ, —թէ մեծ մարդու խոյըն էլ իր նման գօրեղ կը լինի:

Գիւղացի Լեկօի խորշումած դէմքի վրա երեաց ուրախութեան նման մի բան և այդ միջոցում նրա ճաքճըքած շրթունքները յետ-յետ գնացին, երեան հանելով մոյդ-դեղնաղոյն ատամները, որոնցից մի քանիսը ընկած էին:

—Դու լաւ ասեցիր, Գիգօ, Աստուած է վկայ, շատ լաւ, խօսեց նա, շարունակելով իր ծիծաղը, —ես մեր հարեան կօստօի հետ զբազ էի եկել, ասել էի, թէ մեծ պարոնի խոյը կը յաղթէ. ևս կը տանեմ, այնպէս չէ:

—Գու կը տանես, կրկնեց Գիգօն, աւելացնե-

լով, — ասում են մեծ պարոնի խոյին զինի
պիտի խսմացնեն, որ լաւ կուէ:

— Դուք որտեղից գիտես:

— Գիտեմ... բայց դու ոչ ոքի չասես, Լեկօ,
դա ծածռէլ բան է, եթէ գլաննան, որ այդ
խօսքը մեր րելնիցն է դուքս եկել, մեր հոգին
կառնեն...

— Գժուել եմ, որ ասեմ:

Նրանց խօսակցութեան մէջ մտաւ մի այլ
գիւղացի:

— Ասում են որ մեծ պարոնի մեծ շունը պիտի
կուռացնեն Լեան թաւաղի որդու շան հետ:

— Այ, ինչ լաւ թամաշայ կը լինի, բացա-
կանչեցին թէ գիգօն և թէ Լեկօն ուրախութիւ-
նից կանխապէս ծափահարելով:

— Ասում են՝ Զաքարա ու Ալեքսի թաւաղի
որդիներն էլ իրանց աքաղաղները պիտի բերեն
կուռացնելու, մէջ մտաւ մի ուրիշ գիւղացի: —
այ, այն ժամանակ լաւ թամաշայ կը լինի,

— Ե՞ս, քէֆը նրանցն է... աշխարհումս ինչ
լաւ բաներ կան, բոլորը նրանց է տուած...
մենք միայն պիտի թամաշայ անենք... աւելաց-
րեց մի ծերունի գիւղացի, դողդոջուն ձեռքե-
րով ծոցից գուրս բերելով քթախոտի պարկը,
և լի բուռով ածելով պնչածակերի մէջ, որ սրա
կալիք փոքր ինչ հովացնէ:

— Այս աքաղաղներից մէկը, շարունակեց հա-

հոգւոց հանելով, — որ այսօր Զաքարա ու Ալեքսի
թաւաղի որդիները պիտի կուռացնեն, — մերն է.
թոռս պահել, մեծացրել եր: Աստուած էլ գիտէ,
որ մեր գիւղում նրա հատը չէ կայ. Հէնց որ Ա-
լեքսի թաւաղի որդին լսեց, եկաւ մեր տնից զօ-
ռով քաշեց տարաւ: Այս օրից խեղճ թոռնիկս
չէ գագարում լաց վնելուց... իմ մի հատիկ կո-
վը եթէ տանէին, են այնքան չի ցաւի, որքան
այդ աքաղաղը ցաւեցրեց ինձ:

— Մեծ պարոնի մեծ շունն էլ մեր հարեան
Լենտօի շունն էր, խօսեց մի ուրիշ գիւղացի: —
Լենտօի տունը այդ շունն էր պահում. նրա եր-
կիւղից ծիտն էլ Լենտօի կտուրի վրայից չըր
կարողանում անցկենալ: Հէնց որ մեծ պարոնը
լսեց, ուղարկեց տանել տուեց շունը. Լենտօն
մինչև հիմայ էլ անիծում է...

Գիւղացիների խօսութիւնը ընդհատվեցաւ,
երբ հեռուից լսելի եղաւ զուռնայի ու նազա-
րայի ձայնը: Ումբուը դէպի այն կողմը վագեց:
«Գալիս են»... անցաւ մի խուլ շնչիւն բազմու-
թեան մէջ: Ազնուականութիւնը իր մեծ պարոնի
առաջնորդութեամբ գալիս էր: Սկզբում տեսն-
վում էր մի մռայլ, անորոշ խումբ միայն, որ
հազիւ նկատելի կերպով շարժվում էր դէպի հան-
գէսի տեղը: Բայց որքան մօտենում էր խօսմբը,
այնքան ընդարձակվում էր, այնքան խուռն կեր-
պարանք էր ստանում:

— Տես, տես, այն սև ձիաւորը մեծ պարոնն
է, որ բոլորից առաջ է ընկած, ցոյց էին տավա
միմեանց գիւղացիները:

— Նրա ետեի ս զլոտակ ձիաւորն էլ Արքիլ թա-
ւադի որդին է:

— Ո, յն կարմիր ձիաւորն էլ և ան թաւադի որ-
դին է, որ Արչիլի կողքովն է քշում:

— Ա, յն կապոյտ ձիաւորն էլ Ալէքսի թաւադի
որդին է:

— Զէ, Զաքարան է, Ալեքսին կապոյտ ձի չու-
նի, ուղղում էր նրան մօտի կանգնած գիւղացին.
— Ալեքսու ձին զեղին գոյն ունի.

Այսպէս հեռուից վիճում էին միմեանց հետ,
մինչև բոլորովին մօտեցաւ խումբը: Թէ Մըցիւ-
թի, թէ շրջակայ գիւղերի բոլոր զուռնաչիները,
բոլոր նաղարաչիները, միասին հաւաքված, կազ-
մել էին մի ահագին նուազախումբ! Զուռնայի
զիւ, ձլլուն, ականջ ծակող ձակնը, նաղարայի
վայրէնի գըմբգըմբոցը, միախառնվելով, դլլողեց-
նում էին լեռները մի խառնածայն, անախորժ
ներդաշնակութիւնով, թէն դա բոլորին գիւր էր
գալիս, բացի այն լեռների վրա արածող ոչխար-
ներից, որոնք խրաչելով, սկսան այս կողմ և
այն կողմ փախչիլ, և բացի հոմիւների չներից,
որոնք այդ անակնկալ աղմուկը լսելով, սկսեցին
դառն ձայնով ունաւէ, սկսեցին հեծկլասաւ, կամ
բարկացած կերպով հաչել: Այդ իմաստուն արա-

րածները, երեխ, աւելի կիրթ ճաշակ ունէին,
քան թէ ամբոխը, որ այդ միջոցում հիացած էր
այդ տարօրինակ սրաժշառթիւնով:

Նուազախումբը բոլորից առաջ էր ընկած և
ածում էր: Նրանց ետեից հանդիսաւոր կերպով
բերում էին այն անսասունները, որ այսօր պի-
տի մրցութիւն անէին միմեանց հետ: Նախ բե-
րում էին մեծ պարոնի երևելի խոյը, կապված
մի երկայն շղթայով, որի մէջ տեղը անց էր
կացրած խոյի պարանոցով, իսկ շղթայի երկու
ծայրերը բռնել էին երկու ուժեղ մարդիկ: Նրա
ահագին, ոլորտապատոյտ եղջիւկները ներկել էին
վարդի գունով և զարդարել էին փոքրիկ զան-
գակներով: Նոյն գունով, խայտաճամուկ կեր-
պով, ներկել էին նրա մարմնի սպիտակ բուրդը:
Մեծ պարոնի խոյի ետեից բերում էին Արչիլ թա-
ւադի որդու խոյը, նոյնպէս շղթայով կապված,
նոյնպէս զարդարած փոքրիկ զանգակներով, այն
զանազանութեամբ միայն, որ դրա թէ բուրդը և
թէ եղջիւկները ներկված էին կապոյտ գունով և
ոչ վարդապայն, որ միայն մեծ պարոնը իրաւունք
ունէր գործ ածելու իր անաստունների վրա *):
Գրանցից յետոյ, նոյնպէս հանդիսաւոր կեր-

*) Նոյն սովորութիւնը կայ և պարսից մէջ.
միայն թագաւորը և թագաւորացները իրաւունք
ունեն իրանց ձիաների պոչը և բաշը ներկել
վարդի գոյնով:

պոլ բերում էին մեծ պարօնի մեծ շունը,
զարծեալ չղթայով կապած և չղթայի երկու ծայ-
րերը երկու մարդիկ բռնած: Յան ճակատը, պո-
չը, թաթիկները և մարմինի վրա տեղ-տեղ ներ-
կված էին նոյնպէս վարդի գունով: Նրանից յե-
տոյ նոյն փառքով բերում էին Յան թաւաղի
որդու շունը: Յետոյ երկու ծառաներ գրկած բե-
րում էին Զաքարաւ Ալեքսոյի թաւաղի սրբների
աքաղաղները, որոնց խայտարգէտ փետուրները,
բացի իրանց բնական գոյներից, ներկված էին
և արհեստական գոյներով: Աքաղաղների պարա-
նոցից մի-մի փոքրիկ բաժնումներ էին կախված:
Յետոյ երկու ուրիշ սպասաւորներ, ձեռքներից
քարշ տուած, տասնում էին երկու վանդակներ,
որոնց մէջ մի-մի կաքաւներ էին զրած: Վան-
դակները ամեն կողմից ծածկված էին անթա-
փանցիկ կտաւով: Դրանցից յետոյ երկու ուրիշ
սպասաւորներ տանում էին երկու ուրիշ փարբեկ
վանդակներ, որոնց մէջ մի-մի լոր էր զրած:
Այդ վանդակները նոյնպէս ծածկված էին ան-
թափանցիկ կտաւով: Ոէտք է նկատել, թէ խո-
յերի, թէ չների և թէ աքաղաղների աչքերը,
բոլորին էլ կապած էին կտաւով: Այդ նրա հա-
մար էր, որ միմեանց չը տեսնեն, որ միմեանց
հետ չընտելաման, որ նրանց աչքերը յանկարծ
բաց անեն այն ժամանակ, երբ պիտի բաց թող-
նէին միմեանց հետ կռուելու:

Խոյերից, չներից, աքաղաղներից, կաքաւուե-
րից ու լորերից յետոյ գալիս էր մեծ պարօնը
իր սե նմոյդի մրա նստած: Նրան հետեւում էին
նրա թիկնապահները և ազնուականութիւնը: Շո-
լորն էլ ձիւորված էին:

Երբ այդ հանդիսաւոր պրօցեսսիան անց էր
կենում, երբ բազմաթիւ զռւուաները ու նազա-
րաները որոսում էին և երբ խառնաշխոթ ամ-
բոխը ամեն կողմից վայրինի աղաղակներով վրա
էր թափվում, այդ միջոցում հանդիսականներից
մի մարդ մօտեցաւ մեծ պարոնի մեծ շանը, այն-
պիսի մի սրաշարժ կերպարներով, կարծես, նա
առաջն անգամ հանդիպում էր հին բարեկա-
մին, մտերիմ ընկերոջը, երկար տարիների ան-
ջատումից յետոյ: Նա պատրաստվում էր զրկ-
վել սիրելի անասունի հետ, համբուրել նրան,
բայց նրա իղձը անկատար մնաց, որովհետեւ այդ
ժամանակ սե ձիւորը բաժանվելով իր խում-
բից, մի ակնթարթում վրա հասաւ, և մորակի
հարուածներով նրան հեռացրեց, գոչելով:
— Խոզի զաւակ, Բնչու ես նեղացնում շա-
նը...

Թէս շան աչքերը կապած էին, բայց խելա-
ցի անասունը, կարծես, զգաց թէ ով էր իրան
մօտեցողը, մի անհանգիստ շարժում գործեց,
զլուխը շուռ տուեց, ուզում էր վագել նրա
ետեից, փաթաթվել նրա ոտներով, յայտնել իր

սէրը ու կարօտը, բայց նրա շղթայից բռնող երկու ուժեղ մարդիկը թոյլ չը տուեցին: Մօտեցողը շան նախկին տէրը, գլուղացի Լենտօն էր, որ սև ձիաւորի մտրակներից զարհուրած, սասանված, այժմ կորել էր ամրուսի մէջ:

— լսեցիք ինչ ասեց նրան մեծ պարոնը, — լսեցիք, հարցնում էին միմեանցից ռամբկները:

— Վո՞նց չը լսեցինք, պատասխանում էին միմեանց, — ասաց «խողի զաւակ»... Հիմայ ինչ կը փքփի Լենտօն, որ մեծ պարոնը նրան ասաց «խողի զաւակ»...

Լենտօնի կերած մտրակները հաշուի չէին առնում, բայց նրան բախտաւոր էին համարում, որ նա պատիւ ունեցաւ լսելու մեծ պարոնից մի այսպիսի փաղաքշական խօսք...

Ջրաւորների խումբը, նուազածուները և մըրցող անասունները արդէն հասել էին գետի ափի մօտ: Գիծ կուրը այս տարի գարնան յորդ անձրեններից, սովորականից աւելի վարարվելով, բարձրանալով, իր պղտոր ալիքները տարածել էր ափերից շատ հեռու: Խոկ այնտեղ, ուր պիտի կատարվէր հանդէսը, նա սեղմած էր մի նեղ ձորի մէջ: Այս պատճառով զայրացած կուրը, խելագարի նման գրիգելով, մոնչելով, իր կատաղի կոհակները առաջ էր մղում, սփռելով իր շուրջը մի խուլ, որոտաձայն դղրդոց,

Ի՞նչու էին ընտրել այդ աղմկալի ձորը: Ուրիշ պատճառ չը կար, բայցի նրանից, որ այդ ձորի մէջ, մի բլուրի գագաթի վրա դեռ մնացել էին աւերակները մի հին մատուռի, ուր ամեն տարի, կանաչ կիւրակէի օրը ժողովուրգը սովորութիւն ունէր ուխտով գալ և հանդէս կատարել: Զերմեռանդ գիւղացիները, իրանց ընտանիքների հետ, մի քանի բարակ մոմեր իրանց գտակների ծայրին ցցած, դիմում էին դէպի մատուռը: Ումանը, որ աւելի ունեսր էին, մի—մի ոչխար էին տանում մատաղի համար:

Մատուռի աւերակները, ինչպէս ասեցինք, գյոնվում էին մի բլուրի գագաթի վրա: Այտեղից երևում էր նրա ամբողջ գեղագրական շըրջակայքը: Մեծ պարոնի գերղաստանը, մի քանի աղնուական ընտանիքների հետ, դեռ շատ վաղ առաւօտեան ևկել, տեղաւորվել էին մատուռից փոքր ինչ հեռու, դարեսր ընկաւզնիների հովանիների ներքոյ տարածված գորգերի վրա: Կանանց ջերմեռանդութիւնը այդ դէպի մուռակշուռ էր իրանց ամսւանների կրօնական զգացմունքին: Խշանական տան կնիկները, գեռ արել չը ծագած, ևկել էին ստառի, խկ նրանց ամսւանները եկան յետոյ, սիգապանծ նժոյգների վրա նստած: Աւելի հասարակ արարածների կը նիկները ևկել էին բորլիկ ստներով:

— Մեծ պարոնը եկաւ, ասաց այն օրվայ տօ-

նախմբութիւնը կառավարող արեգան իր հեր-
ղեցական դասին, — զնանք ընդունելու,

Բ.

Բլուրը, որի վրա գտնվում էր մատուռը, ծած-
կված էր ուխտաւորների խուռն բազմութիւնով:
Ամբողջ Մըցիսէթը այնտեղ էր, ինչպէս առում
են՝ ասեղ գցելու տեղ չը կար: Մատուռի կոր-
ծանված, քայլայված փլատակների վրա վառ-
վում էին հազարաւոր մոմեր, որ նուիրված էին
ջերմեւանդ ձեռքերով: Օդը լցված էր ծխվող
խունկի սրբազն անուշհոտութեամբ:

Բայց ուխտաւորների մեծամասնութեամնը այն-
քան չէր հետաքրքրում մատուռի սրբավայրը,
որքան այն մրցութիւնները, որ պիտի կատար-
վէին այսօր: Նրանք իրանց կրօնական պարտքը
կատարած էին համարում. մոմեր էին վառել,
խունկ էին ծխել, ոմանք մատադներ էին մոր-
թել, իսկ այժմ կամենում էին զուարճանալ:

Մեծ պարոնի գերզատանը, իր ուխտը կատա-
րած լինելով, առանձնացել էր մատուռից փոքր
ինչ հեռու, դարեսոր ընկուզենիների հովանիների
ներքոյ: Այսուղ նորաբոյս խոտերի վրա տարած-
ված էին պարսկական նախշուն գորգեր և նրանց
վրա շարված էին փափուկ մութաքամներ, պատած
մետաքսեայ գոյնզգոյն կերպամներով: Մեծ պա-
րոնի տիրուհին, վրաց «մեծ մայրը», ծալապատիկ
նստած էր Արչիլ թաւազի որդու տիկնոջ՝ Մելա-

նիայի հանդէպ, և նառդու խաղատախտակը ի-
րանց մէջտեղը դրած, նառդի էին խաղում: Նա
վրայից հագած ունէր վարդագոյն մախմուռից
քաթիբայ, որի եղերը զարդարած էին ոսկեթել
ջըհակներով, իսկ տակից հագած ունէր մանիշա-
կագոյն մետաքսից գերիայ: Մէջքի ոսկէ քամա-
րը և զլսի պածուճանքները շողոզում էին ոիչս-
պէս թանգաղին գոհարներով: Ձեռքերի բոլոր
մատների վրա մատանիներ կային: Ինքը տիրու-
հին հասակն առած կին էր, կոլոլված, պարար-
տացած մարմնով և կարմիր, ոչինչ չը արտայաց-
առող երեսով, որի հարթ, անորոշ զծերը նրան
բոլորովին գնտակի ձեւ էին տալիս:

— Եթէ մի զոյգ շէ շունենամ, ես տարած եմ,
ասաց նա ձեռքի գառ երը (թաւլի) մատների
մէջ շիտկելով: — Ո՛վ սուրբ մատուռ, դու յաջո-
ղիր, դարձաւ նա զէպի նուիրական աւերակները,
օդուութիւն հայցելով:

Նա զցեց զառը մի զոյգ շէ շտացաւ:

— Տեսար, Մելանիայ, ինչպէս շուտ կատար-
վեցաւ իմ ուխտը, բացականչեց նա ծիծաղելով:
— Ես տարայ, ես տարայ...

— Շուտ կատարվեցաւ... կրկնեց Մելանիան
նոյնպէս ծիծաղելով: — դու տարար...

Մի քանի աղնուականների կնիկներ, նոյնպէս
խայտաճախուկ հագուստներով, բոլորել էին նար-
դու շուրջը և նայում էին խաղին: Նրանք աւե-

լի ուրախացան, որ վերջապէս տիրուհին տարաւ Վելանիայից, որ յայտնի էր իր վարպետութեամբ խաղի մէջ,—ուրախացան գլխաւորապէս այն պատճառով, որ երբ նա տանուէ էր տալիս, այդուհետև նրա հետ խօսել անկարելի էր լինում:

Մի փոքր հեռու նատած էր թամարի խորթ մայրը և խօսում էր մի ալեոր պառաւի հետ, որ յարգված էր ազնուական կանանց հասարակութեան մէջ ոչ միայն իր ծերութեան պատճառով, այլ բոլորը համարում էին նրան խիստ բարեպաշտ և առափինի կին: Խօսակցութիւնը թամարի մասին էր:

—Ինձ լսիր, զաւակս, ասում էր զառաւը:— Լեանը լւաւ տղայ է, սիրուն, չնորբով, չահիլ, էլ ինչ է պակաս: Գլխի մազերի համբարքով ճորտեր ունի: Նրա ասպրանքին թիւ ու համար չը կայ: Նա սիրում է թամարին, ինձ անել է, որ սիրում է: Ինձ մօր տեղ է ընդունում նայ աղջիկդ, ուզում է, տնւր, նրանից լաւ փեսայ չես զոնի:

—Ո՞վ է պառում նրանից լաւը, պատասխանեց խորթ մայրը զայրացած ձայնով:—բայց որ այդ սատանայի ծնունդը չէ ուզում, ես ինչ պիտի անեմ:

—Եսատանայի ծնունդը ո՞րն է, չուզելն ո՞րն է: Ինչ ասել է չէ ուզում: աչքը հան, ուզել տնւր, խօսեց պառաւը նոյնպէս զայրացած ձայնով:—

Դու, ինչպէս էլ որ լինի, նրա մօր տեղն ես: Իս իրաւունք ունի քո կամքին հակառակ կենալու:

—Ասում է կը գնամ ջուրը կընկնեմ, ինձ կը խեղդեմ ու կանին չեմ ուզիւ: Միթէ գու նրա բնաւորութիւնը չես խմանում, թէ ինչ տեսակ անզգամն է:—Ես զրանից յետոյ ինչ կարող եմ անել, հարցրեց խորթ մայրը, իրան շուարած ձեւացնելով:

—Ի՞նչ կարող ես անել... կրկնեց պառաւը գլուխը շարժելով:—շատ բան կարող ես անել: Շատ աղջիկներ սկզբում ասում են: ինձ կը խեղդեմ, կը գնամ ջուրը կընկնեմ... բայց հէնց որ վիսայի մնից եկած հագուստը հագնում են, ամեն բան մոռանում են...

Թամարը այդ միջոցին հասկանալով, որ խօսակցութիւնը իր մասին է, մի քանի իր հասակակից աղջիկների հետ հեռացաւ, ասելով:

—Գիանք, Սալօմէ, դէպի այն կողմը: տեսնում ես, ինչ լւաւ բուսել են այնտեղ խոտերը: Նա ցոյց տուեց բլուրի ստորոտը, որտեղից սկսվում էր մի հարթ, կանաչաղարդ տարածութիւն, որ հասնում էր մինչև կուրի սիր:

Մանկահասակ իշխանապուն աղջիկները, արագավազ եղջերուների նման, խումբով սկսեցին վազել դէպի բլուրի ստորոտը: Նրանք ուրախ էին, որ վերջապէս աղասիկցան իրանց մայրերի,

պառաւ. տատերի և մօքքոյրերի ձանձրավի ներկայութիւնից և այժմ կարող էին աղաս շունչ քաշել:

Թամարը այսօր, տօնախմբութեան վայելչութեան համեմատ, հագել էր իր ամենաթանգազին հագուստները: Բաղուկները զարդարած էին ոսկեայ ապարանջաններով, խսկ պարանոցը սովորվ և գոյնըզգոյն յուրուններով հիւտված մանեակով: Այդքին կապած ունէր իր հանգուցեալ մօր ծանրագին քամարը, Մետաքսիայ, ծիրանեփոյն դերիայի տակից դուրս էին նսյում նրա փոքրիկ ոտիկները, սեղմված կարմիր մաշիկների մէջ, Աղջիկների խումբը ցրիւ եկաւ դաշտերի մէջ, ծաղկիներ էին որոնում: Թամարը և Սալօմէն յետ մնացին: Վերջինը Արշիլ թաւաղի որդու աղջիկն էր:

— Այն ում ոչխարներն են այնտեղ արածում, հարցրեց Սալօմէն, խօսք բաց անելով:

— Ի՞նչ ոչխարներ, պատասխանեց Թամարը, որպէս թէ ոչինչ չէ նկատում:

— Չես տեսնում, ահա այն հեռաւոր բլուրների վրա, որ ծածկված են մանր թուփերով: — Այս կողմը մաիկ տուր, տես, այս կողմը, ասաց Սալօմէն մի ձեռքով բռնելով Թամարի թերից, խսկ միւս ձեռքը պարզելով դէպի ոչխարները:

— Հիմայ տեսնում եմ... պատասխանեց Թամարը, աւելի հետաքրքրութեամբ նայելով դէպի

հօար.— բայց շատ հեռու են, դժուար է զիտենալ, թէ ում ոչխարներն են:

— Ես զիտեմ... ասաց Սալօմէն խորամանկ ժողովով, — ձեր ոչխարներն են...

— Մեր ոչխարները այս կողմը չեն բերում:

— Այսօր բերել են...:

— Ի՞նչու համար... հարցրեց Թամարը և նրա ձայնը զդալի կերպով դողաց:

— Նրա համար որ, դու այսակղ ես... ասաց Սալօմէն այժմ աւելի վճռական կերպով:

Թամարը ոչինչ չը պատասխանեց, զլուխը քարշ գցեց, բայց Սալօմէի սուր նկատողութիւնեց անյայտ չը մնաց, որ իր գեղեցիկ ընկերունու մեծ, սեղակ աչքերը լցվեցան արտասուքով:

— Ա՛խ, Թամար ջան, քո հոգուն մատաղ, ես ամենեին նպատակ չունեի վիրաւորելու քեզ, Թամար ջան, ինչու ես լաց լինում, մնդադար կրկնում էր նա, իր զրկի մէջ խորսած ունելով Թամարին, որը հեկեկալով ասաց.

— Ամենքը ծիծաղում են ինձ վրա... դռւ էլ ես ծիծաղում, Սալօմէ, ես քեզ իմ աչքի լոյսի պէս սիրում էի... ես քեզանից թագուն ոչինչ չունեի... ես բոլորը պատմեցի քեզ...: Ի՞նչ անեմ, Սալօմէ, ես էլ աշխատում եմ մոռանալ, յաւիտեան մոռանալ «Ն բ ա ն», բայց որ չնմ կարպանում, էլ ինչ անեմ...:

Օրիորդի աչքերը աւելի ևս լցվեցան արտա-
սուքով, և նա երևոը ծածկելով երկու ձեռքով,
գլուխը քարշ զցած, նստեց մի քարի վրա, չը
կամինալով այլ ևս առաջ գնալ: Սալօմէն ևս
նստեց նրա մօտ, աշխատում էր միսիթարել
նրան, սաստիկ փօշմանելով իր անզգուշու-
թեան վրա, որով աւելացրեց իր սիրելի ընկերոջ
սրտի տիրութիւնը և նորդցաւ պատճառեց նրան:
Միւս աղջիկները արդէն գնացել էին բաւա-
կան հեռու և վաղվզում էին կանաչների մէջ:

Այդ ժամանակ մատուելի մօտ հասաւ մեծ
պարոնը իր թիկնապահների և աղնուականների
հետ, բոլոր բազմութիւնը մի կողմ քաշվեցաւ
ճանապարհ բաց անելու համար: Նրանք ցած
իջան ձիաներից և խումբով դիմոցին դէպի մա-
տուելի փլատակները, նախ հաջբուրելու և ի-
րանց ուխտը կատարելու համար, որ այնուհան
սկսեն հանդէսը: Տօնախմբութիւնը կառավարող
սկսեն, եկեղեցական դասի հետ, խաչը ձեռ-
աբնդան, եկեղեցական դասի հետ, բուռվարներով, երգելով դիմաւորեցին
նրան: Մեծ պարոնը առաջ անցաւ և զիմեց
դէպի մատուելի սեղանը, որ միայն ամբողջ էր
մնացել ընդհանուր աւելածների մէջ: Նրա հետ
եկողները հետեւեցին նրան: Անդանի վրա դրած
էին խաչ, Աւետարան և մի քանի սրբոց մա-
սունքներ: Նրանց մօտ դրած էր մի թաս գան-
ձանակի համար: Մեծ պարոնը համբուրեց խաչը,

Աւետարանը, սրբոց մասունքները, զցելով դան-
ձանակի թասի մէջ մի քանի ոսկի դրամներ:
Նրա սվիտան հետեւեց նրա օլինակին: Եկեղե-
ցականները դեռ երգում էին, ուշազբութեամբ
նայելով զանձանակի թասի վրա, որ այժմ բա-
ւական նախանձելի դրութեան մէջ էր գտնվում:
Կրկին անզգամ համբուրելով սրբութիւնները, մի
քանի անզգամ անխորհուրդ կերպով խաչակնքե-
լով, նրանք հեռացան մատուելից և սկսեցին
զիմել դէպի դարենոր ընկուզենիները, ո-
րոնց նույիրական հովանիների ներքոյ հանգը-
տանում էր իշխանական գերզատանը:

Վրաց «մեծ մայրը»՝ մեծ պարոնի տիրուհին
դեռ հռանդով շարունակում էր նառդու խաղը
Մելանիայ իշխանուհու հետ: Թամարի խորթ
մայրը դեռ տաք-տաք խօսում էր պառաւի հետ:
Օրիորդները տակաւին չէին վերադարձել իրանց
զուարձալի զրօսանքից:

Միծ պարոնը մի բարձրահասակ տղամարդ էր,
այն հսկայ տղամարդերից մէկը, որ ստեղծում
է կովկասը, հետեւելով իր չեռների բարձր գա-
գաթներին: Կախեթու զինու բարերար աղդե-
ցութիւնից երեսի թրթչնած, անհարթ կաշն
բոլորունին կարմիր գոյն էր ստացել լուրջի հետ
խառնված: Նոյն գոյնը տարածվում էր նրա ա-
կանչների և խորշոմերով պատած, ծալծալ
պարանոցի վրա: Աչքերի մէջ արիւն կար: այդ

տալիս էր նրան մի առանձին վայրենի բնաւորութիւն, որը մի և նոյն ժամանակ արտայացաւում էր կատարեալ անհոգութիւն։ Բոլորպլին ածելած երեսի վրա հաստ բեխերը ձգվում էին մինչև ականջները։ Բեխերի վրա առանձին ուշադրութիւն էր դարձրած, բացի շրթունքի մաղերից, աւելացրած էր նրանց հետ և մեծ քանակութեամբ ծնօտի մաղերից, Գլխին դրած ունէր բուխարայի մե մօրթից փոքրիկ գդակ, որ թեքված էր դէպի աջ ականջի կողմը։ Հագել էր վարդաղոյն մախմուրից կարմած, կարճ քուլաջայ, դարդարած ոսկեթել եզերքով։ Մէջքը գօտէրած էր ոսկի քամարով, որից քարշ էին ընկած՝ առջնից արծաթապատ, երկայն խէնջարը, խկ կողքից, նոյնպէս արծաթով պատած, կեռթուրը։ Խաչմաղի մետաքսեայ կերպասից կարված լայն շալվարի ստորին մասերը խրած էին մոխրագոյն կաշուց պատրաստած լափչեքի մէջ, որոնք թիֆլոսի հմուտ խարազների ձեռագործն էին։ Սեծ պարոնի սլլատան թէ հագուստի ձեւերով և թէ զէնքերով չէին զանազանվում նըրանից, աարբերութիւնը միայն հագուստների նիւթերի և գոյների մէջն էր, որոնք աչքի էին զարկում իրանց վառ խայտաբղէաւութեամբ։

— Ի՞նչու այսքան ուշացար, հարցրեց մէծ պարոնի աիրուհին, նառոգու խաղատախտակը մի կողմ դնելով, և ուրախ ժպիտը երեսին ոտքի

վրա կանգնելով, երբ նրա վեհափառ ամուսինը իր խումբի հետ մօտեցաւ կանանց հաստրակութեանը։

— Ի՞նչպէս չուշանայի, պատասխանեց նա որոտաձայն խրոխտութով։ — այդ անպիտան Արչիլ ժամերով պահեց ինձ։

Արչիլը ուրախութիւնից սկսեց ծափ տալ։ Բայց տիրուհուն սաստիկ հետաքրքրում էր, թէ «անպիտանը» ինչ առեթով կարող էր ուշացնել իր ամուսնին։ Երբ բոլորը նստեցին գորգերի վրա, ինքն էլ բոնկլով իր ամուսի ձեռքից և նստացնելով մութքայի վրա, հարցրեց։

— Ի՞նչ բանի վրա էր վէճը։

Գիռ մեծ պարոնը չը պատասխանած, Արչիլ թաւադի որդին առաջ ընկաւ։

— Ի՞նչ բանի վրա պիտի լինէր, տիրուհի, ասաց նա, մի առանձին մնապարծութեամբ կանգնելով կանանց հաստրակութեան առջն, — մենք վիճում էինք այն բանի վրա, թէ ով ում որքան պիտի վճարէ, եթէ նրա խոյը յաղթող կը հանդիսանայ։

— Միթէ պիտի կառացնէք այսօր, հարցրեց տիրուհին ժպակելով, — այդ լաւ է, մենք էլ լաւ թամաշայ կունենանք, դարձաւ նա դէպի միւս իշխանուհիները, որոնք բոլորն էլ պատասխանեցին նըրա ուրախութեանը նոյնպէս ուրախ ժպիտներով։

— Պիտի կուտացնենք, պատասխանեց Արչիլ

թաւաղի որդին նոյն սնապարծով ետամբ: — Տես-
նում էք իմ խոյը, փեղ է, փեղ: Նրա հատը ամ-
բողջ Վրաստանում չը կայ:

Քոլոր իշխանուհիների աչքերը դարձան դէպի
մատուռի աւերակները, որի շուրջը այդ միջոցին
պարտևացնում էին թէ Արչիլ թաւաղի որդու
խոյը, թէ Լեան թաւաղի որդու շունը ե թէ
այն բոլոր անասունները, որ այսօր պիտի մրց-
ցութիւն կատարէին: Պայյաը նուիրական սըր-
բավայրի շուրջը պիտի կատարէիր եօթն ան-
գամ, որպէս զի օրվայ հերոսները ուժ և զօ-
րութիւն ստանային, Ելլբ այդ խորհուրդը վեր-
ջացաւ, նրանց տարան առանձին տեղերում
պահելու, մինչև հանդէսի սկսվելը: Բայց Ալէք-
սի և Զաքարա թաւաղի որդիների կաքաները,
իրանց վանդակներով մնացին զրված մատուռի
աւերակների վրա: Նրանց մօտ զրված էին և
լորերի վանդակները, որ պատկանում էին՝ մէկը
մեծ պարոնի սափրիչի որդուն, իսկ միւսը մեծ
պարոնի ժառանգին:

Հեռուից բաւական թամաշա անելուց յետոյ,
տիրուհին կրկին դարձաւ դէպի մեծ պարոնը,
հարցնելով:

— Ի՞նչով զրազ եկաք Արչիլի հետ:

— Եթէ իմ խոյը կը յաղթէ, ես կը ստանամ
Արչիլից 500 ծուխ ճորտեր իրանց հողերով, նրա
կալուածներից որը որ ընտելու լինեմ: Իսկ

եթէ Արչիլի խոյը յաղթելու լինի, նա կը ստա-
նայ ինձանից 600 ծուխ ճորտեր իրանց հողե-
րով, իմ կալուածներից որը որ ընտելու լինի,
պատասխանեց մեծ պարոնը, աւելացնելով: —
Բնչպէս է, լաւ չեմ բարիշել:

— Լաւ էք բարիշել, մէջ մտաւ Արչիլի տիկի-
նը՝ Մելանիան, — մենք հարիւր ծուխով աւելի
կը ստանանք:

— Հա, աւելի կը ստանաք, կրկնեց մեծ պա-
րոնը հեգնական եղանակով, — Բնչ պիտի անէի,
ես էլ հարիւր ծուխ աւելացրի: Քո ջնուդ մարդը
զահէս տարաւ, Բնչ պիտի անէի:

— Մելանիայի «ջնուդ մարդը» դարձեալ սկսեց
ծիծաղել և ուրախութիւնից ծափ տալ:

— Իսկ ինձ մեծ պարոնը ոչինչ չաւելացրեց,
տիրուհի, կստրատկիլով խօսակցութեան մէջ մը-
տաւ Լեան թաւաղի որդին, մի չորուցամաք երի-
տասարդ, որը իր մէջքը այնքան սեղմել էր ար-
ծաթէ քամարով, որ փոքր էր մնում մէջքը կը-
արմի:

— Դու Բնչ պիտի կուտայնես, հարցրեց տիրու-
հին, դառնալով գէպի Լեան թաւաղի որդին, —
քեզ Բնչու պէտք էր աւելացնել. Քիչ ունես:

— Փառք Աստուծոյ, քիչ չունեմ, բայց դար-
ձեսու ես չէի ցանկանայ յետ մնալ Արչիլից և
մի բան աւել չը ստանալ, պատասխանեց երի-
տասարդը փոքր ինչ վշարցած եղանակով:

— լաւ, դու Բնչ պլոտի կռուայնես, կրինեց
տիրուհին իր հարցը:

— Իմ շունը ձեր մեծ շան հետ. եթէ իմը յաղ-
թէ, կը ստանայ 300 ծուխ ճորտեր իրանց հո-
գերով, իսկ եթէ ձերը յաղթէ, կը ստանայ նոյն-
քան: Տեսնում էք, երկու կողմերի մրցանակներն
ևս հաւասար են: Ես խնդրում էի մեծ պարոնից
որ գոնէ մի 50—100 ոչխար աւելացնէ, բայց
նա հակառակի պէս ընդդիմացաւ. չէ ու չէ, ա-
սաց. ճորտեր, որքան կամենաս, կաւելացնեմ,
բայց ոչխար, մի հատ էլ չեմ կարող աւելացնել:

— Ի հարկէ, ոչխարներ չէր կարելի աւելաց-
նել, պատասխանեց տիրուհին հմուտա տնտեսա-
գէտի եղանակով,—այս տարի առանց դրան էլ
մեր իւղն ու պանիրը պակաս է, բայց ճորտեր
կարելի էր. ճորտերն Բնչ են տալիս մեզ. թող
սատկեն նրանք...

Այս միջոցին թամարի խորթ մօր հետ խօսող
պառաւը նրա ուշադրութիւնը ծածուկ դարձրեց
Լան թաւաղի որդու վրա:

— Տեսնում ես, Բնչ շուք ու շնորփով տղայ
է. դրուտ թամարի խարջն է.—երկուսն էլ սի-
րուն, երկումն էլ աղունակի պէս գեղեցիկ...

— Ի՞նչ անեմ, պատասխանեց խորթ մայրը.
— Թող քօռանայ թամարը, որ մի այդպիսի լաւ
աղին թողած, մի անպիտանի ետելից է ըն-
կած...

— Պէտք է խրատես, պէտք է նրա աչքը հա-
նես... խորհուրդ էր տալիս պատաւը:

Միւս կողմում խօսակցութիւնը այժմ դարձել
էր Զաքարայ ու Ալէքսի թաւաղի որդիների ա-
քաղակների վրա և ուրիշ երկու աղնուականների
կաքաների վրա:—Խօսում էին ու ծիծաղում,
թէ ով որքանով է զրազ եկել. մէկը ասում էր,
թէ այս ինչի աքաղաղը կը յաղթէ, միւրը այն
ինչի կաքաւին էր ջատագովում. վիճում էին,
բարկանում էին, տղաղակում էին, և մի-
մեանց կոշտ-կոպիտ սպառնալիքներ էին կար-
դում: Բայց միակ ողորմելի արարածները, —որ
այդ տաք վիճաբանութիւնների մէջ ձայն չու-
նէին, որոնք զրազի ու չների մրցութեան ա-
ռարկաններ էին զարձել.—էին ճ ո ր տ ե ր ը,
որ այժմ հեռուից զաւարձութեամբ նայում էին
իրանց իշխանների վրա, և անհամբերութեամբ
սպասում էին, թէ նրա կը սկավի հանդէսը, թէն
այդ չարագուշակ հանդէսը վճռելու էր նրանց
ամեն մէկի վիճակը և մի բոնաւորի ձեռքից
միւս բոնաւորի ձեռքն էր զցելու:

— Լաւ, լաւ, բաւական է, Բնչու էք վիճում,
հանգստացրեց բոլորին մեծ պարոնի տիրուհին,
— շուտով կը տեսնենք, թէ որը կը յաղթէ:
Հիմիկուանից Բնչու էք միմեանց բողազը ծա-
ծում...

Այս միջոցում դրան սափրիչի որդու հետ,

մատուռի կողմից, յայտնվեցաւ մեծ պարոնի մանկահասակ ժառանգը: Նա մի երիտասարդ էր մօտ քսան և հինգ տարեկան, այն թեթեամբստ երիտասարդներից մէկը, որ աճում, բարձրանում են, միշտ տղայ մնալով: Մայրը նրան տեսնելով, վեր թռաւ իր նստած տեղից, և զրկելով որդուն, հարցրեց:

— Զաւակս, գու Բնչ պիտի կոռւացնես:

— Իմ լորը, զրա լորի հետ, նա ցոյց տուեց սափրիչի որդու վրա: — Իմը էր յաղթէ, անպատճառ կը յաղթէ, մայրիկ, տես, վանդակը այնտեղ եմ զրել, մատուռի սեղանի վրա: Տէրտէրին էլ ասեցի, որ մի բան կարդայ: Անպատճառ կը յաղթէ: Ոի ամսից աւել է, որ նրան քիշմիշ էմ ուտացնում ես:

— Գուք Բնչով զրադ եկաք, հարցրեց մայրը, որին մեծ ուրախութիւնն էր պատճառում որդու գուարծութիւնը:

Փոխանակ որդուն, պատասխանեց հայրը:

— Եթէ սափրիչի որդու լորը յաղթելու մնի, ես խոստացել եմ նրան թաւադութիւն տալ, իսկ եթէ իմ որդու լորը յաղթելու մնի, չեմ իմանում, թէ Բնչ պիտի ստանայ սափրիչի որդուց:

— Բնչ պիտի ստանամ, ասաց ժառանգը ծիծաղելով: — Նա Բնչ ունի որ ես մի բան ստածաղելով: — Նա Բնչ ունի որ ես մի բան ստածաղելով:

Նաև: Այս էլ բաւական է, որ իմ լորը կը յադթէ, ես ոչինչ չեմ ուզում:

Մանկահասակ ժառանգի մեծահոգութիւնը զարմացրեց բոլորին: — Ղօչաղ, ղօչաղ... ձայն տուեցին ամեն կողմից և սկսեցին ծափահարել:

Յ.

Մրցութիւնները պիտի կատարվէին ճաշկց յետով, այդ պատճառով մեծ պարոնը շտապեցրեց, որ ճաշը շուտ պատրաստեն:

— Տղերք, զարձաւ նա դէպի թաւադի որդիները, — գուք էլ օդնեցէք:

Դաշտային խոհանոցը շատ հեռու չէր նրանց նստած տեղից: Դրասւմ, բաց օղի տակ, ճաշ պատրաստելը վրացու համար, թէ ազնուական վիներ նա և թէ հստարակ գիւղացի, ամենամեծ զուարձութիւններից մէկն է: Ոչինչ այնքան բաւականութիւն չէ պատճառում վրացուն, որպէս իր ձեռքով եփելը և իր ձեռքով ուտելը: Յաւադի որդիները, ձեռքները մինչեւ արմուգները ծալած, վազեցին դէպի խոհանոցը: Լամնը սեղանի ոփրոցը խլելով, բերեց, տարածեց գորգերի վրա: յիտոյ վաղեց, լաւաշների ահազին կապոցը զրկելով, բերեց շարեց սեղանի շուրջը: Մեծ պարոնի ժառանգը կանաչեղինները տարաւ և սկսեց լուանալ մերձակայ աղբիւրի մէջ: այդ պատճառում էր նրա մօրը չափաղանց ուրախութիւն, որ իր որդին էլ մի բանով զբաղված է: Այժմիը

խորովածի շամիուրները սկսեց դարսել կրակի վրա, անդադար այս սպասաւորին, այն աղախնին ուշունցներ տալով, թէ միսը մանր են կոտորել: Զաքարան խաշամայ միսը կաթսաներից գուրս էր տալիս, լցնում էր պղնձէ պնակների մէջ, և մի կողմիցն էլ ինքը ճաշակելով, բարձր ձայնով բացականչում էր. «Ա՛յս, քո հոգուն մատաղ, ինչ լաւ եփվել է»... Ալեքսին մեծ պարոնի մառանից բերած դիմիները լցնում էր լիտրաների մէջ, նախապէս ինքը բոլորի համը առնելով և ամեն մէկի յատկութիւնները առանձին-առանձին գովասանելով: Մէկ ուրիշը բոլոր ձայնով գոռում էր. «Աղը ըրտեղ է, ձեր տունը չը քանդվի, աղ չը կայ, աղը մոռացել են շանորդիքը»...

Սպասաւորները, աղախինները, որոնք առաջ դաշտային խոհանոցի մօտ աշխատում էին, նկատելով, որ այդ զբաղմունքը բաւականութիւն է պատճառում իրանց տէրերին, ամենայն խոնարհութեամբ թողնում էին շատ պատրաստութիւններ նրանց կատարելու: Այդ տեսնելով թաւազի որդիների տիկինները, նրանց քնքուշ քոյրիկները, իրանք էլ նախանձեցաւ, սկսեցին միւս կողմից այս և այն սպասաւորութիւնը կատարել, Մի բոպէում բոլոր սեղանակիցները ոտքի վրա էին, և ընդհանուր շարժողութեան մէջ, մինը միւսի ձեռքից գործը խլում էին: Մելանիան գիւնի խմելու եղջիւններն էր մաքրում: Պառաւ իշ-

խանուհին, վերջացնելով իր երկար ու ձիգ խօսակցութիւնը թամարի խըրթ մօր հետ, անդադար հարցնում էր մեծ պարոնից, «առաջ խորովածը լաւ է որ տան, թէ խաշաման»: Բայց երկուսն էլ մի վճռական եղանակացութեան չէին համար, որովհետեւ կարծիքները երբեմն թեքվում էին խորովածի կողմը, իսկ երբեմն խաշամայի կողմը: Թամարի խորթ մայրը պահիլ էր դարսում փաքրիկ նալբաբիների մէջ: Ո՞նդործ չը մնաց և մեծ պարոնի տիրուհին: այդ վերջինն էլ որպէս զի մի բանով զբաղված լինի, դերիալի փեշերը վեր քաշած, նստած տեղում սոխ էր կոսորում, բնչի հասար, —ինքն էլ չը գետէր:

Մի քանի բոպէի մէջ սեղանը պատրաստ էր: Գինու լիտրաները շարված էին նրա չուրջը. Լաւաշների վրա զիզված էին խորովածի կոյտեր: պղնձէ պնակների մէջ լցված էր եփված խաշաման: Այստեղ կար մեծ քանակութեամբ կարմիր ձու, որը զատկի յիշատակը պահպանելու համար դեռ մոռացված չէր: այստեղ կար խաշած ձուկ, որ ըրջակայքի ձկնորսները ընծայ էին բերել մեծ պարոնին:

— Ո՞ւր են օրիորդները, ոչ մէկը չէ երեսում, իր շուրջը նայելով, հարցրեց տիրուհին:

— Երիւ, զնացել են զբօննելու, պատասխանեց պառաւ: իշխանուհին, —իրանց հաւակաւմ մէնք

Էլ էինք մոռանում հայն ու զինին և շուտ սեղանի մօտ չէինք գալիս:

—Տղերք, այժմ նստեցէք, ձայն տուեց մեծ պարոնը. —խորովածը սառչում է.

Թաւաղի որդիները շարվեցան սեղանի շուրջը ինչպէս որ պատահեց. նբանց հետ խառն նստեցին և արկինները: Նրանք վեր էին առնում միսը, և հում կանաչեղինների հետ փաթաթելով լաւաշի մէջ, ուտում էին: Կարծես այդ հասարակութիւնը գեռ դանվում էր մարդկային կենցաղավարութեան այն շրջանի մէջ, երբ մարդը գեռ չէ մոռացել խոտ ուտելը, իսկ նոր է սովորում եփած մսի գործածութիւնը:

—Զեղ տօլուբաշի ընտրեցէք, ասաց մեծ պարոնը:

—Արչիլը, Արչիլ... բարով կառավարէք, Արչիլ, աղաղակեցին ամեն կողմից, լեցնելով իրանց եղջիւրները:

Կանանց հասարակութիւնը բողոքեց Արչիլի ընտրութեան դէմ, որովհետեւ նա սաստիկ խիստ էր և ձայն տուեց Լեանի ընտրութեան մասին: Վիճաբանութիւնը տեսց մի քանի բոպէ, վերջապէս Արչիլը ձայների մեծամասնութիւն ստացաւ: Այդ սաստիկ վիրաւորեց պառաւ իշխանութեան, որը ցանկանում էր Լեանին տօլուբաշի տեսնել: Տօլուբաշին սեղանի միապետն է. բո-

լորի ճաշակը, լուղորի ախորժակը կախված է նրա կամայականութիւնից:

—Սաղանդարները թող զան, հրամայեց տօլուբաշին:

Ոպասաւորները վաղեցին նուագածունեցին կանչելու, և քանի բոպէից յետոյ զուռնաշինների, նաղարաշինների խումբը պատրաստ էր սեղանի մօտ:

—Դէ, մի լաւ քօրողի ածէք, հրամայեց տօլուբաշին:

Կուագածուները սկսեցին ածել քօրողլու եղանակով: Ուխտաւորների հետաքրքիր բաղմութիւնը, լսելով զուռնայի ձայնը, ամեն կողմից մօտ վաղեցին, և նստելով խոտերի, քարերի վրա, սկսեցին խորին հոգեղմայլութեամբ լսել և մեծ բաւականութեամբ թամաշա սնել, թէ որպէս էին զուարձանում երկրի տէքերը:

Խշանական սեղանից փոքր ինչ հետու, մատուեի շուրջը, այսուեղ և այնտեղ, մերկ գեանի վրա նստած էին հասարակ մահկանացուներ և իրանց գերդաստանի հետ վայելում էին իրանց աղքատիկ ձաշը: Նրանք ուրախ էին այնքանով ես, որ գոնէ հետուից լսում են մեծ սպարոնի զուռնայի ձայնը:

Իսկ տօլուբաշին խիստ վերեկց սկսեց կենաց բաժակները: Կախ հրամայեց խմել Աստուծոյ կենացը, յետոյ Յիսուսի կենացը, յետոյ Քրիս-

տոսի կենացը նա ջիսուս Քրիստոսին առանձին-առանձին անձնաւորութիւններ էր համարում.) զբանցից յետոյ հրամայեց խմել մեծ պարոնի կենացը: Նուագածուները դեռ շարունակում էին քօրողու եղանակով:

—Եղջիւրները լցրէք, հրամայեց տօլուբաշն: Բոլորը հնագանդվեցան նրա հրամանին:

—Այդ էլ խմում ենք մեր տիրուհու կենացը: Բայց սպասեցէք, մեծ պարոնը պիտի պարգայ:—Համեցէք, դարձաւ նա դէպի մեծ պարոնը:

Բոլորը, եղջիւրները ձեռքներին բռնած, սպասում էին, Մեծ պարոնին թէս փոքրը ինչ անվայել էր բազմութեան առջև պար գալ, բայց ինչ պէտք էր սնել. տօլուբաշի հրամանն էր, պէտք էր կատարել, ուր մնաց, որ խմում էր նրա թանգարին տիրուհու կենացը: Նա վեր-կացաւ:

—Լեկողեար ածեցէք, հրամայեց տօլուբաշն նուագածուներին:

Նրանք ոկտեսցին լեկողեար ածել: Բազմութիւնը այժմ աւելի մօտեցաւ իշխանական սեղանին: Ամեն կողմից ամբոխը վրա էր թափվում:

Եթէ սուրբ դիրքը տալիս է մեղ մի հետաքրքիր օրինակ, թէ ինչու Դաւիթը, Խորայէլի մարգարէն և թագաւորը, ներչնչված մի որբազան ոգեսորութեամբ, պար էր զալս տապահակ

ուխտի առջե, — ոչ սակաւ հետաքրքիր էր տեսնել, թէ ինչպէս վրաց երկրի տէրն ու իշխանը, կախեթու գինու աղղեցութեան ներքոյ, սկսեց իր պարը: Հազարաւոր ձեռքեր ծափ էին տալս, բազմաթիւ զուռնաներ և նաղարաններ որտոսում էին: Այդ միջոցին սեղանակից տիկիններն էլ վեր առին իրանց մօտ զրած դայիրաններն ու թմբուկները, 'սկսեցին ածել: Նուագարանների հնչյունների հետ միախառնվում էին և հիացած բազմութեան խառնաձայն աղաղակները, կազմելով խիստ անախորժ, վայրենի ներգաշնակութիւն:

—Բաւական է, հրամայեց տօլուբաշն:

Նուագարանները գաղարեցին, և մած պարոնը բոլորին զլուխ տալով, նստեց իր տեղը: Գինու եղջիւրները գատարկվեցան:

Տիրուհու կենացը խմելուց յետոյ տօլուբաշն հրամայեց խմել ժառանգի կենացը: Այժմ պիտի պար գար նրա մայրը: Տիրուհին յայնի էր որպէս լաւ պար նկազ: Նբան սիրեց, նրա հետ ամուսնացաւ մեծ պարոնը միայն նրա լաւ պար գալու համար, թէս այժմ մարմնի չտիտղանց ծանրութիւնը արգելում էր նրան առաջնաց թեթեւ պտոյտները գործել իր պարի մէջ: Այսուամենայնիւ, տիրուհին այս անդամ ևս զարմացրեց բոլորին իր հիանալի պարով:

Նուագածունները շարունակում էին ածել զար-

տոսի կենացը նա Յիսուս Քրիստոսին առանձին-
առանձին անձնաւորութիւններ էր համա-
րում.) զրանցից յետոյ հրամայեց խմել մեծ
պարոնի կենացը. Նուագածուները դեռ շարու-
նակում էին քօրողլու եղանակով:

—Եղջիւրները լցրէք, հրամայեց տօլուքաշն:
Բոլորը հնագանդվեցան նրա հրամանին:
—Այդ էլ խմում հնաք մեր տիրուհու կենացը:
Բայց սպասեցէք, մեծ պարոնը պիտի պար-
գայ:—Համեցէք, դարձաւ նա զէպի մեծ պա-
րոնը:

Բոլորը, եղջիւրները ձեռքներին բռնած,
սպասում էին, Ոեծ պարոնին թէս փոքր ինչ
անվայել էր բազմութեան առջև պար գալ, բայց
ինչ պէտք էր անել. տօլուքաշի հրամանն էր,
պէտք էր կատարել, ուր մնաց, որ խմում էր
նրա թանգագին տիրուհու կենացը. Նա վեր-
կացաւ:

—Եկղեգար ածեցէք, հրամայեց տօլուքաշն
նուագածուներին:

Նրանք սկսեցին լեկղեգար ածել: Բազմու-
թիւնը այժմ աւելի մօտեցաւ իշխանական սե-
ղանին: Ամեն կողմից ամբոխը վրա էր թափվում:

Եթէ սուրբ դիրքը տալիս է մեղ մի հետաքրքիր
օրինակ, թէ ինչպէս Դասիթը, Խորայէլի մարգա-
րէն և թագաւորը, ներչնչված մի որբազան
ոգեսրութեամբ, պար էր զալիս տապահուի

ուխտի առջև, — ոչ սակաւ հետաքրքիր էր տես-
նել, թէ ինչպէս վրաց երկրի տէրն ու իշխանը,
կախեթու գինու աղղեցութեան ներքոյ, սկսեց
իր պարը: Հաղարաւոր ձեռքեր ծափ էին տալիս,
բազմաթիւ զուռնաներ և նաղարաններ որոտում
էին: Այդ միջոցին սեղանակից տիկիններն էլ
վեր առին իրանց մօտ դրած դայիրաններն ու
թմբուկները, 'սկսեցին ածել: Նուագարանների
հնչւնների հետ միախառնվում էին և հրացած
բազմութեան խառնաճայն աղաղակները, կազմե-
լով խմտ անախորժ, վայրենի ներգաշնակու-
թիւն:

—Բաւական է, հրամայեց տօլուքաշն:
Նուագարանները գաղարեցին, և մեծ պարոնը
բոլորին գլուխ տալով, նստեց իր տեղը: Գինու
եղջիւրները գատարկվեցան:

Տիրուհու կենացը խմելուց յետոյ տօլուքաշն
հրամայեց խմել ժամանգի կենացը: Այժմ պիտի
պար գար նրա մայրը: Տիրուհին յայտնի էր որ-
պէս լաւ պար եկող: Նբան սիրեց, նրա հետ
ամուսնացաւ մեծ պարոնը միայն նրա լաւ պար
գալու համար, թէս այժմ մարմնի չափաղանց
ծանրութիւնը արգելում էր նրան առաջիւց թիթե
պատումները գործել իր պարի մէջ: Այսուամեն-
նայնիւ, տիրուհին այս անդամ ևս զարմացրեց
բոլորին իր հիանալի պարով:

Նուագածունները շարունակում էին ածել զո-

Նաղան եղանակները, կենացների հերթը հետք-
հետէ անցնում էր սեղանակիցների մէկից միւ-
սին, Տօլուբաշին ոչ մէկի «խաթըը չէր կոս-
րում». իւրաքանչիւրի կենացը խմելու ժամա-
նակ հրամայումէր ածել և ստիպումէր սեղանա-
կիցներից սէկին կամ պար գալ կամ երգել. Այս-
պէս թաւաղի որդիները համ ուտում էին, համ
խմում էին, համ երգում էին, համ պար էին զա-
լիս. Այդ չէր արգելում նրանց երբեմն վերկե-
նալ նստած տեղից, վազել գէպի դաշտացին խո-
հանոցը, կրակի վրայից վեր առնել խորովածի
երկու տաք շամփուրներ, և երկու ձեռքով բըռ-
նած, ուրախ-ուրախ բերել, և բոլորին «թաւա-
ղայ» անելով, ասել.

— Համեցէք, համեցէք, ինչ լաւն է...

Միւսները ձեռքները մեկնում էին, շամփու-
րից դուրս էին քաշում խորովածը, և արինը
ու իւղը կաթկաթելով, զնում էին իրանց բե-
րանները, ասելով.

— Փահ, փահ, փահ... շատ լաւն է, շատ լաւը...

Թէ այր և թէ կին դտանվում էին անսահման
բերկրութեան մէջ, Նրանց մէջ դադարել էլ մը-
տաւորը, այժմ գործում էր միայն գրգռված
զգացմունքը, Տօլուբաշին արդէն վերջացրած լի-
նելով բոլորի կենացների խմելը, այժմ իրա-
ւունք տուեց սեղանակիցներին իրանց ընտրու-
թեամբ առաջարկել նոր կենացներ. Այդ կենաց-

ների ժամանակ, —որ կամաւոր էին, որ զուրկ
էին պաշտօնական բնաւորութիւնից, —ուովու-
թիւն կար, այն անծը, որի կենացը խմիւմ էր,
պարտաւոր էր «պուշտի» անել բոլորի հետ:
Այսպիսի բաժակներ խմկում էին ըստ մնձի մա-
սին գեղեցիկ սեռի կենացը:

— Բոլոր կնիկներից թուլ եմ տալիս ընտրել,
բացի իմ կնկանից, ասայ տօլուբաշին ծիծաղե-
լով:

Մելանիան կարմրեց: Նրա ամուսին այրի հա-
նաքը թելաղբեց մեծ պարոնին առաջարկել
հէնց նախ գեղեցիկ Մելանիայի կենացը: Նա
վերը բաժակը ձեռխն, չնորհալի կերպով վեր
կացաւ, և բոլորի հետ «պուշտի» անելուց յե-
տոյ, գլուխ տուեց և ապա խմեց:

— Այդ Աստուած կը վեր առնի, որ իմ կնոջը
իմ աչքի առջև համբուլում են, ասում էր տօ-
լուբաշին, ձեռքները գէպի երկինք բարձրացնե-
լով: — Եկ, Մելանիայ ջան, մօտ եկ, քո հոգուն մա-
տաղ, եկ ես էլ համբուլեմ, աղաչում էր նա իր
տիկնոջը, Բայց տիկինը չը մօտեցաւ նրան, ան-
վայել համարելով հրապարակաւ իր ամուսինի հետ
համբուլվելը:

— Տեսնո՞մ էք, ինչ «թարս» բաներ են այդ
կնիկները, առում էր տօլուբաշին, այժմ ձեռ-
քերը իր ճնկների վրա խփելով: — Հրապարակաւ

ուրիշների հետ կը համբաւրվեն, բայց իրանց ա-
մուսնի հետ ամօթ կը համարեն:

Բոլորը ծիծաղեցին:

Այդ միջոցին Լևան թաւաղի որդին, իր շուր-
ջը աչք ածելով, որոնում էր Թամարին: Նա մը-
տածում էր առաջարկել նրա կենացը, որ զրա-
նով առիթ ունենայ իր վաղուց ցանկացած համ-
բուրը քաղել նրա սիրուն շրթունքից: Բայց Թա-
մարը չերեցաւ. օրիորդներից գեռ ոչ մէկը չէր
վերադառնել զբոսանքից: Նա առաջարկեց պա-
ռաւ իշխանուհու կենացը, որը խիստ գոհունա-
կովետամբ վեր բարձրացաւ իր աեղից և սկսեց
իր չոր ու ցամաք շրթունքը կպցնել բաղմա-
կանների շրթունքներին: Երբ մօտեցաւ նա տո-
լուրաշուն, վերջինս ծիծաղելով ասաց:

—Եթէ մի «խերով» բան Անէիր, ինձ մօտ
չէիր գայ:

Մինչ այսաեղ երկը պետերը զուարձանում
էին, մինչ զուռնան և նաղարան որոտում էր,
ուխտաւորների բազմութեան մէջ, պարկու-
պկուկը թեքի տակը դրած, զանդաղ քայլերով
շրջում էր ժողովրդական բանաստեղծը: Ամենի
մօտ ածում էր նա, ամենի մօտ երգում էր, և
ամեն աեղ նրան տալիս էին կամ մի պատառ
հաց, կամ սև վող: Նա իր շրջանը կատարելով,
մօտեցաւ իշխանական սեղանին, և որպէս մարմ-
նացած բողոք, սկսեց երգել:

«Ճըտիկ, ճըտիկ, նախշուն վեմարիկ, մեծացիր,
«Քեղ կուտ կը տամ, շուտ մեծացիր, չաղացիր,
«Երբ զըզիրը տուրքը կուզէ տարեկան,
«Քեղ պարոնին ընծայ կը տամ պատուական:

«Հորթիկ, հորթիկ, նախշուն մորթիկ, մեծացիր,
«Քեղ խոտ կը տամ, շուտ մեծացիր, չաղացիր,
«Երբ զըզիրը տուրքը կուզէ տարեկան,
«Քեղ պարոնին ընծայ կը տամ պատուական:

«Աղջիկ, աղջիկ, սիրուն աղջիկ, մեծացիր,
«Քեղ հաց կը տամ, շուտ մեծացիր, չաղացիր,
«Երբ զըզիրը տուրքը կուզէ տարեկան,
«Քեղ պարոնին ընծայ կը տամ պատուական:

«Եղիկ, եղիկ, իմ քաջ եղիկ, աշխատիր,
«Վարը վարիր, ցանքը ցանիր, կալ կասիր,
«Երբ զըզիրը տուրքը կուզէ տարեկան,
«Ես պարոնին ընծայ կը տամ պատուական:

«Կնիկ, կնիկ, սիրուն կնիկ, աշխատիր,
«Մանը մանիր, կարը կարիր, շուտ պածիր,
«Երբ զըզիրը տուրքը կուզէ տարեկան,
«Ես պարոնին ընծայ կը տամ պատուական:

«Ոստիկ, աստիկ, փայլուն աստիկ, խաւարիր,
«Ինձ քեկ մօտ տար, այս կեանքից աղատիր,
«Շատ գործեցի, վաստակեցայ, յոզնեցայ,
«Խոկ պարոնիս գոհացնել ես չը կրցայ:

Նա աւարտեց իր երգը։ Բայց ոչոք նրա վրա ուշադրութիւն չը դարձրեց։ Նոս քնարի տխուր հնչիւնները խլացան, անհետացան զուարձառէր աղնուականների ընդհանուրը աղմուկի մէջ...

Ժ.

Կէսօրից բաւական անցել էր արգէն։ Ծառերի ստուերները դարձել էին դէպի արենելը։ Սիկօն, մեծ պարոնի հովուապետը, իր երկայն ցուպը նկատել տուած նոյնպէս երկայն իրանին, անշարժ արձանի նման կանգնել էր մի բարձրաւանդակի վրա և այնտեղից արծում աչքերով նայում էր դէպի հեռաւն, ուր ուխտաւորների բազմութիւնը դեռ ամբոխվում էր, դեռ խլրտում էր մասուսի շուրջը։ Կարծես, այդ հեռաւորութիւնից նա որոշում էր բոլոր անձնաւորութիւնները, ճանաչում էր բոլոր երեմները, ամեն մէկի հետ խօսում էր, և ամենին ողջունում էր, ասելով։ «ուզորմած կենայ»... Այդ բարեկարաչական տեսարանը այն աստիճան զբաւել էր ջերմեռանդ հովուին, որ նա ամենեին չէր նկատում իր սիրելի ոչխարհներին, որոնք նրա շուրջը սփոված, մեծ ախորժակով արածում էին։ Նա տեսաւ մէկին, որ ձորի միջով անցնում էր։

—Գաւիթ, Գաւիթ, գոչեց նա այնպիսի մի ձգական ձայնով, կարծես, նրա ձայնը հազարաւոր հնչիւնների բաժանվելով, մինը միւսին առաջ մղեցին և հասան մինչեւ Գաւիթի ականջները, որ

բաւական հեռաւորութեան վրա, ձորի միջով գընում էր։

Նա դարձաւ դէպի կոչող ճայնը և տեսաւ հոգուապետին վարձրաւանդակի վրա կանգնած։ Մի քանի վայրկեան մնաց իր տեղում անշարժ, դժուարանում էր վճռել, արդեօք գնալ նրա մօտթէ շարունակել իր ճանապարհը, որի որ կողմ տանելը ինքն էլ չը վիտէր։ Նա ուզզեց իր քայլերը դէպի հովուապետը։

—Ո՞րտեղ ես սատանայի նման կորել այսօր, չես երեւմ, հարցրեց Սիկօն իր սովորական քնքութեամբ։ — առաւօտից ես քեզ չեմ տեսել։

Բայց Գաւիթի վրդովված սրախն, նոյն բովի, ում հազիւ թէ կարող էին որ և իցէ ուրախութիւն պատճառել իր բարեկամի քնքութիւնները։ Նա ոչինչ չը պատասխանեց։

—Հասկանում եմ... շարունակեց հովուապետը խորհրդաւոր ճայնով։ — գնացել էիր աղջկիներին մտիկ տալու, հա... հասկանում եմ... ես էլ քո հասակում աղջկիներից պոկ չէի գալիո։

—Ես ոչ մի տեղ չեմ գնացել, պատասխանեց սլատանին, և նստեց մի քարի վրա, այժմ միայն զգալով, որ սաստիկ յոդնած է։

Հովուապետը նոյնպէս նստեց նրա մօտ նոյն քարի վրա։

—Ի՞նչպէս ոչ մի տեղ չես գնացել, հարցրեց նա, — միթէ դու չը դնացիր համբուրելու։

— Զը գնացի, պատասխանեց պատանին անուշաղիր կերպով և սկսեց նայել բաղմաթիւ կարմիր պողոմների վրա, որոնց սկ բծերը աւելի էին հետաքրքրում նրան, քան հովուազեափ հորց ու փորձը:

—Դու չը գնացիր համբուրելու, կրկնեց հովուազեաը այժմ բաւական բարկացած կերպով, —ուրեմն դու վրացու Աստուածը, վրացու Յիսուս Քրիստոսը, վրացու Խաչն ու Աւետարանը չես ընդունում:

Վերջին հարցերը շարժեցին պատանու ծիծաղը: —Ընդունում եմ, պատասխանեց նա. —Վրացու Աստուածը, Յիսուս Քրիստոսը, Խաչն ու Աւետարանը, մի և նոյնն է, ինչ որ հայերինն է:

— Ե՞նչպէս թէ մի և նոյն է. վրացու Աստուածը ուրիշ է, հայինը ուրիշ է. վրացու Քրիստոսը ուրիշ է, հայինը ուրիշ է.

—Վրացու Աստուածը վկացի է, հայինը հայ է, նրա խօսքը կարեց պատանին ծիծաղելով:

—Ապա, ինչ ես կարծում. դրուստ այսպէս է, ասաց հովուազեաը, զարմանալով պատանու լարբացարութեան վրա. —Վրացու Աստուածը վրացի է, հայինը հայ է. եթէ չնո հաւատում, գնամբ տէրտէրից հարցրու, նա էլ այդպէս կասի:

—Գիտեմ, որ նա էլ այդպէս կասի... պատասխանեց պատանին, աշխատելով վերջ տալ հովուի աստուածաբանական քննութիւններին, ու-

րովհետեւ նրա ուշաղբութիւնը դարձաւ այդ լուսակում գէպի ձորը, որտեղից անց էին կենում մի խումբ աղջիկներ: Նա վեր կացաւ:

—Ո՞ւր ես զնում, հարցրեց հովուապետը:

—Գնում եմ համբուրելու... ասաց պատանին Ժպտելով, և աչքի տակով հետեւելով աղջիկների խումբին:

Հովուապետը հալած իւղի տեղ ընդունելով պատանու խօսքը, և չը հասկանալով նրա երկդիմի իմաստը, կարծեց, թէ իրան արգէն յաջողուցաւ վրացու հաւատքի բերել իր անհաւատ օդնականին, և փանատիկոսի ուրախութեամբ զրկելով նրան, ասաց.

—Գնա, զաւակս, գնա համբուրիր, ես այսուեղով սչխարները կը պահեմ. թէ փող չունես, փող էլ կը տամ քեզ. մի զոյգ մոմ առ, վարիր սեղանի վրա:

Այս ասելով, հովուապետը հանեց իր մախաղի միջից մի քանի սկ փող և տուեց պատանուն: Դաւկիթը չնորհակալութեամբ ընդունեց փողը և զիմեց գէպի մատուռը: Անգնելով ձորը, նա դուրս եկաւ նեղ ճանապարհի վրա, որ տանում էր գէպի ուխտառեղը: Ճանապարհի վրա ոչ ոք չը կար, նա տեսաւ մի գոսացած մուրացկան, որ ծնկների ու ձեռքերի վրա սողալով, քարշ էր գալիս գէպի ուխտառոները:

— Ո՞ր կողմից, եղբայր, հարցրեց նրանից պատահնիւ:

— Քաղաքից, պատասխանեց մուրացկանը և շարունակեց սողալ:

— Ի՞նչու այսպէս ուշ, հարցրեց պատանին, սասակիկ խղճահարութեամբ:

— Այդ ոտներով շատ հեռուն չես գնոյ, ասաց մուրացկանը, ցոյց առալով տախտակից շինված հողաթափները, որ հազել էր ձեռքերի թաթերի վրա:

Պատանին ձկեց նրան հովուապետից ստացած ուն վողերը և հեռացաւ: Նա գուրս եկաւ դէպի մատուռը տանող նեղ ճանապարհից և մտաւ այն ձորի մէջ, որ կողմից մի քանի րոպէ առաջ անցաւ աղջիկների խումբը: Նրանք շատ չեին հեռացել, ամեն մի ծաղիկ, ամեն մի թիթեռնիկ, ամեն մի վտակ իր պայծառ, ուրախաձայն հոսանքով գրաւում էր, հրապուրում էր, նրանց իր մօտ էր կանչում: Պատանին այժմ այնքան մտացել էր, որ կարսդանում էր հեռուից ճանաչել նրանց, թամարը Սալօմէի հետ առանձել նացած, գնում էին բոլորովին բաժանված ամբողջ խմբից: Պատանին, կարծես, լսում էր նըրանց ձայնը և հասկանում էր նրանց խորհրդաւոր քրթմնջոցը, Բայց իսկապէս նա ոչինչ չէր լսում: միայն նրա սրտում խօսում էր թամարի սէրը: Նա մտաւ թուփերի մէջ, որ չը նկատվի:

Ակսեց մի կողմից կամաց-կամաց հետեւել նրանց, Խիռ մացաների միջով, անցքը բաւական դժուարէն էր: Նա չէր նկատում, թէ որպէս պատառութում էր իր հագուստը: Նա չէր զգում, թէ որպէս թփերի վշտը սատերը զարկվում էին իր երեսին: Նա երջանիկ էր և գոհ, որ զոնէ հեռուցց տեսնում է թամարին:

Աղջիկների խումբը զիմում էր դէպի կուրի ափը. ալդ ձորը տանում էր ուղիղ դէպի կետի կողմը: Նրանք ցանկանում էին հայել յորդացած զետի վրա, ցանկանում էին տեսնել թէ որքան բարձրացել է այս տարի կուրը: Ի՞նչ զուարծութիւն էին գանում հեղեղատի պըդտոր տլիքների մէջ: Պատանին, չը դուրս դաւով իր դարանից, շարունակում էր հետեւ նրանց:

Այդ միջոցին մատուռի մօտ արդէն սկսվում էին մրցութիւնները: Բազմութիւննը հաւաքվել էր մի հարթ տափարակի վրա: Գուրս էին բերել մեծ պարոնի և Արչիլ թաւաղի որդու խոյերը:

— Յետ քաշվեցէք, յետ քաշվեցէք, ձայն էին տալիս բազմութեանը:

Բազմութիւնը յետ քաշվեցաւ և հարթ տափարակի վրա բացվեցաւ հրապարակի նման մի տեղ: Նրա միջնավայրում կանգնեցրել էին երկու խոյերը միմեանցից փոքր ինչ հեռու: Ազնուական-

ները շրջապատել էին նրանց։ Բաղմութիւնը հեռուից նայում էր, խոյերի աչքերը դեռ կապված էին։ Ծառաները բաց արին նրանց աչքերը, և երկու ախոյեանները խոյոյն տեսնելով միմեանց, արձակեցին մի խուլ, որոտաձայն մըսընչիւն։ Մեծ պարոնը կանգնած էր իր խոյի կողմում, իսկ Արչիլ թառափի որդին կանգնած էր իր խոյի կողմում։ Նրանք, չը վստահանալով ծառաների հմտութեան վրա, սկսեցին իրանք կարգադրութիւններ անել։ Խոյերը անհանդիստ կերպով տասանիւմ էին, այս կողմ և այն կողմ էին յարձակվում, աշխատելով իրանց ըստթանները կտրել, որ պինդ բռնված էին ծառաների ձեռքում, բայց չէին կարողանում։ Այդ արգելքը աւելի զայրացրեց նրանց։

— Ես մօտ եմ բերում, Արչիլ, ձայն տուեց մեծ պարոնը։

— Ես էլ մօտ կը բերեմ, պատասխանեց նա, — միայն կամաց-կամաց, չը թողնէք, որ յարձակում գործէ։

Դրաքանչիւր կողմից խոյերին սկսեցին կամաց-կամաց մօտ տանել, մինչեւ բոլորովին հասան միմեանց, նրկու ախոյեանները նախ սկսեցին հոսուուել միմեանց, յետոյ մեծ պարոնի խոյը անցաւ Արչիլի խոյի գաւակի կողմը. վերջիննը անսպատութիւն համարելով այդ, խոյոյն շուռ եկաւ և իր եղիւրով խթեց նրա կողքը. Այդ սաստիկ կատա-

զեցրեց մեծ պարոնի խոյին, որ նոյն կերպով պատասխանեց նրան։

— Այժմ յետ քաշեցէք, ձայն տուեց մեծ պարոնը, չինքը բանելով իր խոյի շղթացից և մի քանի քայլ հեռացնելով։

Արչիլը նոյնպէս յետ տարաւ իր խոյին։ Երկու ախոյեանները կանգնած էին միմեանց հանդէպ, տասն քայլ հեռաւորութեան վրա։ Նրանք այն ուստիձան դայրացած էին, որ այժմ կարելի էր նրանց շղթանները բաց անել, աղաստ թողնել, որ յարձակումներ գործեն։

Առաջին յարձակումը թոյլ էր։ Նրանից յետոյ իրանք խոյերը յետ-յետ քաշվեցան, և ոռումքի արագութեամբ վաղելով միմեանց վրա, զլուխ գլխի և եղջիւր եղջիւրի զարկեցին։ Չորս կողմից լովում էին քաջալերական ձայներ։ — Այ, զօշազ, այ, զօշազ, տառում էր մեծ պարոնը իր խոյին։ Նոյն խրախոյմներով ողմորում էր Արչիլը իր խոյին։

Խոյերը կրկին յետ-յետ քաշվեցան, և այժմ աւելի լայն տարածութեան վրա կանգնելով, կրկին մի տևելի սաստիկ յարձակում գործեցին, ճակատ ճակատի զարկելով։ Եթէ քար վներ նըրանց վլուխների փոխարէն, կարաղ էր խոյին փշովել, բայց նրանք, կարծես, ամեններն ցաւ չը զգալով, չուտով բաժանվեցան նոր յարձակում գործելու համար։

— Անըրը կը յաղթէ, ասաց տիրուհին մեծ պարոնին,—Արշիլի խոյը այս անդամ փոքր էր մը-նում, որ պիտի ցած գլորվէր:

—Այդ ձեր աչքերին այնպէս երեաց, տի-րուհի, պատասխանեց Արշիլը, որ աւելի էր կա-տաղած, քան թէ իր խոյը,—շուտով կը տես-նենք, թէ որը կը յաղթէ:

Այդ միջոցին խոյերը կատարեցին երրորդ յոր-ձակումը և այնունեան նազդաները (*) սկսեցին աւելի արագ և շուտ-շուտ կրկնվել: Բայց երկու անասուններն ես դեռ մնում էին անպարտելի: Դրանք այժմ աւելի հեռանում էին միմեանցից, որպէս զի իրանց յարձակման թափը աւելի ուժ-գին, աւելի սաստիկ և աւելի սարսափելի լի-նի:

Բայց բազմութեան ուշադրութիւնը այժմ դարձաւ դէպի մի ուրիշ կողմ: Գետի եղերքից լոելի եղան խառնաձայն աղաղակներ: «Խեղդ-վեցաւ... խեղդվեցաւ... գոչում էին հեռուից:

—Ով էլ կուղի, թող խեղդվի, ես պիտի վեր-ջացնեմ կոխւը, ասաց մեծ պարոնը, նորից խը-րախոյմեր տալով իր խոյին:

Բազմութիւնը սկսեց վազել դէպի գետի կող-մը: Բայց աղնուականները դեռ շրջապատել էին

*) Ե ա զ դ ա յ ն շանակում է անսասուններ ճակատ ճակատի խիելը:

խոյերին և անհամբերութեսմբ սպասում էին կոխւի վախճանին:

«Խեղդվեցաւ... թամարը խեղդվեցաւ... այժմ սկսեց պարզ լսելի լինել:

—Վայ, սև հաղնեմ... թամարը... գոչեց տի-րուհին, վաղ տալով դէպի գետի կողմը:

Մի քանի քայլ հեռանալով, նրա ճնկները թուլացան և ընկաւ գետնի վրա: Բոլոր տիկին-ները, նրան նոյն դրութեան մէջ թողնելով, շը-տապեցին դէպի գետեղը: Այժմ մեծ պարոնն էլ Արշիլը ու միւս աղնուականների հետ փու-թացին օգնութեան համելու:

Գետը կատաղած էր: Հարիւրաւոր մերկ մար-դիկ լողում էին պղտոր ալիքների մէջ և որո-նում էին անրազդ աղջկայ զիակը: Աղնուական-ները աղչած, սարստիած, չը գէտէին թէ Բնչ պէտք էր անել: Լեան թաւաղի որդին երեխա-յի նման լաց էր լինում: Թամարի խորթ մայրը անիծում էր «անզգամին»: Պառաւ իշխանուհին աղօթում էր: Մեծ պարոնը իր ձևոքի գաւա-զանով ծեծում էր զիւլտացիներին, հայնոյանք-ներ էր արձակում, հրամայելով, որ ջուրը մըտ-նեն, թէև առանց նրա հրամանին ես հարիւրա-ւոր մարդիկ ջրի մէջն էին: Այնքան աղնուա-կաններից միայն Արշիլը, ուշադրութիւն ը-դարձնելով իր կնոջ Սելանիայի աղաչանքին,

մերկացաւ և նետիկցաւ գետի մէջ, գուցէ կարող լինէր ազատել խեղբլողին:

Թամարի հետ զբօննող օրիորդներից մի քանիսը ուշաթափ էին եղած, և ընկել էին այստեղ ու այնտեղ, իսկ մի քանիսը, որ աւելի պինդ միտ ունէին, վաղելով հաւան ազնուականների մօտ, և արտասուրքը աչքերում պատմում էին, թէ որտեղից և ինչպէս նա ընկաւ գեար: Եռլորը շուարած լսում էին: Ավերից բարձութիւնը գոտում, գոչում էր, ձայն էր տաւիս լուղորդներին, հասկացնելով, թէ գետի որ կողմերում պէտք էր որոննել: Ամանք ջրասոյզ չնիրի նման սկսում էին, ջրի տակն էին մտնում, ու մանք տարսում էին սրնթաց հոսանքի հետ:

Այդ ընդհանուր սոսկումի և իրարանցման բողէում, մեծ եղաւ բոլորի զարմացքը, երբ տեսան մի լուղորդ, ջրի տակից դուրս գալով, իր հետ բերում էր մի զիակ: Նա մի ձեռքով կոհակների հետ կոռւելով, միւսով բռնած ունէր զիակը, աշխատում էր մօտենալ ափին: Այդ միջոցին ալլքների մի նոր յորձանք, ուժգին վրա տալով, երկուսին էլ տարաւ դէպի յատակը: Մի քանի վայրկեանից յետոյ կրկին տակը: Մի քանի վայրկեանից յետոյ կրկին յայտնեցաւ նա ջրի երեսին, զիակը բռնած ունելով ձեռին: Ամեն կողմից լսելի եղան ցնծութեան աղաղակիներ: Միւս լուղորդները շատապեցին նրան օգնութեան հասնել: Բայց մինչև նը-

րանց հասնելը, նա դուրս եկաւ ափի մօտ և անչնչացած մարմինը զրեց ցբամաքի վրա:

— Կեցցէ Դաւիթը, կեցցէ... գոռաց ամիսող բազմութիւնը:

ԺԱ.

Մըցիւթի բոլոր ջաղովկները, ժողովրդական պառաւ բժիշկները, որոնք բարեբախտարար այնօր ուխտաւորների մէջ էին գանվում, հաւաքվեցան թամարի մարմինի շորջը: Նրանց հետազոտութիւնից երեաց, որ օրիորդը բոլորովին խեղդված չէր: Երա երակը դեռ զարկում էր և թոյլ չնչառութիւնը խսպառ խափանված չէր: Նրանց չնչառութիւնը խսպառ կափական և բժշկական բոլոր հնարիները գործ կախարդական և սկսում էին այնպէս ուշաթափ, մի դնելուց յետոյ, օրիորդին այնպէս ուշաթափ, մի պատգարակի վրա գնելով, տուն տարան:

Ժողովրդի մէջ զանազան կերպով էին բացատրում թամարի հետ պատահած դժբախտավութիւնը: Իսկ թաւագների շրջանի մէջ խօսում էին, թէ օրիորդին բանութեամբ ցանկանում էին կնութեան տալ կեանին, որին նա ատում էր, և յութեան տառը մտածեց մըտածեց ջրախեղդ մնել: Մի և նոյն ժամանակ աւելացնում էին, թէ օրիորդը ծածուկ սիրում էր «մէկին», որի հետ ամուսնական չէր կարող: Իսկ ձի էր այդ «մէկը», — ոչ ոք զիտէր:

Թամարի հետ զբօննող օրիորդները նոյնպէս այլ և այլ կերպով էին պատմում անցքը, մի

քանիսը ասում էին, թէ նա ինքն իրան՝ գետը զցեց, միւսները ասում էին, թէ անզգուշութիւնից ընկաւ։ Ալօմէն, որ նրա մօտ էր դժբախոտութիւնը պատահելու բօպէում, պատմում էր, թէ օրիորդը մօտեցաւ գետեղըն, նայում էր ջրի վրա, յանկարծ գետեղի այն մասը, որի վրա կանգնած էր նա, փուլ եկաւ, և նա գլորվեցաւ դետի մէջ։ Այդ տեղը բաւական բարձր էր ջրի մակերեւոյթից, երեսում էր, որ տակից ջրով ողողված էր։ Նա աւելացնում էր, թէ ինքն էլ անպատճառ մի և նոյն գժբախտութեանը կը հանդիպէր, եթէ ուղիղ ֆամարի մօտ կանգնած լինէր։

Ալօմէի պատմութիւնը ամենից ճիշտն էր և աւելի հաւանական, մանուանդ, որ պատահն Դաւելիթը հաստատում էր մի և նոյնը։ Նա թագդնելով նախակը, որ բերեց իրան օրիորդների խումբի մօտ, մնացած պատմութեանը այս ձեն էր տալիս. թէ ինքը թփերի մէջ որոնում էր մի ոչխար, որ այնու կորել էր. յանկարծ նրա ականջն հասաւ օրիորդների արձակած ճիշն ու աղաղակը, գաղեց գէպի այն կողմը. աւենելով ֆամարի գետը ընկնիլը, խակոյն նետվեցաւ ջրի մէջ. նրան բոճեց ուղիղ այն ժամանակ, երբ տակաւին ջրի տակը չէր խորասուզված և կարողացաւ երկար պահել մակերեսոյթի վրա։ Եւ եթէ դացաւ երկար պահել մակերեսոյթի վրա։ Եւ եթէ չաղողից խոկոյն դուրս համել, պատճառնը

այն էր, որ գետի այն տեղումը հոսանքը սաստիկ սրնթաց էր։

Ինքը թամարը, երբ մի քանի օրից յետոց բոլորովին ուշի եկաւ, ոչինչ չէր յիշում, ոչինչ պատմել չէր կարողանում, թէ ինչպէս պատահեց իր հետ վասնգը։ Նա բախտաւոր էր համարում իրան նրանով միայն, որ աղատվեցաւ Դաւելի ձեռքով, և այն օրից իր անձը համարում էր նրա սեպհականութիւնն, և այն օրից պատանին բոլորովին պաշտելի դարձաւ նրան։

Մեծ պարոնը և նրա տիրուհին թամարին պատճաճ դժբախտութեան առաջին օրը, միանգամայն զբաղված լինելով իրանց հիւանդով, բոլորովին մռացել էին նրա աղատչին։ Երկրորդ օրը, թէև հիւանդը դեռ ևս իրան լաւ չէր զզում, մեծ պարոնը իր զբանիկներից մէկին ուղարկեց կանչելու Դաւելին։ Նրան դտան ոչխարների հօտի մօտ, իր համուսական հագուստով, Երբ յայտնեցին, թէ մեծ պարոնը կանչում է, պիտի վարձատրէ նրան, այդ միջոցին բարեսիրա Սիկօն, ուրախութեան արտաստորը աչքերում, զրկեց պատճառն, ասելով։

—Գէ, հիմա գնա, Աստուած բարի ճանապարհ տայ, ևս քեզ միշտ ասում էի, որ վերջը թաւագ կը դառնաս. աւսամբ, կատարվեցաւ իմ խօսքը։

Այդ խօսքերը այն աստիճան անկեղծ, սրաւշարժ էին, որ պատանին նոյնպէս չը կարողացաւ

զոպել իր արտասուքը, և համբարելով իր բարեկամի ձեռքը, ասաց.

— Ես աւելի ուրախ կը լինեի, սիրելի Սիկօ, եթէ ինձ թողնէին միշտ քեզ մօտ մնալ, միշտ քեզ հետ լինել այդ լեռների մէջ:

Հովուապետը նրան ճանապարհ դրեց, բաւական հեռանալով իր հօտից: Երբ բաժանվում էին, դարձեալ զրկեց պատանուն, ասելով.

— Տէս, Դաւիթ, չը մոռանաս Ամկօին:

— Շուտ-շուտ քեզ մօտ կը գամ, Սիկօ, պատասխանեց նրան պատանին բարեկամական մըտերմութեամբ, — քեզ չեմ մոռանայ:

Մեծ պարսնը նստած էր իր պալատի որահում, որի ճակատը բաց, առջեկց ցած վանդակապատով կտրած, մի ծածկոց էր. այդ կացուցանում էր նրա ամառնային զիւանատունը: Այնտեղ մերկ յատակի վրա, որ ծեփած էր հասարակ կաւով, զրված էր մի մեծ պախտ, կոշտ-կոպիտ կերպով շինված անդոյն փայտից, և ծածկված պարսկական գորգով ու մի քանի բարձերով: Նրա վրա նստած էր մեծ պարսնը իր անբաժան խորհրդականների հետ: Այնտեղ էր տիրուհին, այնտեղ էր թամարի խորի մայրը, որոնց մէկը նստած էր մեծ պարսնի աջ կողմում, իսկ միւսը ձախ կողմում: Նրանցից ներքեւ շարված էին Արշիլը, Լեանը, Զաքարա և Ալեքսի թաւադի որդիները: Ճառանգը այդ ժամանակ, նրանց դի որդիները:

աչքի առջե, բակում խաղ էր անում մի փոքրիկ եղջերուի հետ, որ նրան ընծայ էին բերել: Բակում մանէին գալիս մի բանի հոգկահաւեր և աղբերի միջից ճճիներ, պողոծներ էին որոնում: Նրանց արուն վրված, կնձիթը երկարացրած, թեքերը գետնին քսելով, սիրային ախորժ հոգեվմայլութեան մէջ պարավում էր իր նաղելի էգերի շուրջը, երբեմն իր կոկորդային կանչենով աղմկելով բակի գերեզմանական լրութիւնը.

— Զեր հոգկահաւերը անցեալ տարի չաւելացան, հարցրեց Լեանը, որ վաղուց մի առարկայ էր որոնում տիբունու հետ խօսելու համար:

— Չաւելացան, պատասխանեց տիբունին հոգւոց հանելով: — Կէկէի աչքը բարը կը ծակէ (նրա խօսքը պառաւ իշխանունու մասին էր). անցեալ տարի ոտք կոտրվէր ու այստեղ չը դար. մոռաբակը, տեսաւ երկու տառնից աւելի ճըտեր բակումը ման էին գալիս. «Վմէյ մէ, ասաց, այդ բնչ սիրուն ճըտեր են», նրանից յետոյ խեղձ ճըտերը մինք ետելից սկսեցին սատկել:

Այդ միջոցին մեծ պարսնի մարդիկը ներս մըտան, իրանց հետ բերելով Գաւթին, Պատանին համարձակ կերպով տռաջ եկաւ, և գլուխ տառվ, կանգնեց փայտեայ վանդակապատի առջե, որ բաժանում էր բակը օրահից:

— Աստուած է վկայ լաւ տղայ է երեսում,

խօսեց Արչիլը, ոտքից ցգլուխ նայելով պատահում:

—Հայ է... ասաց Լեանը, այնպիսի մի արհամարհական եղանակով, կարծես, հայը լաւ լինել կարող չէր: Նրա սիրու ծակում էր այն նախանձը, թէ Բնչու այդ «հայը» կարողացաւ աղասիւ թամարին, իսկ ինքը «չինչով» չը կաբոցացաւ օգնել նրան:

—Հայ է, բայց զօշաղ տղայ է, պատասխանեց ափրուհին, որին զիւր չեկաւ Լեանի նկատողութիւնը:

—Հայ էլ կայ, հայ էլ կայ. ամենն հայ խօմէկ չէ, պատասխանեցին Զաքարա ու Ալէքսի թամարդի որդիները: Նրանք միշտ միտամին էին խօսում:

Իր խորհրդականների յիշեալ նկատողութիւններից մեծ պարոնը արդէն բաւական նպաստաւոր գաղափար կազմեց Գավթի վերաբերութեամբ, և դառնալով նրան, ասաց.

—Դու մահից աղասիցիր թամարին, Գաւիթ, ասա, Բնչ ես ցանկանում, որ ես տամ քեզ բոքաջութեան փոխարէն:

—Ես ձեր ողջութիւնն եմ ցանկանում, մեծ պարոն, պատասխանեց պատանին սիւնեցու համարձակութեամբ:— Ես ինձ այսքանով ևս բախտաւոր եմ համարում, որ կարողացայ մի փոքրիկ ծառայութիւն անել իմ տիրոջը:

Մեծ պարոնի բոլոր խորհրդականները գարմացած միմեանց երեսին նայեցին: Պատանու համեստ, խելացի պատասխանը բոլորին հաճոյ թռւեցաւ, բայցի Լեանից: Նրանք չէին կարող երեսկայել, որ մի հայ, որ մի հովիւ ընդունակ վներ այսպէս խօսելու:

—Պահանջիմ, որդի, ինչ որ ցանկանում ես, ես կը տամ քեզ, կրկնեց մեծ պարոնը:

Պատանին խկոյն չը պատասխանեց: Նա մտածում էր՝ չոքել իր տիրոջ առջև, նրա ոտները համբուրել և յայտնել նրան, թէ ինքը սիրում է Թամարին և թամարն էլ սիրում է իրան. թէ աշխարհի բոլոր փառքը, բոլոր հարստութիւնը իր աչքում արժէք չունեն, միայն թէ թամարը իր կինը լիներ, Բայց նա այդ չը խնդրեց. նա իր կինը լիներ, այնքան անարժան էր համարում, որ իրան դեռ այնքան անարժան էր համարում, թամարի մտախն անգամ թւում էր նրան չափաղանց անհամենստութիւն:

—Ա եծերի կամքը սուրբ է, պատասխանեց պատանին, երբ մեծ պարոնը միւսանգամ գարձաւ նրան.— ինչ որ չնորհելու վնի իմ տերը, ես գոհ կը լինեմ և աղօթող նրա թանգաղին կեանքի համար:

—Աստուած է վկայ, այդ տղան լաւ տղայ է, գարձեալ խօսեց Արչիլը:— Նրկար հարց ու գոփրձ պէտք չէ, Գաւիթը թաւաղութեան արժան է, աւելացրեց նա:

Ալրժան է, կրկնեց տիրուհին, հաստատելով
Արջիվի խօսքը:—Պահպուխտ է, օտարական է,
այսուղ ոչ ոք չունի, ես նրան կը վեր առնեմ
մեր տաճը, որպէս իմ որդու ընկեր և նրա դաս-
տիարակ:—Ճեմում էք, ինչ խելացի տղայ է.
այսքան խելք մեր վարդապետներն էլ չունեն:

Պատանին հովուի օգնականից յանկարծ դար-
ձաւ մեծ պարոնի ժառանգի ընկեր և դաստիա-
րակ, մի քանի խելացի պատասխանների պատ-
ճառով, որ նա զուրս էր բերել Տաթեալ վանքից:
Նրա ուրախութեանը չափ չը կար, թէս նա
զգուշութեամբ թագցրեց: Ոչ թաւադութիւնը և
ոչ էլ ժառանգի հետ ընկերակցութիւնը չեխն
հրապուրում նրան: Նա ուրախ էր այն անսպա-
սելի բախտով, որ պիտի ընդունվի մի տան
մէջ, ուր բնտկվում էր և թամարը:

Պատանու ուրախութիւնը նկատեց միայն
թամարի խորթ մայրը, որին յայտնի էին Դաւթի
սիրային յարաբերութիւնները օրիորդի հետ: Եւ
նա, որ մինչև այն բօպէն լուռ էր, արդարացեց
տիրուհու ցանկութիւնը, ասելով:

—Այդ լաւ կը լինի, շատ լաւ կը լինի, եթէ
այս տղային կը դունէք մեր տան մէջ: Յո էլ
իմանում եմ, որ Դաւթիթը շատ խելացի տղայ է:
Նա մինչև անդամ գրել կարդալ էլ իմանում է:

Վրացու կինը իր խելքով միշտ բարձր է
տղամարդից. այդ իսկ պատճառով կանանց

վճիռը խկոյն իրագործվեցաւ: Մեծ պարոնը
հրամայեց տանել պատամու հագուստը փոխել
և իր հանդերձատնից նրան լաւ խալաթներ
ընծայել: Յետոյ նա հրամայեց զրել Դաւթի
թաւադութեան հրովարտակը, որպէս զի, իրբն
ազնուական, նա արժանաւորութիւն ստանայ
մտնել իր զրանիկների կարգը և ընդունված
վիճել պալատում:

Բայց ինչ սատանայական խորամանկութիւն
էր, որ զրգեց թամարի խորթ մօրը համաձայն-
վել տիրուհու հետ,— այդ մենք կը տեսնենք
յետոյ: Իսկ Դաւթի հրովարտակը գրելու համար
գեռ բաւական դժուարութիւններ կացին: Այն-
տեղ, զիւանատան մէջ նստած խորհրդականնե-
րից և ոչ մէկը զրագէտ էր: Մեծ պարոնի քար-
տուղարը, նրա միակ զրագիրը՝ Գաբրիէլ սար-
կաւագը այնուեղ չէր: Իսկ Դաւթիէլին գտնելը
նոյնպէս հեշտ բան չէր: Մարդ ու զարկեցին
նրան որոնելու:

Գաբրիէլն դտան մի զիւղացու խրձիթում,
գինու լիտրան կշտին զրած, նստել էր:

—Կը զրեմ, ցաւդ տանեմ, կը զրեմ, ասում էր
նա տան աիրոջը,— մի այնպիսի զի՞ս կը զրեմ,
որ եթէ քարի վրա դնես, քարը կը ծակէ:
որ պիտի կը կարդալ էլ իմանում է:

Գաբրիէլի հրաշալի զի՞ս, որ պիտի բարը
ծակէր, շարժեց տան աիրոջ ուրախութիւնը.

որը չնորհակալութեամբ դարձաւ դէպի սարկաւաղը, ասելով.

—Գրիր, ցաւդ առնեմ. կինս մէկ շաբաթից աւել գժուածի նման է, զլխումը խելք չի մնացէլ:

—Ո՞րտեղից խելք մնայ, գոչեց պառկած հիւանդը ցնցոտիների տակից, — մեռնում եմ, մեռնում...

Հիւանդի միայն ատամն եր ցաւում և ճնօտի մի կողմը փոքր ինչ ուռած էր: Գաբրիէլը մի այնպիսի զօրաւոր զիր պիտի գրէր, որը կապելով ճնօտի վրա, համ ուռուցքը պիտի խափանվէր, համ էլ առամի ցաւը պիտի կտրվէր:

Երբ Գաբրիէլը լսեց, որ իրան պալատում կանչում են, վերկացաւ, տանտիրոջը ասելով.

—Երեկոյեան գիրը կը բերեմ, ցաւդ առնեմ, բայց տասերկու հատ ձու պիտի պատրաստ ունենաս, մինչեւ չը ստանամ չեմ տայ, առանց դրանց չի լինի: Նա ուշազրութեամբ շարժեց գինու լիտրան, և նկատելով, որ միջի հեղուկը բոլորովին սպառվել է, գուրս եկաւ գիւղացու խրճից և սկսեց դիմել դէպի պալատը:

Գաբրիէլի յայտնվելը պալատում շարժեց ընդհանուր ծիծադ:

—Եթի զլորվում է Գաբրիէլը, նկատեց Արքիւր, նրան հեռուից տիմնելով:

—Եթէ այդ հարփելը չունենար, նշա հատը

ողջ Վրաստանում չէր գտնվի, ասաց մեծ պարոնը. —անիծածը ծողի չափ զիտութիւն ունի: Կանչ ասես, որ նա չէ կարդացել. սազմոս, «Ղարամանիանի», մինչեւ անդամ Շվեյչիլսիս արզավոսանի»: Քանի օր առաջ մի նամակ էի ստացել Արխագէթից, վանքի բոլոր վարդապետներին կանչել տուի, բոլորն էլ էշի նման կանգնեցին, մընացին. ոչ մէկը կարդալ չը կարողացաւ, հէնց որ Գաբրիէլը առեց ձեռքը, ջրի պէս վաղեց:

Գաբրիէլը գլուխ տուեց, և որպէս վայել էր պալատի քարտուղարին, բարձրացաւ, նստեց տախտի վրա:

—Դէ, Գաբրիէլ, զրիչդ ու թանաքամանդ քօքիր, ասաց նրան մեծ պարոնը, —զլելու բան ունես:

Գաբրիէլի պղնձէ թանաքամանը, զօտիի մէջ խրած, միշտ պատրաստ էր: Նրան ման էր ածում իր հետ քարտուղարը ոչ միայն իրը ապացոյց իր անհուն զիտութեան, այլ առաւել որպէս նշան այն բարձր պաշտօնի, որ նա վարում էր պալատում: Նա ունէր ճիշտ այն թանաքամանների ձեն ու նմանութիւնը, որ մինչեւ այսօր գործ են ածում Երզրումի և Վանի կողմերի հագերը: Նրա երկայն, խողովակածն փողի մէջ կային եղեղնեայ գրիչներ, գրչահատ և փոքրիկ պղնձէ գգալ մէջը ջուր ածելու համար: Այդ թանաքամանը, որ գուցէ երկուորդն էր ամբողջ

Արցիսէթի մէջ, մէծ պարոնը ընծայ էր ստացել մի տեղից և իր կողմից ընծայել էր քարտուղարին:

Որովհետեւ ամիսների ընթացքում հաղիւ էր պատահում մի բան զրել, այդ պատճառով Գարեգինի թանաքամանը միշտ ցումաք էր լինում: Այդ հանգամանքը բոլորին ծանօթ լինելով, Թամալի խորթ մայրը, առանց ինդրելու, վեր կացաւ և մի ամսնով ջուր բերեց, որ նա ածէ թանաքամանի մէջ: Թէս այդ գործողութեան համար թանաքամանի խոզովակի մէջ փոքրիկ գուալ կար, բայց Գարեգինը գործը աւելի հեշտոցնելու համար ձեռքը կոխեց ջրի ամանի մէջ և բռնեց թանաքամանի վրա: Թրջված մատերից ջուրը սկսեց կաթկաթել նրա մէջ: Այնուհետև թրջված ձեռքը որբեց իր փարաջայի փէշով:

Թանաքամանը կազմ և պատրաստ էր. մնում էր եղեգնեայ զրիչներից մէկի բթացած ծայրը սրել. երբ այդ աշխատութիւնն էլ վերջացաւ, քարտուղարը մի առանձին հապարտութեամբ դարձաւ դէպի ատեանը, ասելով:

—Հիմայ թուղթ տուեցէք, որ զրեմ:

Այդ ամենագժուար ինդրին էր. թղթի մասին դեռ ոչ ոք չէր մոտածել: Ամբողջ պալատում ման եկան, ամեն տեղ որոնեցին, ոչ մի պատառ թուղթ չը գտան: Յհառոյ ուղարկեցին վանքը. այնուեղ էլ չը գտնվեցաւ: Բայց վանա-

հայրը այնքան հնարիմաց էր, որ մեծ պարոնի մարդուն ձեռնունայն գետ չը դարձեց. նա կըսրեց մի հին զրչագիր գրքի կազմից մի թերթ մագաղաթ և ուղարկեց:

Հրովարտակների զրելու ձեր Գարեգինը «հայր մերի» նման անզիր զիտէր. հարկաւոր էր միայն հարցնել անունը, հօր անունը, մնացածը նրան յայտնի էր: Պատահի Դաւթին կանչել տուին հօր անունը հարցնելու համար: Այժմ լուսցված, հաղնված, զարդարված Դաւթը այլ ևս առաջվայ հովիւ Գաւիթը չէր: Նա իր նոր հազուստի մէջ հրետեմ էր մի վայելչահասակ, շնորհալի պատահի, որ խկոյն իր վրա դարձրեց բոլորի ուշադրութիւնը:

—Քրիստոս վկայ, այդ տղան հէնց մօրից ծնված է թաւադ լինելու համար, գուեց Արչինը ծափահարելով:

Արչինը ենթազրութիւնը սխալ չէր. Դաւթը իսկապէս աղջուական ծագումից էր, թէս ինքը չը զիտէր այդ: Նա տոհմակից էր Միւնեաց երկրի Օրբելեանների հետ, բայց նրա հայրը աղքատանալով, հասարակ դիւզացիների կարդն էր ընկել:

Քարտուղարը մագաղաթի թերթը զրեց մի կտոր տախտակի վրա, և տախտակը զնելով իր ծնկի վրա, այսպիսով կազմվեցաւ նրա գրասեղանը: Ակսեց զրել: Որքան և վարժ էր նա գըղանը:

ըելու մէջ, այսուամենայնիւ, մի քանի ժամ տես-
ւեց, մինչև աւարտեց իր գործը: Երբ բոլորովին
պատրաստ էր, սկսեց կարդալ, մի և նոյն ձայ-
նով, մի և նոյն եղանակով, որպէս կարդում էր
նա եկեղեցում Աւետարանը: Յետոյ մագաղաթի
թերթը իր թանաքամանի հետ դրեց մեծ պա-
րոնի առջև: Յնուում էր կնքել նրան: Մեծ պա-
րոնը մասը թաթախեց թանաքամանի մէջ, նը-
րանով մրոտեց իր մեծ, քառանկիւնի կնքը, որ
մի թելով միշտ կախ տուած ուներ զօտիից, և
կնքեց հրովարաակի ճակատը: Նրանից յետոյ
ինքը քարտուղարը, Արչիլը, Հեանը, Զաքարա և
Աւետի թաւաղի որդիները,—Վրաստանի այդ
հինգ առաջնակարգ պետական մարդիկը,—վաւե-
րացրին իշխանական հրովարտակը իրանց կնք-
ներով:

—Եկ, դաւակս, ասաց մեծ պարոնը, դառնա-
լով գէպի պատանին և մագաղաթի թերթը մեկ-
ներով նրան: —բարով վայելես:

Գաւիթը մօտեցաւ, չոքեց մեծ պարոնի առջև,
և նրա հագուստի զրօշակը համբուրելով, ընդու-
նեց հրավարտակը:

ԺԲ.

Յս համառօտ կերպով անցայ իմ պատմու-
թեան այն մասը, թէ Վրաստան գալուց յետոյ
որպիսի հանգամանքներ նպաստեցին Գաւիթ
քէկին մտնել իր ասպարէզի այն շաւզի մէջ, որ

բնական ճանապարհով տարաւ նրան գէպի ա-
ռաջապիմութիւն և մինչև վրաց մնձ պարոնի
երկրորդականը լինելու բարձր աստիճանին
հասցըեց նրան: Այժմ՝ կրկին վերադառնալով
մեր գէպի ընդհատաված տեղը, տեսնենք, թէ ինչ
կարգադրաւթիւններ արեց Դաւիթ բէկը իր բա-
րեկամ Ստեփանոսի նամակը ստանալուց յե-
տոյ:

Նամակաբերի նկած գիշերվայ առաւօտնան
պահուն Վիխթար սպարապետը, վաթաթված
իր երկայն եափնյու մէջ, միայնակ զի-
մում էր գէպի բէկի տունը: Խուլ փաղացների
մէջ ոչ ոք չէր երեսում: Խոլորը անձրենի տարա-
փից քաշվել մտել էին իրանց խրճիթները: Նա
գնում էր մեծ անհամերութեամբ: Բէկի արած
խոստումը, թէ առաւօտնան կը պատմէ նրան
Աղասու գալստեան «զաղանիքը», սաստիկ
հետաքրքրում էր նրան: Ի՞նչը կարող էր բերնէ
այդ սիւնեցաւն վրաց երկիրը, մտածում էր նա,
ինչ գործ կսփող էր ունենալ այդ ծածկամիտ
երիտասարդը բէկի հետ: Եւ ինչու գիշերը, մինչ
բէկի բոլոր հիւրերը ուտում էին, խմում էին,
ուրախանում էին, ինքը բէկը այնպէս տխուր
էր և գտանվում էր, կարծես, մի տեսակ անհան-
գիստ մտասանջութեան մէջ: Անպատճառ պէտք
է մի բան լինի և գուցէ իսխոտ կարեոր բան,
մտածում էր նա, փութացնելով իր քայլերը գէ-

պի բէկի տունը, և անցնելով ցեխով պատաժ փողոցների միջով:

Միթքար սպարապեաը բնիկ սիւնեցի էր, տեղային մի հին, իշխանական տոհմից շառաւիզած: Նա վրաստանում ոչ մի պաշտօն չուներ և ոչ կամենում էր ընդունել: Թէ ինչու համար այդ երեւլի վարատականը թողել էր իր հայրենիքը, —ոչ ոք չը գիտէր: Նրա կիանքի պատմութիւնը ծածկված էր խորին մթութեան մէջ: Մըցխէմում ապրում էր նա որպէս մի օտարական հիւր և խիստ մօտ յարաբերութիւններ ունէր վրաց միծ պարոնի հետ: Նրա տարիքը քառասուն և հնգից հազիւ անցած կը լինէին: Միջակ հասակով, թիկնաւէտ, բարեկաղմ մարդ էր սպարապեաը, առիւծի խրոխապելի դէմքով, որ ազգում էր նայողի մէջ երկիւզ և պատկառանք: Նրա անունը այլապէս չին արտասանում մեր պատմագրները, առանց աւելացնելու «քաջ» կամ «այր անպարտելի» խօսքերը:

Նա բէկի տան բակում դառաւ պառաւ քեթեւանին, որ իր առաջակալի մէջ սիմինտի հատիկներ լցրած, դնում էր դէպի ախոռատունը հաւերին կռւաւ տալու:

—Քարի լոյս, Քեթեան, ասաց նա, մօտիկանալով պառաւին, — բէկը քնած է, թէ վեր է կացել:

—Աստուծու բարին ձեզ, պատասխանեց պա-

ռաւը, շուառած կերպով կանգնելով: Ի՞նչ ասեմ, իմ տէր, Աստուծած գիտէ, քնած է, թէ արթուն է: Գիշերը ձեր գնալոց յետոյ նա երկար անքուն մնաց, մինչև առաւօտ ճրագը վառվաւմ էր: Յետոյ կանչեց ինձ, ասաց. «Քեթեան, ես ուղում եմ մի փոքր հանգստանալ, ով որ դալու մինի, ինձ չը զարթեցնէք, իսկ եթէ սպարապեաը դալու լինի, զարթեցրէք: Հիմայ զուք եկաք:»

—Այս, ես եկայ, դու խօ տեսնում ես, որ եկայ, գէ, գնա զարթեցրու, իմ սիրելի Քեթեան, ասաց սպարապեաը, երբ տեսաւ, որ պառաւը տեղից չէ շարժվում:

—Կը գնամ, ցաւդ առնեմ, կը գնամ, ասաց պառաւը, իր քայլերը ուղղելով դէպի ախոռատունը, — թող այդ կուտը տանեմ հաւերին տամ, յետոյ կը գնամ, ցաւդ սունեմ:

—Իսկ ես այս անձրեի տակ կանգնած, պիտի սպասեմ, սիրելի Քեթեան, հարցրեց սպարապեաը, փոքր ինչ վրդովիկելով:

—Ի՞նչու էք սպասում, ցաւդ առնեմ, եկեք ինձ հետ, տանենք կուտը տանք, աջնոել հաւերի մօտ ծածկված է, չէք թրջի, ցաւդ առնեմ:

Սպարապեաը նկատելով, որ պառաւը կամենում էր գեռ առաջ հաւերին մի ծառայութիւնն անել տալ և յետոյ զարթեցնել բէկին, այլ ես չը սպասեց, մտաւ նրա ընդունարանը: Ընդու-

նարանից, որի հետ ծանօթ է մեր ընթերցողը, մի նեղ դուռ տանում էր դէպի բէկի ննջարանը, որը մի և նոյն ժամանակ վրաց առաջին պետական մարդու կարինետն էր. Սպարապետը մի քանի անգամ բազմեց դուռը: Շուտով յայտնվեցաւ չէմքի վրա բէկը: Նրա յոշնած, գունաթափ դէմքից երեսում էր, որ նա ամբողջ գիշերը կամ ամենեին քնած չէր, կամ փոքր ինչ նիրհել էր միայն առանց հանգելու:

—Դու հիւանդ ես, ինչ է պատահել քեզ, հարցրեց սպարապետը յետ-յետ քաշվելով.— դու ամենեին քեզ հման չես:

—Ներս եկ, այստեղ աւելի լաւ է, խօսեց բէկը, կարծես չը լսելով, թէ ինչ հարցրին իրանից: — Նստիր, այստեղ ոչ ոք չի խանգարի մեղ: Նա ցոյց տուեց փոքրիկ տախտը, որի վրա պառկում էր ինքը:

Սպարապետը չը հանգուտանալով, դարձեալ հարցրեց.— Քեզ հետ, երեի, մի վատ բան է պատահել:

—Ոչինչ բան չի պատահել, միայն գիշերը անքուն եմ անցկացրել:— Նստիր, ասաց նա, կրկին ցոյց տալով տախտը:

Ննջարանը տախտակից շինված փոքրիկ սենեակ էր, որի մի հատիկ լուսամուտը բացվում էր դէպի պարտէզը, Դրսում օրը բոլորովին ամպամած լինելով, նեղ լուսամուտից ծագած աղօտ լոյսը

բոլորովին անողօր էր վանելու սենեակի մթութիւնը:

—Դու, կարծեմ, ինչ որ ասելու ունեիր ինձ, հարցրեց սպարապետը, նստելով տախտի վրա:

—Այդ մարդը ինչո՞ւ համար է եկել: Նրա վերջին հարցը Աղասու մասին էր:

—Կարդա այդ նամակները, յետոյ կը խօսենք, ասաց բէկը, տալով նրան Աղասու բերած նամակները, իսկ ինքը դուրս գալով ննջարանից: Նա իր ծառաներից մէկին կանչեց, կանգնացրեց ընդունարանի դրանը, պատուիրելով, որ ոչ ոքին ներս չը թողնէ:

Սպարապետը մօտեցաւ լուսամուտին, սկսեց կարգալ: Նրա դէմքը, նամակների բովանդակութեան համեմատ, ընդունում էր երբեմն արխուր, երբեմն ուրախ, երբեմն բարկացոտ արտայայտութիւն: Եթէ նա լինէր տաքարիւն, շուտ յափշտակվող մարդերից, երբ բէկը կրկին վերադառն իր ննջարանը, կը զրկէր նրան, և համբուրելով կասէր. «այլ ես որ օրվանն ենք ըսպասում, գնանք»... Բայց նա խիստ սառնասորտութեամբ նամակները մի կողմ դնելով, ասաց.

—Այժմ հասկանում եմ, թէ ինչու գիշերը անքուն ես անց կացրել... և մի և նոյն ժամանակ նրա խորախորհուրդ աշքերի մէջ շողաց ուրախութեան նման մի բան,

Որքան սպարապետը խոհեմ, բազմափորձ, զբ-

գոյշ և խոր մտածող մարդ էր, այնքան բէկը սկզբից երկար մտածել չէր սիրում: Նա մտածում էր գործը սկսելուց յետոյ, բաւականահալով միքանի անհրաժեշտ հախաղատրաստութիւններով միայն: «Գործը գործ ցուց կը տայ»— զրա մէջն էր նրա գործելու եղանակի բուն զաղանիքը: Եւ հետեւելով իր սովորութեանը, նա մի առանձին վեհութեամբ կանգնեց սպարապետի առջե, և անձնավատահ ժպիտը երեսին, ասաց.

—Գնանք, բարեկամ, հայրենիքը կոչում է մեզ...

Սպարապետը խոկոյն չը պատասխանեց, ուրովհետեւ այդ միջոցում ազմուկի ձայն լսվեցաւ:

—Դա անպատճառ բայինդուրը կը լինի, ասաց բէկը, շտագելով դուքս գալ ննջարանից նրան ընդունելու համար:

—Նրա մօտ կարող ենք խօսել, հարցրեց սպարապետը:

—Ի՞նչու չէ: Նա գէվլէքութիւններ անել սիրում է, միայն դարտակ բաների վերաբերութեամբ, բայց ծանրակշիռ հարցերում նա սատիկ ծածկամիտ է:

Հանգտացնելով սպարապետին, բէկը դուրս եկաւ բայինդուրը իշխանին ընդունելու համար: Նա տեսաւ՝ պարսից թագաւորի քրաթման դիմութիւնը բանել էր իր ծառայի ականջից, և ձիգ

տալով, նրա գլուխը կազրել էր գետնին, երեսը շփում էր ցեխի մէջ, ասելով:

—Եւ միւսանգամ չը համարձակվես ասել Քայինդուրին, թէ բէկը ոչոքի չէ ընդունում:

Տեսնելով բէկին, ասաց նրան:

—Գիշերը աշտակով շունը առաջո կտրեց, հիմայ էլ այդ անպիտանը. մէկը միւսից ոչինչով սպակաս չեն. բայց երկուսն էլ լաւ խրատվեցան. թող զրանից յետոյ գնան իրանց հանգուցեալ հօրը խարար տանեն, թէ պարսից թագաւորի քրաթման դիմութիւնը կազմէս վարդիւ գիտէ մարդերի հետ:

Այդ խօսքերը մրմրթալու միջոցին, նրա աչքը ընկաւ բէկի երեսին:

—Ի՞նչու ես ոեկնադ այդպէս թթուացրել, հարցրեց նրանից. — Չը լինի թէ վատ երազ ես տեսել: Այնտեղ ով կայ, նա ձեռքը մեկնեց գէպի ննջարանը:

—Ոչ ոք, սպարապետն է միայն: Գնանք, ասաց բէկը, նրա ձեռքից բռնելով:

—Ճշմարիտ, չը կիտեմ, թէ ինչու այդ մարդու երեսը տեսնելիս, ինձ միշտ թւում է, թէ տէրաէրի առջեր չոքած, ես խոստավանվում եմ իմ երեխի ու աներեսով յանցանքները:

—Լաւ, գնանք, շտագ դուքս մի տուր, ասաց

բէկը ծիծաղելով, եթէ երկար կը մնաս այստեղ,
անձրել բոլորովին կը թրջէ քեզ:

Անձրել դեռ մաղվում էր: Բայինդուր իշխանը
դեռ կանգնած էր բակում և ջուրը նրա զանգ-
րահեր եափունջու մաղերից առատութեամբ
կաթկըթում էր: Նա ներս մտաւ ընդունարանը,
եափունջին կախեց մի ցցից, որ ցամաքի, յե-
տոյ մտաւ բէկի: ննջարամնը: Տեսնելով այնտեղ
սպարապետին լուս մոտախութեսն մէջ, ասաց
նրան:

— Շատ մի մտածիր, շուտ կը պառվես. աշ-
խարհը հիմայ գմբերին է պատկանում. ոով չուտ,
նա կուշտու:

Սպարապետը ոչինչ չը պատասխանեց, միայն
նայեց նրա երեսին և ծիծաղեց: Իսկ «բաթման
զիճը», մի քննական հայացք ձգելով վոքրիկ
սենետի շուրջը, ասաց նրանց.

— Ելի ինչու էք մտել այդ ծակը, էլ ինչ սա-
տանաներ ունիք նալելու:

— Եստիր, շատախօս, համբերութիւն ունեցիր,
ասաց նրան սպարապետը, ձեռքիցը բռնելով և
քարշ տալով դէպի տախտը, որի վրա ինքը
նստած էր: — Ես զարմանում եմ, թէ ոու ինչպէս
ես համբերել քո մօր արգանդում:

— Յովիս: մարգարեն, ինչպէս երեք որ մնաց
ձուկի փողում, իսկ եստ կարծեմ, նրանից աւել

չեմ մնացել, պատասխանեց նա, նոյնպէս ծի-
ծաղելով և նստելով սպարապետի մօտ:

Բէկը դեռ ոտք վրա էր. նա դարձաւ իր
հիւրերին, հարցնելով, թէ չէին ցանկանայ մի
փոքրիկ նախաճաշիկ անել:

— Ես բոլորովին խումար եմ, ասաց նրան իշ-
խանը, — զլուխս տրաքում է այս վիշերվայ շատ
խմելուց. ինձ առաջ խումարութիւնից գուրս
բերէք, յետոյ ինչ որ տալու լինէք, կուտեմ:

Բէկը ձեռքերը թափահարեց և նրա ծափ տա-
լու ձայնից ծառան ներս մտաւ:

— Մի չի արադ տուէք մեզ, հրամայեց ծա-
ռային:

— Ոչ, ոչ, նրա խօսքը կտրեց իշխանը, — զրանց
ձեռքով բերված արագը ինձ խումարութիւնից
չի հանի. թող այն քածերից մէկը բերէ:

— Դու յաւստեան այսպէս ջահել կը մնաս...
նկատեց նրան սպարապետը փոքր ինչ կծու հա-
նաբով:

— Ի՞նչու, պառաւ ձին գարի չի ուտի, պա-
տասխանեց իշխանը առանց վիրաւորվելու: — Ես
սրտով միշտ ջահել կը մնամ և այդ ասլու ա-
մենախելացի եղանակն է կեանքի մէջ:

Այդ միջոցին գեթեանի հարսներից մէկը, Դա-
րօն, արագի չի մի փոքրիկ քինջանի
հետ ներս բերեց: Պարսից թագաւորի «բաթ-
ման զիճը» ստիպեց նրան, որ իր ձեռքով լցնէ

Քինջանը, և իրան տայ, գարօն կատարեց հրամանը, և իշխանը մեծ ախորժակով խմելով, տասայ.

— Հիմայ դլուխս կարգի կընկնի. խումարութիւնս անցաւ:

Բէկը իր կոզմից հրամայեց գարօն, որ նախաձաշիկի համար ծուածեղ պատրաստեն: Երբ մանկանասակ կինը հեռացաւ, հայինդուր իշխանը բաւական լրջամիտ դէմք ընդունելով, որ ամենելին սաղ չէր գալիս նրան, դարձաւ դէպի բէկը, հարցնելով.

— Ես ինչ որ բանի հոտը առնում եմ. զրուստն ասեցէք, ինչ կայ: Այստեղ, վաղ առաւօտեան, սոլարապետը, քնահառամ եղած, եկել, նստել է, — այստեղ, ախոռամանում, մի սիւնեցի անձանօթ երիտասարդ է պահված. խօսեցնում ես, խօսեցնում ես, մի բառ անդամ չես կարող դուրս քաշել սատանայի լակոտի բերնից, կարծես, սիրառ անտակ ծով լինի. ամեն բան խորասուզվում է, ամեն գաղտնիք թափնած է այնտեղ...

Թէ բէկը և թէ սպարասկալը հասկացան, որ իշխանը նախ իրանց մետ գալը, ախոռատ նում տեսնվել է Աղասու հետ. Եւ որովհետեւ իշխանց մէջ արդէն վճռել էին, որ նրան ևս մարանց մէջ արդէն վճռել էին, որ նրան ևս մասկից անեն իրանց խորհրդին, այդ պատճառով

տուեցին նրան Աղասու բերած նամակները կարդալու:

Նա մօտեցաւ լուսամուտին և սկսեց լուսթեամբ կարդալ. Զարմանալի փոփոխութիւնն այդ միշտ ուրախ, միշտ անհոգ և կատակներ սիրող մարդու մէջ. Ընթերցանութեան ժամանակ նա մի քանի անդամ խորին կերպով հոգոց հանեց, մի քանի անդամ արձակեց խուզ հառաջանքներ, յետոյ նրա աչքերը լցվեցան արտասուքով: Վիթխարի հսկան, երկաթի մարդը սկսեց երեխայի նման լաց լինել: Նրա սիրող այնքան փափուկ էր, նրա զգացմունքները այն աստիճան աղնիւ էին, որ չէր կարող դիմանալ, կործանվող հայրենիքի մահուան բօթը այդ նամակների մէջ նկարագրված տեսնելով: Նա յանկարծ վեր թռաւ նստած տեղից, և իր թուրը պատեանից դուրս քարշելով, զբեց բէկի ստների մօտ, ատելով.

— Ահա քո խոնարհ ծառան դնում է իր թուրը քո ստների մօտ, առաջարկելով իր ծառայութիւնը. — Գնանք, ևս պատրաստ եմ. հայրենիքը կոչում է մեզ:

Բէկը զրկեց նրան և համբուրեց: Այնուհետեւ երկար ու երկար նրանք խօսում էին և խորհում այն բոլոր կարգադրութիւնների ու նախապատրաստութիւնների մասին, որ պէտք էր զործ գնել նախ քան Այստանը թողնելը:

ԺԳ:

Մի և նոյն աւուր ուշդիշերային պահուն Դաւ-
կիթ բէկի ննջարանը լուսաւորված էր իւղային
ճրագով, որ դրած էր փայտեայ աշտանակի վրա:
Տախտի վրա նստած էր բէկը, իսկ նրա մօտ գե-
րեվաճառ Սաքուլը, Տան բոլոր դռները կողպ-
ված էին: Ծառաները, սպասաւորները, աղախին-
ները, բոլորը քնած էին: Ամբողջ տունը մրափում
էր խորին, խաղաղական լուսթեան մէջ:

Գերեվաճառի մօտ մի ամանի մէջ դրած էր
զինի, որից երբեմն իր ձեռքով ածում ու խմում
էր, կարծիս, կոկորդը թրչելու համար, որպէս զի
աւելի զիւրութիւն ունենայ շաբունակելու իր
երկարուծիդ խօսակցութիւնը:

X. —Ես, ասում էր նա, Դաղստանում այնպիսի
անուն եմ ստացել, որ թէ մեծը և թէ փոքրը
բոլորը իմ անունով են երդում ուտում: Այստեղ
միայն այդ անալիսան վրացիները չեն յարգում
Սաքուլին: Իսկ այնտեղ, Դաղստանի իմամի հետ,
ես ծունկ ծնկի կացրած եմ նստում:

—Այդ բոլորին հաւատում եմ, Սաքուլ, ասաց
նրան բէկը, —դու այն ասա, թէ իմամը ինչ աղ-
դեցութիւն ունի Դաղստանում:

—Այն աղդեցութիւնն ունի, որ եթէ մատը
բարձրացնելու լինի, ամբողջ Դաղստանը էշի
նման կը զռայ: Նրանից մեծ էլ ով կայ այնտեղ:
Նա բոլոր լէկզիների թէ Հոգեոր և թէ մարմնա-

որ զլուին է: Ամենքը Աստծու նման պաշտում
են նրան:

—Կախուներ սիրում է:

—Եթէ առաջարկէին ջրի տեղ արիւն գործա-
ծել, նա կընտրէր այդ վերջինը:

Այդ բոլորը, ինչ որ հարցնում էր բէկը, իրան
աւելի լաւ յայտնի էր, քան թէ Սաքուլին, միայն
նա կամենում էր գերեվաճառի կարծիքը հաս-
կանալ:

—Այդ բոլորը շատ լաւ, առաջ տարաւ բէկը:
—ուղիղն ասա, Սաքուլ, դու հայոց ազգը, հա-
յոց երկիրը սիրում ես:

—Այդ ինչ հարցնելու բան է, հերօննած, ի
հարկէ սիրում եմ, պատասխանեց գերեվաճառը
այնպիսի մի զարմացումով, որքան կը զարմանար
նա, եթէ մէկը հարցնելու լինէր. «Դու այդ առ-
ջերդ դրած զինին սիրում ես», թէն զինու մա-
սին նա աւելի պարզ աւելի որոշ զաղափար ու-
նէր, իսկ հայոց ազգի և հայոց երկրի մասին
ոչինչ զաղափար չունէր,

—Ի՞նչով ես սիրում, հարցրեց բէկը:

—Ի՞նչով պէտք է սիրեմ. իմ կեանքում ոչ մի
անգամ հայոց պասը չեմ կերել. ես հայ եմ ծըն-
վել, ինձ մկրտել են հայոց եկեղեցում. նոյն ե-
կեղեցում ամեն տարի հաղորդվում եմ ես. նոյն
եկեղեցում ես պսակվեցայ. նոյն եկեղեցում կը
եկեղեցում ես պսակվեցայ. նոյն եկեղեցում այնտեղ

իմ մեղքերի համար պատարագ կը մատուցանեն
և այնտեղից քահանան կը տանէ ինձ թաղելու։
Հիմայ տեսնում էք, ես որքան սիրում եմ։

Այդ սէրով այն աստիճան յափշտակվեցաւ Սա-
քուլը, որ լցրեց դինու բաժակը և լուռ անուշ
արեց, գուցէ իր մաքում օրհնելով այն աղջի
կեանքը, որին սիրում էր։

Իսկ թէկը նկատելով, որ գերեվաճառը «Հայոց
աղջ», «Հայոց երկիր» բառերը չէ որոշում եկե-
ղեցուց ու նրա կրօնական տրարողութիւններից,
— հէնց այդ տեղից պինդ բռնեց նաւ։

— Տեսնում եմ, սիրելի Սաքուլ, որ դու շատ
ես սիրում հայոց եկեղեցին, որի մէջ դու մկրտ-
վել ես, հազորդվել ես, պատկերել ես, որի մէջ
պիտի տարպի քո մարմինը մեռնելուց յետոյ, ո-
րի մէջ քո մեղքերին թողութիւն կը լինի, երբ
հայոց քահանան քո հոգու համար պատարագ կը
մատուցանէ, Բայց դու գիտես, որքան շատ են
քո մեղքերը և եկեղեցին որքան մեծ բարերա-
րութիւն է անում քեզ, որ սրբում է, մաքում
է նրանց։

— Գիտեմ... գիտեմ... հոգուց հանելով պատաս-
խանեց գերեվաճառը, — գիտեմ որքան շատ են
իմ մեղքերը...»

Երևելլ չարագործը դիտէր՝ որքան շատ էին
իր մեղքերը, նա իր կեանքում ամեն տեսակ ե-
ղեռներ գործած էր։ Եւ որպէս վաճառական, որ

ամեն բանի վրա շահն կէտից է նայում, նա
հասկանում էր թէ որքան շատ պարտական է
հայոց եկեղեցուն, որ մաքում էր նրա հոգու
ախտելը, որ աղատում էր նրան գծովսքի կրակից։
Եւ այդ բոլորը կատարում էր եկեղեցին համարեա
թէ ձրի, համարեա թէ առօնց վարձատրութիւն
կամ փոխարինութիւն պահանջնելու։ Մի քանի
շահներ տալով տէրտէրին, կարելի էր նրա մօտ
խոսավանվել, հաղորդվել, նրան պատարագ մա-
տուցանել տալ: Դա խիստ էժան բան էր Սա-
քուլի կարծիքով. մի քանի շահներով նա դնում
էր մի քանի հազարների մեղքեր։ Կարելի էր մէ-
կին կողոպտել, միւսին խաբել և հազարներ վաս-
տակել բայց փոխարէնը չոքել տէրտէրի տաջն,
«մեղաց» ասել, և սրբված, մաքրված գուլս դալ
եկեղեցուց, Խ՞նչու ըլ սիրել մի այսպիսի եկե-
ղեցին։

Բէկը աշխատում էր խկոյն օգուտ քաղել Սա-
քուլի այդ ջերմեսանդութիւնից, որ ծնուցել էր
եղեռնագործի մէջ ոչ միայն լոկ կոյր հաւաս-
դէպի եկեղեցին, այլ մի տեսակ հախանձախնդ-
րութիւն և գէպի նրա թշնամիները, մի տեսակ
սէր ևս գէպի նրա համատառութիւնը։

— Խ՞նչ կանէիր, Սաքուլ, եթէ մէկ մարդ
հայոց եկեղեցին, որը դու այնքան սիրում ես,
կը պղծէ, նրան անասունների ախտաատուն կը
լինէ, նրա սրբութիւնները կը կողոպտէ և իր

կնոջ համար զարդեր կը շինէ, նրան քարուքանդ կանէ ու իր տան շինուածքի համար կը բանեցնէ, նրա միջի ժամն ու պատարազը կարգելէ, — ինչ կանէիր, հարցնում եմ քեզանից, դու այդ մարդուն:

— Ես նրան կը սպանէի:

— Ես էլ կը սպանէի, Սաքուլ: — Իսկ եթէ այդ չարագործութիւնները կատարողը մի մարդ չէ, այլ մի ամբողջ ժողովուրդ է, այն ժամանակ ինչ կանէիր:

— Ես կաշխատէի այդ ժողովրդին ոչնչացնել,

— Շատ լաւ, ես էլ նոյնպէս կը վարչէի, Սաքուլ: — Բայց դու կարող ես մի ամբողջ ժողովուրդ ոչնչացնել:

Սաքուլ մի քանի վայրկեան մտածեց և ոչնչ չը գտաւ պատասխանելու: Յանկարծ մի նոր գիւտ արած մարդու նման ուրախութեամբ ասաց.

— Ես, ի հարկէ, մինակ չէի կարող ոչնչացնել, բայց ես հնարներ կը մտածէի:

— Այդպէս է, սիրելի Սաքուլ, ես էլ հնարներ մտածէի: — Բայց դու ճանաչնում ես մի ժողովուրդ, որ այդպէս վատ է վարվում մեր հաւատի, մեր եկեղեցու դէմ:

— Ես չեմ ճանաչում մի այդպիսի ժողովուրդ, ասաց Սաքուլ: — Ես Թիֆլիսից այն կողմը չէր գնացած, և բնաւ տեղեկութիւն չունէր ոչ միայն Հայաստանում բնակվող օտար ազգերի մասին, այլ նոյն իսկ հայերի մասին: Նա ծանօթ էր Վրաստանի և Կովկասի լեռնաբնակների հնտ միայն: Այդ պատճառով թէ կը ստիպվեցաւ մանրամասնաբար պատմել նրան, թէ Թիֆլիսից այն կողմը կայ մի ընդարձակ աշխարհ, որ Հայաստան է կոչվում, թէ այդ երկիրը հայոց բնիկ հայրենիքն է, թէ հայերը մի ժամանակ այնտեղ թագաւորութիւն ունէին, իսկ այժմ տիրում են այնտեղ մահմեդական պարսկեներն ու թուրքերը: Յետոյ նկարագրեց հայերի թը- նում մահմեդականները հայոց կրօնի և եկեղեցու դէմ:

Սաքուլ ձեռքը տարաւ դէպի ճակատը, մի քանի անգամ շփեց նրան, գուցէ իր գլուխ մի

միտք կարողանայ դուրս բերել, բայց ոչինչ չը
գտաւ: Յետոյ լցրեց զինու բաժակը, խմեց, իր
մտածութեան ընդունակութիւնը աւելի զօրաց-
նելու համար, բայց դարձեալ ոչինչ հնար ցոյց
տալ չը կարողացաւ:

—Իմ խելքումը ոչինչ չէ գալիս, ասաց նա
երկար մտածելոց յետոյ:

—Տեսնում ես, Սաքուլ, դու բաւական խե-
լացի մարդ ես, եօթը սատանայի չափ բան զի-
տես, բայց այդ հասարակ բանը չես հասկա-
նում:

Բէկի յանդիմանութիւնը գերեվաճառի անհաս-
կացողութեան մասին սաստիկ ծանր թւեցաւ
նրան, մանաւանդ երբ լսեց այն մեծ գովա-
սանքը, թէ նա «եօթը սատանայի չափ» բան
զիտէ: Այդ բաւական ազգեց նրա ինքնասիրու-
թեան վրա, թէ ինչու ինքը անընդունակ դուրն-
վեցաւ բէկին մի որ և է հնար ցոյց տալու մէջ:

—Ես քեզ կը սովորեցնեմ մի հնար, Սաքուլ,
ասաց նրան բէկը:

—Ի՞նչ հնար:

—«Պէտք է շունը շան հետ կռուացնել»: —
Հասկանում ես այդ խօսքերը, Սաքուլ:

—Հասկանում եմ... բայց չը կիտեմ որ շունը
որ շան հետ պէտք է կռուացնել:

—Ես քեզ կասեմ, սիրելի Սաքուլ:
Երբ խօսակցութիւնը համում էր այն կէտին,

որ բէկը մօտենում էր իր նպատակին, նա գործ
էր ածում «սիրելի» բանը, որը սաստիկ դիւր
էր գալիս Սաքութիւն, մանաւանդ որ այդ բառը
լավում էր Վրաստանի առաջին պետական մար-
դու բերանից:

—Ասա, սիրելի Դաւիթ, որ շունը որ շան
հետ... հարցրեց գերեվաճառը, իր կողմից ևս
քնքութիւններ գործ դնելով:

Բէկը ուշաղութիւն չը դարձնելով նրա յան-
դրգնութեան վրա, որ իրան թոյլ էր տալիս այս
սատիֆան ընտանեկանութիւնն, շարունակեց.

—Դու մի քանի րոպէ առաջ ասեցիր, թէ
Գաղատանի իմամի հետ լաւ ծանօթ ես, թէ նրա
հետ ծունկ ծնկի տուած ես նստում, այդպէս չէ:

—Ուղիղ այդպէս է, ինչպէս ես ու դու նըս-
տած ենք:

—Ուրեմն դու ազգեցութիւն ունես նրա
վրա:

—Ինչ որ ասելու լինեմ, խօսքս գետին չի
զգի:

—Եւ իմամը Դաղստանում առաջի մնացն է:

—Նրանից յետոյ միայն Աստծուն են ճանա-
չում:

—Հիմա լսիր, Սաքուլ, շեշտեց բէկը, գերե-
վաճառի ուշաղութիւնը դարձնելով իր վերջին
խօսքերի վրա. —պէտք է այդ իմամին կռուաց-
նել Հայաստանում բնակվող մահմեդականների

հետ, պէտք է միմեանց խեղուել տալ, որ հայերը ազատվեն:—Այժմ հասկանում ես, թէ որ շոնք որ շան հետ պիտի կռուացնել:

—Հասկանում եմ... բայց ինչ հնարքով, հարցրեցի գերեվաճառը, —ձեզ յայտնի է որ մահմեդականին մահմեդականի հետ կռուացնելը բաւական դժուար բան է:

—Այդ ուղիղ է, եթէ նրանք մի և նոյն աղանդին պատկանէին, բայց Դաղստանի լէզկիները պատկանում են սուննի աղանդին, իսկ Հայաստանի թուրքերն ու պարսիկները պատկանում են շիա աղանդին: Խոկ այդ երկու աղանդները այնքան հակառակ են միմեանց, որ իւրաքանչիւր աղանդաւորը մի առանձին կրօնական առաքինութիւն է համարում իր հակառակորդին սպանելը:

—Այդ լաւ է, եթէ այդպէս լինէր, խօսեց գերեվաճառը և աւելի սրեց իր ուշադրութիւնը:

—Ես Հայաստանից տեղեկութիւններ եմ ըստացել, Սաքուլ, այնաեղ մի այնպիսի անցք է պատահել, որ եթէ Դաղստանի իմամը լսելու լինի, սաստիկ կը կատաղի այնտեղի մահմեդականների վրա:

Եւ բէկը սկսեց պատմել այդ անցքի մանրամամութիւնները, ասաց, որ Սիւնեաց աշխարհում գտնվում են փոքրաթիւ մահմեդականներ, որոնք պատկանում են մի և նոյն աղանդին, որը

պաշտում են Դաղստանի լէզկիները. այդ մահմեդականները՝ կատարելիս են եղել մի կրօնական տօն իրանց խալֆայի՝ Օմարի յիշատակի համար: Տեղային միւս մահմեդականները, որոնք թւով աւելի շատ են, որոնք հակառակ աղանդին են պատկանում և որոնք սաստիկ ատում են, նզովում են Օմարին,— այդ տօնախմբութեան օրը յարձակվում են տօն կատարողների վրա, շատերին սպանում են, շատերին վիրաւորում են և նրանց մզկիթները լեցնում են սատկած չներով:— Մի այդպիսի անցք եթէ լսելու լինի Դաղստանի իմամը, ես հաւատացած եմ, որ առանց պատիի, առանց վրէժինդրութեան չի թողնի իր կրօնակիցներին այսպէս բարբառոսաբար անարգողներին:

— Ես էլ այսպէս եմ կարծում, պատասխանեց գերեվաճառը բէկի պատմութիւնը լսելուց յետոյ:— Ճիմայ հաւատացած եմ, որ կարելի է շոնը շան հետ կռուացնել:

— Բայց այդ շուտ պէտք է լինի, շատ շուտ, ասաց նրան բէկը, — գոնէ այս ամսի վերջում:

— Ի՞նչու անպատճառ այդ ամսի վերջում, հարցրեց գերեվաճառը:

— Այդ իմ գիտնալու բանն է, Սաքուլ, գու այն ասա, կարող ես այդ գործը գլուխ բերել:

Սաքուլ խկոյն չը պատասխանեց: Բէկը համոզված լինելով, որ իր առաջվայ քարոզները

հայոց ազգի, հայոց երկրի և հայոց եկեղեցու մասին այնքան չէին կարող դրդութիւնը, որքան մի քանի դեղին ոսկիներ, ասաց նրան.

—Եթէ դու այդ յանձնաբարութիւնը կը կատարես, կը ստանաս ինձանից հարիւր ոսկին Գերեվաճառի դէմքը փայլեց ուրախութիւնից:

—Լիբր, շարունակեց բէկը, —դու հէնց այս առաւօտ պէտք է ճանապարհ ընկնես դէպի Դաղստան: Գեղ չետ կը գայ իմ կողմից, որպէս աշխատակից, զաղախեցի դող Ծառուրը, Նա կառաջնորդէ չէղիներին դէպի Սիւնեաց աշխարհը:

—Այդ հարիւր ոսկին Երբ կտրող եմ ստանալ, հարցրեց գերեվաճառը:

—Կէսը այս բօպէիս, իսկ մնացած կէսը, երբ իմ յանձնաբարութիւնը կատարած կը լինես: Բայց իմացած եղիր, Սաքուլ, եթէ դու որ ելցէ կերպով կը զաւաճանես ինձ, իմ մարդիկը անպատճառ քո գլուխը կը կտրեն:

—Այդ ես իմանում եմ, պատասխանեց գերեվաճառը և ընդունեց յիսուն սսկին:

ԺԴ.

Մի և նոյն գիշերը, Երբ Դաւիթ բէկը Սաքուլի հետ առանձնացած էր իր ննջարանում,

Բայինդուր իշխանը միայնակ նստած իր սենեակում, մէկին անհամբե՛տութեամբ սպասում էր: Զիթային ճրագի աղօտ լոյսը, որ աւելի ևս մոայլվել էր իշխանի անընդհատ ծխվող չիբուլսի մուխով, հաղիւ կարողանում էր լուսաւորել սենեակի մէջ ափրող մթութիւնը: Պարսից թագաւորի «բաթման ղիճի» աղքատ բնակլարանը իր կարգուսարքով բոլորովին համապատասխանում էր նրա սպարտական խստակեցութեանը, որը նա ծայրացելութեան էր հասցրել: Նա հոգով ճգնաւոր էր, իսկ մարմնով զինուոր: Մերկ սենեակի մէջ ղրած էր մի փոքրիկ տախտ, առանց սփոռոցի, որի վրա պառկում էր նա: Տարվայ բոլոր հղանակներում նրա անկողինը բաղկացած էր իր եափունջուց: Աննետակի մէջ կրակ երբէք չէր վառվում. «Կրակը մարդու ներսիցը պիտի չէր վառվում. «Կրակը մարդու ներսիցը պիտի պատասխանում էր նա, երբ հարցնում էին, թէ թնչու չէ վառել տախտ սենեակը: Մի պատից քարշ էին ընկած իշխանի զէնքերը. էլ ուրիշ ոչինչ չը կար այնտեղ: Այդ տխուր, լոյսից և օդից զրկված բնակլարանին կից էր ախոռատունը: Այնտեղ կապված էր նրա մտերիմ ձին, այնտեղ բնակվում էր նրա նոյնքան մտերիմ ծառան, որի հետ այն աստիճան ընտանեցած էր, որ շատ անդամ մոռանում էր, ընտանեցած էր, որ շատ անդամ մոռանում էր, արգեօք նա է աէրը թէ ինքը: Այդ էր նրա արգեօք՝ նա է աէրը թէ ինքը: Այդ էր նրա ընտանիքը՝ ծին, ինքը և ծառան, —եթէ աւելի-

լացնենք զրանց վրա նրա ահագին գայլանման շունը, ընդամենը չորս հոգի:

Իշխանը անհանգիստ էր. տախտի վրա պառկած, անդադար մի կողքից դէպի միւսն էր շուռդալիս: Նրա անհանգստութիւնը ուրախութեան անհանգստութիւն էր. դա նոյնքան ծանր է, որքան ախրութիւնը: Լցված սիրտը կամենում էր թեթեացնել. իր ուրախութեանը կամենում էր մի բարեկամի: Ես մասնակից անել: Բայց «ձւր մնաց նա, ինչու ուշացաւ»: Նա վեր կացաւ, սկսեց անցուդարձ անել սենեակի մէջ. այդ ես շուտով ձանձրացրեց նրան: Գուրս եկաւ բակը: Գարնանային խաղաղ գիշերը բուրում էր զուարթացուցիչ անուչուութեամբ: Ամենուրեկը ափրում էր լուռութիւն. ամբողջ Մըցիէթը քնած էր: Նա սկսեց ման գալ բակում, որի տարածութիւնը շատ ընդարձակ էր: Գրեթէ հարիւր անդամ անցաւ նա բակի մի ծայրից դէպի միւսը, երբեմն կանգնելով, և ցանկապատից նայելով դէպի խաւար փողոցը: «Ո՞ւր մնաց, ինչու ուշացաւ».... անհամբերութեամբ կրկնում էր նա: Կթէ մէկը այն անազան գիշերային պահուն տեսնելու լինէր իշխանին այդ տենդային զրութեան մէջ, անպատճառ կը մտածէր, թէ նա սպասում է իր սիրուհուն, բայց նրան այժմ հազիւ թէ կարող էր զրաւել կնիկների ամենագիւթեղեցին անդամ նա սպասում էր Միթթար սը-

պարապետին, որ ժամադիր էր եղած իր մօտ գալու մի քանչիք կարեոր հարցերի մասին խորհելու համար:

Վերջապէս եկաւ նա: Բակի ցանկապատից, որ այնքան բարձր չէր, տեսաւ նա, որ մէկը փողոցով գալիս էր: Ապասաւորը լուսաւորում էր նրա ձանապարհը ձեռքի լապտերով: Իշխանը առանց իր ծառային զարթեցնելու, ինքը գնաց բակի դուռը բաց արեց:

— Լաւ հիւանդի ինձոր բերող կը լինես, մինչև բերես, նա հոգին կը տայ, ասաց իշխանը, բակի դուռը կրկն կողպելով:

— Ես գիտէի, որ այսպէս պիտի ասես, պատասխանեց սպարապետը, — իսկ եթէ գիտենաս իմ ուշանալու պատճառը, չես մեղադրի ինձ:

Երկուսն էլ մտան իշխանի սենեակը: Սպարապետի հետ եկող ծառան գնաց ախոռասունը սպասելու իր տիրոջը:

— Հիմայ պատմիր, ինչ շինեցիր, հարցրեց սպարապետը, նստելով տախտի վրա:

— Գործը ինքն իրան շինվեցաւ.... և ես հաւատացած էի, որ այսպէս էլ կը լինէր, պատասխանեց իշխանը ուրախութեամբ: Մի քանի ժամ առաջ ինձ մօտ էին, բոլորն էլ երդվեցան, թէ կը գան մեղ հետ:

— Բայց դու չը պիտի յայտնէիր նրանց գործի բուն սպասակը:

— Բայինդուրը խելքը հացի ու պանրի հետ չի կերել. նա այդ սատանայութիւնը շատ լաւ է իմանում: Նա զիտէ, որ բահը չը պիտի հասկանայ, թէ ինչ նպատակով մշակը նրանով փորում է հողը:

— Ուրեմն գու. ինչ կերպով բացատրեցիր նըրանց:

— Շատ հասարակ կերպով. ևս այսքանը միայն ստեցի, թէ բէկը մի սարսափելի տեղեկութիւն է ստացել. Հայաստանում կազմիել է մի մեծ դաւադրութիւն. մահմեդականները պատրաստվել են հայերին կոտորելու և հայերը բէկից օգնութիւն են խնդրում: Այդ հէնց որ լսեցին, բոլորը կատաղեցան, բոլորը վառվեցան, և առանց իմ թելադրութեան, իրանք պատրաստականութիւն յայտնեցին Հայաստան գնալու և իրանց հայրենակիցներին օգնելու: Այդ չափազանց ուրախացրեց ինձ. ևս մինչև այսօր կարծում էի, թէ կախեթի գինին, վրացիներից ստացած անհոգութիւնը իսպառ փչացրել է զրանց, բայց այսօր համոզվեցայ, որ հայի սրտում չէ հանգչում հայրենասիրութեան կայծը, նա հանդամանքներից փոքր ինչ նսկանում է միայն. բաւական է փշել նրա վրա և ահա նա կը բորբոքի, կը բոցավառվի...

Վերջին խօսքերը արտասանեց իշխանը խիստ զգալի սգեստութեամբ, երեսում էր, մի և նոյն

սուրբ հոգրը բորբոքվում էր և նրա սրտում: Բայց սպարապետը բաւական սառնութեամբ հարցուց,

— Ո՞վքեր են ցանկացողները:

— Այստեղ գտնվող բոլոր հայ վաճառականները. լուեցի Աֆթանովիւ գնդապետը, մեծ Գիօրգին, փոքր Գիօրգին, երեանցի կազ Յհանէսը, շուշեցի Զաքարիայ իշխանը, նախիջեանցի պատանի Մօսին, շամախեցի Թադէսս բէկը, գանձակեցի Եղիազար աղան, վաղարշապատցի Յարութիւն տանուտէրը, — բայց գրանցից կան ուրիշները, որոնց գու չես ճանաչում: Հաշուել եմ, մեր բոլորի թիւը քառասուն հոգի կը լինի այս տեղից գուրս գալու ժամանակ:

— Բայց զու վասահութիւն ունեմ այդ մարդկանց հաւատարմութեան վրա, հարցուեց սպարապետը ցած ձայնով:

— Բոլորին իմ հինգ մատի պէս ճանաչում եմ. չափազանց ճարպիկ, յաջողակ, փորձված և վերին աստիճանի անձնանուէր մարդիկ են: Եթէ ասելու լինես՝ կրակի մէջը մտիր, իսկոյն կը նետվեն: Եւ զլսաւորն այն է, որ այդ մարդիկներից ամեն մէկը ունի իր պատմութիւնը, տուրված է իր տոհմային աւանդութիւններով: Նրանցից չը կայ մէկը, որ իր սրտում չը կրէր մի գաղանի վերք, որ ստացել էր բռնութեան կոպիտ զգալիութեամբ, եւ հէնց այդ տեսակ հալածված, տանջառքից: Եւ հէնց այդ տեսակ հալածված, տանջ-

ված և վշտացած մարդիկը մեղ պէտք կը գան,
—Ես էլ այսպէս եմ կարծում, ասաց սպարա-
պետը և նրա մռայլված դէմքը, որ մինչև այժմ
բաւական տխուր էր երեսում, սկսեց փոքր առ
փոքր պայծառանալ:

Հաղորդելով սպարապետին իր տեղեկութիւն-
ները, իշխանը հարցրեց.

—Հիմայ դու պատմիր, ինչպէս վերջացրեց
բէկը մեծ պարոնի հետ. ևս այսօր ժամանակ
չունեցայ նրան տեսնելու:

—Ես տեսնվեցայ, շատ լաւ է վերջացրել,
պատասխանեց սպարապետը, —մի այնպիսի բան
է հնարել, որ կարողացել է մեծ պարոնի հաճու-
թիւնը ստանալ:

—Այսպիսի դէպքերում փոքր ինչ խորաման-
կութիւնը, իմ կարծիքով, ներելի է, ասաց իշ-
խանը ծիծաղելով, —ես կարող եմ երեակայել,
թէ ինչ բան հնարած կը լինի:

—Նա յայտնել է մեծ պարոնին, թէ զիտա-
ւորութիւն ունի էջմիածին ուխտ գնալու, թէ
այնտեղ մեռն պիտի եփիլի, ցանկանում է ներ-
կայ գտնվել այդ հանդիսան: Եւ այս առիթով
նպատակ ունի այցելել իր հայրենիքը, որից
շատ տարիներ բաժնված է:

—Վատ չէ հնարել, ասաց իշխանը շարունա-
կելով իր ծիծաղը, —ուխտագնացութիւնը մնա-
հաւատների վրա միշտ մեծ աղքեցութիւն է ա-

նում: Իսկ եթէ բէկը պարզ յայտնելու լինէր
իր նպատակը, ինչ ևս կարծում, գուցէ մեծ պա-
րոնը իր կողմից կօգնէր նրան:

—Նա վրայիների օգնութեան վրա վստահու-
թիւն չունի: Եւ մեծ պարոնը կախված լինելով
պարսիկներից, գուցէ ինքը առաջնը կը լինէր,
որ կը մատնէր նրան, պարսիկներին մի ծառա-
յութիւն անելու համար:

—Շատ հաւանական է, ասաց իշխանը, —զրան-
ցից ամեն բան կարելի է սպասել: Իսկ այդ
ուխտագնացութեան պատրուակը կասկածի մէջ
չի գցի մեծ պարոնին:

—Չը կարծեմ, որովհետեւ բէկը վաղուց խօ-
սում էր այդ ուխտագնացութեան մասին, իսկ
մեծ պարոնը միշտ յետ էր զցում: Առաջ նա
սուրբ տեղերի անունով դիտաւորութիւն ունէր
ճանապարհորդել Հայաստան, նրա զրութիւնը
անձամբ հետազոտել և յետոյ սկսել գործը, իսկ
այժմ հանգամանքները շտապիցը ին նրան:

—Այդ բըր:

—Իեռ մի տարի առաջ, երբ տակաւին
Ախնեաց աշխարհից այդ նամակները չէին ըս-
տացված:

—Զարմանալի ծածկամիտ մարդ է եղել այդ
բէկը, ասաց իշխանը զլուխը շարժելով. —Ես
մինչև այսօր հաւատացած եմ, որ նա ինձանից
ոչնչ գաղանիք չունի, բայց հիմայ որիշ կերպ

է դուրս գալիս: Մի տարի առաջ նա մտածում էր մի խարուսիկ ուխտագնացութեան վրա, իսկ ես այդ մասին գեռ ոչինչ չը գիտեմ:

—Գուցէ այժմս էլ ես և դու շատ բաներ չը գիտենք, ինչ բաների մասին որ մտածում է նա, պատասխանեց սպարապետը ժամելով, —բայց պէտք է հաւատանք, որ նրա վարմունքները, ինչ տեսակ և լինէին նրանք, անկեղծ են և գործի օգտին են ծառայում: Այս պատճառով, մինք նրանից խիստ պահանջող չը պիտի վինենք, և պիտի բաւականանանք այնքանով միայն, որքան որ նա հարկաւոր է համարում մեզ հաղորդել: Նրա ազնութիւնը մեծ երաշխաւորութիւն է, որ նա չի խարի մեզ: —Կարծեմ դու ինձ հետ կը համաձայնվես, որ նա չափազանց ազնիւ մարդ է:

—Բոլորովին համաձայն եմ, պատասխանեց իշխանը, —նա աւելի ազնիւ է, որքան հարկաւոր է, որ մարդս լինի ազնիւ:

Թոպէական մտածութիւնից յետոյ հարցրեց նա. —Իսկ այդ պարոնները ինչ անունով պիտի գան մեզ հետ:

—Դարձեալ ուխտագնացութեան անունով, պատասխանեց սպարապետը: —Իբրև հայ, էջմիածին գնալու համար, ոչ ոք նրանց մասին կառկած չի տանի: Բացի զրանից, մի ուրիշ բան կայ. այդ պարոնները թէն այստեղ զանազան պաշ-

տօններ ունեն, բայց բոլորն էլ գտանվում են բէկի հովանառութեան, ներքոյ և կազմում են նրա թիկնապահների խումբը: Այս մտքով բէկը շատ պատճառներ ունի նրանց իր հետ տանելու: Ի հարկէ, նա իր պատուի ու աստիճանի համեմատ պիտի ունենայ իր թիկնապահները, իր սպիտան, և քառասուն մարդը շատ չէ նրա համար:

—Ի հարկէ շատ չէ և ցանկացողները քառասուն մարդից աւել չեն լինի, առաց իշխանը: —Բայց դու գիտես, թէ ումը յանձնվեցաւ բէկի պաշտօնը:

—Արշլին, միայն առժամանակեայ կառավարութեան համար, պատասխանեց սպարապետը: —Բայց պէտք է խոստովանած, որ բէկը այդ մի քանի տարվայ ընթացքում այնքան բարեկարգեց Վրաստանը, այնքան լաւ կարգի գցեց նրա խանգարված գործերը, որ այսուհետև շատ հեշտ է կառավարել նրան, միայն թէ կառավարիչները աշխատէին պահպանել այն, ինչ որ նա հիմնեց: Բայց ևս հաւատացած եմ, որ նրա բացակայութեան ժամանակ կրկին ամեն ինչ տակն ու վրա կը լինի:

—Իսկ ինչ կարգադրութիւններ արեց բէկը իր կալուածների և զիւզերի վերաբերութեամբ, հարցրեց իշխանը:

—Ոչինչ, նա իր կալուածների մասին ամեններն չի մտածում, բոլորը թողնում է:

— Վաստ չէր լինի, եթէ ծախէր, գուցէ փողերը
մեղ պէտք կը դային:

— Մի և նոյնը ես առաջարկեցի նրան, ասաց
սպարապետը, — բայց նա ինձ պատախանեց, թէ
«պատերազմի գործը պէտք է պատերազմով սը-
նանվի»:

— Այսուամենայնիւ, սկզբում միջոցներ հար-
կաւոր են:

— «Ինձ խիստ փոքր միջոցներ հարկաւոր են
գործը սկսելու համար, իսկ այդ միջոցները ու-
նեմ ես, ասում է բէկը: — Եւ իմ կարծիքով, նրա
անձնավայրահութիւնը շատ ուղիղ է: Կալուած-
ների վաճառելը կարող էր միայն կասկած յա-
րուցանել և փշացնել այն ծրագիրը, որ կազմել
է նա: Իսկ դործի սկսելու համար ես էլ
համաձայն եմ նրա հետ, որ մեծ միջոցներ պէտք
չեն: Ազէքսանդր մակեդոնացիները, Լէնկ-թէ-
մուրները, Զինդիւ-խանները իրանց հետ գտնձ
չեն մասն ածում, այլ կերակրվում էին իրանց
սրով:

— Բայց եթէ մենք չը գտնենք Հայաստանում
այն նախապատրաստութիւնները, որ խոստա-
նում են մեղ Սիւնեաց աշխարհից ստացված նա-
մակներով, — այն ժամանակ, կարծեմ, բանը կը
դժուարանայ և փոքր միջոցներով մի նշանաւոր
գործ կատարել անհնարին կը լինի, ասաց իշ-
խանը:

— Ես աւելիք բան թէ դու, սիրելի Բայինդուր,
սովորած եմ թերահաւատութեամբ վերաբերվել
գէպի անակնկալ բախտի յաջողութիւնը, պա-
տասխաննեց սպարապետը, — իսկ այդ գործում
համոզված եմ, եթէ Սիւնեաց աշխարհում ոչնչ
նախապատրաստութիւններ ես չը լինեն, մեզ
դարձեալ կը յաջողվի: Դու քանի բայց առաջ
լինքդ ասեցիր, թէ հայերի սրտում բոլորովին չէ
հանգած հայրենասիրութեան կայծը, այլ հան-
գամանքներից փոքր ինչ նսեմացած է միայն.
բաւական է վչել նրա վրա և խկոյն կը բոր-
բռքվի, կը բոցավառվի.... Դրանք քո խօսքերն
են: Իսկ բոցավառել, բորբռքել հայրենասիրու-
թեան սրբազն հուրը՝ մենք կարող ենք: Եւ
այդ կը լինի գործի յաջողակ սկիզբը. իսկ վախ-
ճանը Ասուծոյ ձեւքումն է: Ես այնքան հա-
ւատում եմ Հայաստանի աստղին, որքան հա-
ւատում եմ, թէ կայ երկնքում մի արդար Դա-
տաւոր, որը վերջապէս կը լոէ թշուառի ձայնը
և նրան ուժ ու զօրութիւն կը տայ փշելու
ամբարտաւան բռնակալի եղջբրները:

Նրանք գետ երկար խօսում էին և խորհում
էին միմեանց հետ, մինչև զարմացած նկատեցին
սենեակի հեղ լուսամուտներից վաղորդեան ա-
րեգակի ճառագայթները, Այժմ միայն հասկա-
ցան, որ ողջ գիշերը լուսացրել են:

ԺԵ. Կ.

Վերջին օրերում Դաւիթ բէկը սաստիկ զբաղված լինելով իր հայրենիքը գնալու պատրաստութիւններով, համարեա մոռացել էր այն, ինչ որ նրա սրտին աւելի մօտ էր, ինչ որ նրա համար աւելի թանգագին էր, Նա մոռացել էր գեղեցիկ թամարին։ Հայրենիքի աղատութեան բաղձանքը այն աստիճան տիրել էր նրա սրտին, այն աստիճան լսրել էր նրա ամբողջ մտաւոր գործութիւնը, որ նա գտանվում էր մի տեսակ հոգեկան յափշտակութեան մէջ, որ հասցնում էր ինքնամոռացութեան, և ամեն առարկայ, ամեն մտածութիւն, որ չէր նպաստում այդ գաղափարին, նրա համար ոչ միայն նշանակութիւն չուներ, այլ նրա վրա ուշադրութիւն անդամ դարձնել աւելորդ էր համարում։

Բոլոր անհաժեշտ նախապատրաստութիւնները կարգի դնելուց յետոյ, մի դիշեր, առանձնացած իր ննջարանում, զրում էր նա իր բարեկամ Ստեփաննոսից սոտացած նամակի պատասխանը, Նամակաբեր Աղասին, ճանապարհի հագուստով, բէկի ընդունարանում սպասում էր, որ նամակը վերջացնէ, իրան տայ և ինքը իսկոյն ճանապարհ ընկնի։ Նրա թամքած ձին բակում պատրաստ կանգնած էր։

Իր նամակի մէջ բէկը յայտնում էր օրը, ժամը, երբ կը թողնէ վրաստանը և կուղերպի

դէպի հայրենիքը, Յաշտնում էր անունները այն քաջերի, որոնք իր հետ պիտի լինեն։ Մանրամասնաբար պատուէրներ էր տալիս այն զգուշութիւնների մասին, որ պէտք էր զործ գնել իրան ընդունելու ժամանակ, որպէս զի իր ներկայութիւնը Սիւնիաց աշխարհում սկզբում բոլորովին գաղտնի պահէրը Նշանակում էր տեղը, ուր առաջ պիտի տեսնվէր և մի այս Ստեփաննոսի հետ, ապօտամբութեան սկզբնական գործողութիւնների մասին խորհելու համար։ Ուրոշում էր օրը, որ նա պիտի սպասէ իրան նշանակալ տեղում։ Վերջացնում էր նամակը, յայտնելով, թէ Սիւնեաց աշխարհից ստացած եպիսկոպոսների, հոգեոր առաջնորդների, մէլլվանների և տանուտէրների հանրագրի պատասխանը չը զլեց, զլիսաւորապէս այն պատճառով, որ այսքան անձինքների մէջ որ և իցէ խորհուրդ իրեմ գաղտնիք պահպանել անհնարին էր։

Երբ կնքում էր նամակը, յանկարծ նրա ձեռքերը գողացին և դէմքը սպիտակ կտաւի նման գունաթափկեցաւ։ Այս ժամանակ միայն նա մտաբերց գեղեցիկ թամարին։ Այդ նամակը վճռում էր նրանց միմեանցից անջատումը և զուցէ յաւիտեան անջատումը... Յանկարծակի հարուածք ստացած մարդու նման սարսափելի խոռվութեան մէջ ընկաւ։ Նա, կարծես, տեսնում էր սիրած աղջկայ պատաստալից աչքերը

և լսում էր նրա աղաջաւոր ձայնը. «Ճեր ես գը-
նում... ինձ բնչու ես թողնում... միթէ այդ էր
մեր ուխտը... մեր պայմանը»...

Նամակը մի կողմ դնելով, նա ձեռքը տարաւ
դէպի ճակատը, աչքերը ծածկեց. իր մտածու-
թիւնները աւելի ամփոփելու համար: Ամբողջ
տարիների ընթացքում պատահած անցքերի մի
երկար շարք, իրանց տխուր և ուրախ գոյներով,
նկարվեցան նրա աչքի առջև: Նա յիշեց այն
թանգագին ժամերը, որ անցուցել էր թամարի
հետ, յիշեց այն անուանման սէրը, այն քնքոյշ
հրեշտակային միմիթարութիւնը, որով նա քաղց-
րացնում էր իր կեանքի դառնութիւնը օտար
աշխարհի պանդիստութիւն մէջ: Եւ այդ սէրը
աւելի մեծ արժէք ունէր նրա համար գլխաւո-
րապէս այն պատճառով, որ նազելի, իշխանա-
կան օրիորդը սիրեց նրան իր վիճակի ամենա-
թշուառ ժամանակում, երբ ինքը մի աննշան
հովու էր, երբ նրա սպասաւոյը լինելու արժա-
նաւորութիւն չունէր: Իսկ այժմ իր փառքի ա-
մենաբարձր աստիճանին հասած, երբ կարող էր
բախտաւորացնել թամարին, թողնել նրան, գը-
նալ, և գուցէ յախտեան բաժանվել նրանից,—
այդ ժանր էր, սաստիկ ծանր մի զգայուն սրտի
համար, որպիսին էր բէկի սիրութ: Ի՞նչ ասել,
բնչպէս բացատրել թամարին իր գնալու նպա-
տակը, բնչ խօսքերով հանգստացնել նրան: Նը-

րան իսօ չէր կարելի խաբել, թէ ուխտ եմ գնում
և շուտով կը վերադառնամ: Նրան պէտք էր
պարզ ասել, թէ գնում եմ կրակի և արեան մէջ,
— գնում եմ սարսափելի վտանգների և փորձան-
քների հետ պատերազմելու: Արդեօք կը զիմա-
նար սիրող օրիորդի քնքոյշ սիրութ այդ սոսկալի
խօսքերին: Արդեօք ինքն այնքան ուժ և կամքի
հաստատութիւն կունենամ, որ յաղթէր իր ըգ-
դացմունքներին, որ չընկճվէր նրա արտասուքի
առջև, երբ լսելու լինէր սցդ խօսքերը. «ախ, մի
գնա... եթէ քեզ մի օր չը տեսնեմ, ես կը մեռ-
նեմ...»

Հարիւրաւոր այս տեսակ հարցեր ծագեցան
նրա մտքում, խոռովում էին, տակնուվրա էին ա-
նում նրա սիրութ, և այն մարդը, որ մինչև այսօր
ոչ մի զժուարութիւն առջև խոնարիված չէր,
այժմ գտանվում էր շուարած, շփոթված և բոլո-
րովին անել դրութեան մէջ:

— Ո՛չ, ասաց ինքնիրան երկար մտատանջու-
թիւնից յետոյ, — թամարը բարձր է բոլոր կա-
նացի թուլութիւններից, ես այդ մտածութիւն-
ներով ստորացնում եմ նրա արժանաւորութիւնը:
Նա ինքը կը ներշնչէ իմ մէջ իր հոգին. նա ինձ
ուժ և զօրութիւն կը տայ յաջողութեամբ կա-
տարելու այն մեծ գործը, որի համար հայրենիքը
կոչում է ինձ:

Այդ խօսքերից յետոյ նա վեր առեց նամակը

և կնքեց: Յետոյ ներս կանչեց Աղասուն, որ ընդունարանում սպասում էր:

—Դու բոլորովին պատրաստ ես, հարցրեց նըրանից:

—Պատրաստ եմ, ձին բակումը սպասում է, այս րոպէիս կարող եմ ճանապարհ ընկնել, պատասխանեց սուրհանդակը, ընդունելով նամակը և դնելով իր կաշեայ թղթապահի մէջ:

—Գիտես, Աղասի, ասաց նրան բէկը, —եթէ դու այդ նամակը կորցնելու լինես, եթէ դա մեր թշնամիների ձեռքը անցնելու լինի, այն ժամանակ շատ բան կը կարցնենք:

—Այդ մասին անհոգ կացէք, տէր իմ, Աղասին երեխայ չէ: Տեսնում էք այդ հագուստը, որի մէջ մտել եմ, այդ հագուստով ես անհուն գաղաների բանակի միջով կարող եմ անցնել և հասնել մինչև մեր երկիրը:

Դա ոտքից ցղլում հազնված էր լէզզու ձեռվ:

—Ուրեմն մի ուշացիր, բարի ճանապարհ եմ ցանկանում քեզ, ասաց բէկը, տալով նրան մի քանի ոսկիներ ճանապարհին ծախսելու համար:

—Պէտք չէ, պատասխանեց Աղասին հրաժարվելով, —եթէ ճանապարհին փող հարկաւոր լինի, ես կարող եմ ճարել:

—Ի՞նչ կերպով:

—Մէկի վզակոթին կը տամ ու ձեռքից կառնեմ:

—Այդ լաւ չէ, Աղասի, ասաց բէկը ծիծաղելով:

—Ո՞վ է ասում, որ յաւ է, բայց ինչ պէտք է արած, այդ իմ սովորութիւնն է... պատասխանեց քաջասիրտ աւազակը, և խոնարհվելով գրկեց բէկի ոտները:

—Մի ուշացէք, տէր իմ, շուտ եկէք, ամեն մի կորցրած րոպէն թանգ է մեզ համար, ասում էր նա աղերսելով, —հայոց խեղճ ժողովաւրդը սպասում է ձեզ...

Բէկը սասափիկ շարժված այդ խօսքերից, ձեռքը տարառ, վեր բարձրացրեց նրան: Նրա զարմանքը մեծ եղաւ, երբ նկատեց երիտասարդի աչքերում արտասուք: Նրա ձեռքը բանելով, ասաց նրան:

—Եթէ հայոց բոլոր զիւղացիները քո սիրան ու քաջութիւնը կունենային, այն ժամանակ մեր աշխարհը կորած չէր լինի: Գնա, գարձեալ բարի ճանապարհ եմ ցանկանում քեզ: Խակ ես մի շաբաթից յետոյ իմ հայրենիքում կը լինեմ:

Երիտասարդը, կրկնեն և կրկնեն գլուխ տալով, հեռացաւ: Դրսում մթին գիշեր էր: Բէկի ծառաները, սպասաւորները, աղասինները, հաւաքված բակում, սպասում էին նրան: Մի քանի օրվայ մէջ Աղասին այն աստիճան ընտելացաւ նրանց հետ, որ ամենքը խիստ ցաւելով բաժանվեցան նրանից: Դա բոլորին մնաք բարով ասելով, խանրանից:

չակնքեց երեսը, նստեց ձիու վրա և անհետացաւ գիշերային խաւարի, մէջ:

ԺԶ.

Մէծ պարոնի տան մէջ արդէն բոլորը խօսում էին բէկի ուխտադնացութեան մասին և ումանք պատմում էին, թէ որպիսի ծանրագին ընծաներ է տանում նա ճայոց գանքերի ու նկնդեցականների համար: Միայն թամարը դեռ ոչինչ չէր լսել. բայց նրան սաստիկ անհանդստացնում էր այն հանգամանքը, որ մի քանի օր շարունակ չէր տեսել իր սիրելին:

Գիշերից բաւական անցել էր. աքաղաղները սկսել էին խօսել: Մէծ պարոնի տան մէջ բոլորը քնած էին, բացի թամարից: Նա առանց հանվելու պառկել էր իր անկողնի վրա և տիսուր մույզութեան մէջ նայում էր ճրագի ճանանչներին, թէ որպէս նրանք, իր աչքերը ամեն մի բացուխուփ անելու ժամանակ, զանաղան ձեր էին սահնում: Նրա անկողնի մօտ լուռ կանգնած էր իր մաերիմ աղախինը՝ կատօն, և անհամբերութեամբ սպասում էր, մինչեւ օրիորդը քնէ, որ ինքն էլ գնայ հանդստանայ:

— Կատօ, դարձաւ նա գէպի աղախինը, — այդ բնչ է պատահել, քանի օր է բէկը չէ երեսում:

Կատօն, որի միջնորդութեամբ կատարվում էին երկու սիրահարների գաղտնի տեսութիւնները, ոչինչ չը գտաւ. պատասխանելու: Օրիորդի

հարցումը բաւական անակնկալ եղաւ և աղախինը ամենեին նախապատրաստված չէր մի յարմար պատասխան յօրինելու, որպէս զի իր տիրուհուն իսպառ չը վհատեցնէ:

— Ի՞նչու չես խօսում, կատօ, քեղանից բան եմ հարցնում, կրկնեց օրիորդը:

Ողախինը կմկմաց և դարձեալ ոչինչ չը կարողացաւ խօսել: Այդ աւելի շարժեց օրիորդի կասկածը, և նա գլուխը վեր բարձրացնելով բարձի վրայից, նստեց անկողնի վրա: Ճրագի լոյսը այժմ ուղիղ ընկաւ նրա գունաթափ երեսի վրա, որ մասսմբ սքօզված էր գլխի սև մազերով, որոնք խիտ հիւսերով թափել էին նրա կիսաբաց կուրծքի և թիկունքի վրա:

— Կատօ, Բնչու չես խօսում, ուղիղն ասա, Բնչ է պատահել, դարձեալ հարցրեց օրիորդը այնպիսի մի ձայնով, կարծես, ինքը աւելի վախենում էր այն պատասխանից, որ պիտի տար աղախինը:

— Զէք լսել, նա գնում է... պատասխանեց կատօն, մտածելով, որ իր աղջիկ պարոնին երկար անգիտակցութեան մէջ պահելը աւելորդ էր այնուհետեւ:

— Գնում է... գոչեց օրիորդը սպասակելով... գնում է առանց ինձ տեսնելու, առանց ինձ մի խօսք ասելու... ուր է գնում... Երբ է գնում... Խեղձ աղջկայ աչքերը լցվեցան պատասխով:

Նա երեսը ծածկեց բարձի վրա, սկսեց դառն
կերպով հեկեկալ: Շուարած կատօն չը գիտէր
ինչ անել, ինչով միմիթարել նրան: Նա մօտե-
ցաւ, աշխատում էր հանգստացնել նրան այդ
խօսքերով.

Մի լաց լինիք, ցաւդ առնեմ, թամար, նա
իր երկիրը ուխտ է գնում, շուտով կը վերա-
դառնայ: Նա առանց ձեզ տեսնելու, առանց
ձեղ հետ խօսելու չի գնայ: Հենց այսօր, ձայն,
մեծ պարոնի սենեակից դուրս գալու ժամանակ
ինձ ասաց. «Կատօ, թամարին իմացում տուր,
որ գիշերը պիտի գամ մնաք բարով ասելու:
Բայց ես՝ յիմարս մոռացայ, չը յայտնեցի ձեզ:

Կատօն իրանից հնարեց վերջին խօսքերը,
Բէկը նրան ամենին այդպիսի բան ասած չէր:
Նա մտածեց օրիորդին առժամանակ միայն
հանգստացնել, մինչեւ կամ ինքը կը գնայ բեկին
կը կանչէ, կամ տեսութիւնը կը յետաձգէ հետե-
ւեալ օրը: Բայց վիխանակ հանգստացնելու,
աւելի վրդովեց նրան:

Ո՞ւր է, ապա ինչու չեկաւ, շուտով կէս
գիշեր կը լինի, ասաց նա գլուխը վեր բարձ-
րացնելով բարձի վրայից և վայրենի հայացքով
նայելով իր շուրջը՝ զէ, չէ, նա չի գայ. ես
ինքս կը գնամ նրա մօտ...

Այս խօսքերը ասելով, կատաղածի պէս գլու-
խը բաց, արձակ մազերով նա դուրս պրծաղի

սենեակից և անյայտացաւ դիշերային խաւարի
մէջ: Աղախինը վազեց նրա ետեից և հազիւ կա-
րողացաւ. բոնել, երբ տակաւին չէր գուրս եկել
տան բակից: — Թամար, ցաւդ առնեմ, աղաջում
էր նա, իր գրկի մէջ պահած ունելով ցնորվածի
պէս խելքն ու միտքը կորցրած օրիորդին: —
Թամար, այդպէս չէ կարելի, ինչ կասեն, եթէ
փողոցում քեզ կը տեսնեն: Այդպէս չէ կարելի,
թամար: Բէկը ինքը կը դայ, անարատձառ կը
դայ:

Աղախինի խօսքերը ամենինին չը բեց օրիոր-
դը, նա այն աստիճան սարսափելի հոգեկան
վարովմունքի մէջ էր գտնվում, գուցէ լսեց բո-
ւորը, բայց չը համկացաւ: Բորբոքված զգաց-
ւորը մոհքների կատաղութիւնը նրան ըմբիշի ուժ
և զօրութիւն էր տուել: Կատօն իր զօրեղ ձեռ-
քերակ չը կարողացաւ պահել նրան իր գրկի
մէջ: Նա դուրս պրծաւ և վազեց դէպի բակի
դուռը: Բարեկազգաբար զոհները բաց էին, եթէ
ոչ ամբողջ տունը. կը զարթեցնէր նա: (Մէծ
ոչ ամբողջ տունը. կը զարթեցնէր նա: Այն
պարոնի զոհները սովորաբար գիշեր և ցերեկ
բաց էին թողնում:) Նա անցաւ առանց նկատ-
ում: Պահապանները, կծկված իրանց եա-
փունջների մէջ, նիրհում էին:

Այդ միջոցին կատօն շտապով մտաւ օրիորդի
սենեակը, խլեց այնտեղից մի շալ և վազեց նրա
ետեից: Նա գտաւ օրիորդին փողոցում, գլուխը

բաց, հերացնակ աճապարում էր դէպի բէկի
տունը:

— Ծածկվեցէք այդ շալով, ես կը տանեմ ձեզ,
կանգնեցրուց օրիորդին և սկսեց փաթաթել նրա
գլուխը և ուսերը ընդարձակ շալով:

Փողոցները բոլորովին դատարկ էին և այնքան
մութ, որ մի քայլ այն կողմը ոչ ոքին չէր կա-
րելի տեսնել: Նրանք դուրս եկան բնակութիւն-
ներից և անցան դէպի ամայի դաշտը: Այս կող-
մից աւելի յարմար էր մօտենալ բէկի տանը, թէ՛
ճանապարհը բաւական հեռու էր: Բայց ահա-
զին տարածութիւնը անցան նրանք մի քանի
բոպէի մէջ և շուտով հասան բէկի տան պար-
տէվի ցանկապատին, որ հիւսված էր փշոտ մա-
ցառներից: Օրիորդը մօտեցաւ ցանկապատին,
կամենում էր վեր բարձրանալ նրա վրա և իջ-
նել պարտէզի մէջ: Պարտէզի կողմից մուտքը
դէպի բէկի սենեակը աւելի ապահով էր. անե-
ցիներից ոչ ոք չէր տեսնի նրանց:

— Այդ ինչ էք անում, դուք բոլորովին կը
ծակուեք ձեր մարմինը, ասաց աղախնել բըռ-
նելով օրիորդի փէշից, որ արդէն կատուի նման
ճանկուտում էր փշոտ ցանկապատը:

Բայց օրիորդի խոռվութիւնը թոյլ չը տուեց
լաւ աղախնի զգուշացնող ձայնը. նա արագու-
թեամբ ցանկապատից ցատկեց միւս կողմը, ի-
ջաւ պարտէզի մէջ: Աղախնը նոյնպէս հետեւց

նրա օրինակին, սաստիկ ծակատելով իր ձեռ-
քերը:

Պարտէզի ամեն մի ճկմելիքները, ամենափոք-
րիկ շաւիղներն անգամ ծանօթ էին թամարին:
Կա դիմեց ուղիղ դէպի այն կողմը, որտեղ բաց-
վում էին բէկի ննջարանի լուսամուտները: Նա
ուրախացաւ և աւելի փութացրեց իր քայլերը:
Լուսամուտներից ճրագ էր երեսում: Ուրեմն նա
տանն էր, և եթէ տանն էր, դեռ քնած չէր:
Օրիորդի սիրաը սկսեց սաստիկ բաբախնել, փոքր
էր մնում, որ չնչասպառ լինի: Բայց դարձեալ
նա շարունակեց իր շատալ քայլերը և մօտեցաւ
լուսամուտներին, որոնք բաւական բարձր էին:
— կատօ, ասաց աղախնին, — կարծող ես ինձ
փոքր ինչ բարձրացնել, որ գլուխս հասնի լու-
սամուտին,

— կարող եմ, դուք միայն ձեր ոտները դրե-
ցէք ափերիս մէջ և բարձրացէք ուսերիս վրա.
Ես կը կանգնեմ պատի մօտ, ուղիղ լուսամուտի
ներքերը:

կատօն երկու ձեռքերի մատները միմիանց
հետ հիւսելով, կազմեց շարժական սանդուղքի
առաջին սատիճանը: Օրիորդը մի ոտքը նրա
վրա դնելով, միւսը դրեց նրա ուսի վրա, և իր
ձեռքերով պատը բռնելով, բարձրացաւ մինչեւ
լուսամուտը: Սկսեց այն տեղից նայել: Ոչինչ
չէր երեսում, որտիկետև լուսամուտի փեղկերը ա-

պակու փոխարէն պատած էին թղթով։ Նա իր
մատով զգուշութեամբ մի փոքրիկ ծակ բաց ա-
րեց թղթապատի մէջ։ Այդ գործողութիւնը կա-
տարվեցաւ մի և նոյն բոպէում, երբ բէկը իր
երկար տենդային մտաստանջութիւնից յետոյ,
վերջապէս վճռեց կնքն և յանձնել
Աղասուն։

Օրիորդը դեռ նայում էր իր գիտարանից։ Նա
տեմնում էր, թէ որպէս բէկը սուրհանդակի
գնալուց յետոյ սաստիկ յուզված էր, որքան օ-
տարութի կերպով վառվում էին նրա վրովմուն-
քով վի աչքերը, որքան անհանգիստ կերպով
նայում էր նա թղթերի մի կատոցի վրա, որ
դրած էին նրա մօտ։ Յետոյ տեսաւ, թէ ինչպէս
նա մօտեցաւ ճրագին և սկսեց գրել։ Ո՞րքան
գունաթափ, որքան սոսկալի էր նրա գէմքը
ճրագի լուսի առջև։

Օրիորդը երկար նայել չը կարողացաւ։ Նրա
ստները դողդողացին, փոքր էր մնում, որ պիտի
ցած գլորվէր։ Նա լարեց իր վերջին ուժերը, մի
ձեռքով պատը բռնելով, միւս ձեռքով սկսեց
բաղսել լուսամուտը։ Բէկը ոչինչ չը լսեց։ Նա
սաստկացրեց զարկը, Բէկը այժմ լսեց, բայց
կարծելով, թէ քամին է, զարձեալ շարունակեց
իր գլելը։ Քանի բոպէից յետոյ նա լսեց իր ա-
նունը։ — «Դաւիթ»... Ծանօթ ձայնի մեղմ հըն-
չինները, կարծես, հասան մինչև նրա սրտի

խորքը։ Նա մի կողմ ձգեց գրիչը և շտապով
վաղեց դուռը բաց անելու։
ԺԵ.

Բէկը ամենը հասկացաւ։ Յամարի խառնված
գիտակները, ծւատված, արիւնոտ ձեռքերը, ցե-
խոսած, փոշոտած հագուստը, գունաթափ գէմ-
քը, բոցավառ աչքերը աւելի պարզ խօսում էին
այն սաստիկ հոգեկան վրդովմունքի մասին, որ
նրան այն անազան գիշերային պահուն բերել էր
իր բնակարանը։ Նա խելագարի նման կախվեցաւ
բէկի պարանոցից և երկար բաց չէր թողնում իր
գրից։ Արտի սաստիկ յուզմունքը խելել էր նրա-
նից լեզուի ընդունակութիւնը։ Նա մի բառ ան-
գամ չը կարողացաւ արտասանել. միայն ալե-
կոծված կուրծքից երբեմն դրւու էին թռչում
խուլ հառաջանքներ և լսելի էին լինում միին,
անորոշ բացականչութիւններ։ Աչքերում արտա-
սուք չը կար։

— Եթէ կարողանայի լաց լինել, ես կը հան-
գուստանայի, սասց նա, թագնելով իր երեսը բէ-
կի կուրծքի վրա։

Արիտասարդը նոյնչափ խովութեան մէջ լի-
նելով, ոչինչ չը պատասխանեց, միայն նստեց-
րեց նրան տախտի վրա, ինքն էլ տեղաւորվեցաւ
իր անուն տախտի վրա, ինքն էլ տեղաւորվեցաւ
իր անունը, օրիորդի գողգոջուն ձեռքերը բաց չը
թռչունելով իր ձեռքերի միջից։

—Դու ամեն բան լսել ես, թամար, բոլորը գիտես, վերջապէս խօսեց նա բաւական համզիստ ձայնով: —Դու ուրիշներից լսեցիր այն, ինչ որ ես ուղղակի պիտի ասէի քեզ: Այդ մի կողմից լսւ է, որ դու արդէն նախապատրաստված ես, որ դու արդէն փորձել ես դառն տանջանքի ամենածանր մասը: Բայց ես աւելին պիտի ասեմ քեզ, և հաւատացած եմ, որ դու այնքան սրտի ամրութիւն ունես, որ սառնութեամբ կը լսես ինձ: Մի կողմ զնենք մեր զգացմունքների թուլութիւնները, որ կարողանանք հասկանալ միմեանց:

Օրիորդը գլուխը քարշ զցած լսում էր: Բէկը շարունակեց:

—Դու դեռ բոլորը չը գիտես, թամար, դու լսել ես միայն, որ ես գնում եմ, բայց ուր եմ գնում, ինչի համար, —այդ չը գիտես դու: Ես բոլորը կասեմ քեզ, հաւատացած լինելով, որ քեզ յայտնած ամեն գաղտնիք, դարձեալ իմ սըրտումը կը մնայ: —Ես գնում եմ իմ հայրենիքը, թամար, և զուցէ յաւիտեան բաժանվում եմ քեզանից, զուցէ այլ ես չը պիտի տեսնենք միմեանց: Ես զգում եմ, թէ այդ խօսքերը որքան ծանր են քո սրտին, զգում եմ, թէ որքան դառն պիտի լինի քեզ համար ինձանից բաժանվելու բայց ես հենց քեզ դատաւոր պիտի ընտրեմ, և զիտեմ, որ արդար դատաւոր կը լինեմ: Եթէ դու

ասելու: Լինեմ՝ «մի զնաց», —ես չեմ շարժվի իմ տեղից: Կամենում հս դատաւոր լինել:

—Խօսիր, ասաց օրիորդը գլուխը վեց բարձրացնելով:

—Մենք սիրում ենք միմեանց, թամար: Ես այդ «սիրում ենքը» այդպէս եմ հասկանում, թէ մեր երկուսիս մէջ կայ մի սիրտ, կայ մի հոգի —այն, ինչ որ կրօնաւորը այր և կնոջ մասին ասում է երկու անձննք մի մարմնի մէջ միացած: Յթէ այդպէս է, եթէ մենք երկուսս մի և նոյն հոգին, մի և նոյն սիրան ենք կրում, ուրեմն, ես պիտի սիրեմ այն, ինչ որ դու ես սիրում, իսկ դու պիտի սիրես այն, ինչ որ հս եմ սիրում: Ուրիշ կերպ ներդաշնակութիւն կայանալ չէ կարող: —Այդպէս է:

—Այդպէս է, պատասխանեց օրիորդը: —Հիմա ասա, թէ ինչ ես սիրում դու, որ ես ել նոյնը սիրէի:

—Ես սիրում եմ իմ հայրենիքը և իմ աղջը: Ես իմ անձի մասին շատ բան պատմել եմ քեզ, թամար, դու գիտես իմ կեանքի բոլոր մանրամասները, սկսեալ իմ մանկութիւնից մինչև այժմ: Բայց իմ աղջի, իմ հայրենիքի մասին դեռ ոչինչ չեմ պատմել քեզ: Եւ նա սկսեց նկարագրել Հայաստանը այնպիսի ազգու, կենդանի գոյներով, յաստանը պատմալու պատմական գաղտնիքների լսել: Նկարութիւնը նրա անցեալ փառքը և ներկայ անբախտ բազրեց նրա անցեալ փառքը և ներկայ անբախտ

զլութիւնը։ Նկարագրեց մահմեղականների ան-
դութ բարբարոսութիւնները և սարուկ ժողովրդի
սարսափելի նեղութիւնները։ Եւ որպէս կնոջ՝
Թամարի զգացմունքի վրա աւելի ազգելու հա-
մար, նկարագրեց հայ կնոջ թշուառ վիճակը։—
Կինը այնտեղ իր ամուսնի սեպհականութիւնը չէ,
պատահած սրբկան կարող է նրան իր կրքերին
ծառայեցնել։ Մի փոքր ընդդիմագրութիւնը բա-
ւական էր, որ մօր երեխան իր կուրծքի վրա
մորթէին։ Աղջիկը այնտեղ իր տասն տարեկան
հասակում զոհ է դառնում մի որ և իցէ անզգա-
մի բանաբարութեանը։ Նրան խլում են հայրե-
նական օջախից և ոչխարի նման վաճառում են,
կամ բարեկամը բարեկամին ընծայ է ուղարկում։
Եւ ուրիշ շատ սոսկալի զէպքեր պատմելով ժո-
ղովրդի ընտանեկան և անտեսական դրութիւնից,
նու ասաց։

—Ոհա այդ ողորմելի ժողովուրդը փրկութիւն
է որոնում, աշխատում է ազտափել բանակալի
լիք և ինձանից օգնութիւն է ինորում։—Ի՞նչ
ես ասում, թամար, գնամ, թէ ոչ, ես սկզբից
քեզ դատաւոր ընտրեցի։

—Գնամ, Աստուած քեզ հետ, պատասխանեց
օրիորդը և մի և նոյն ժամանակ նրա զէմքը, որ
մինչն այն րոպէն տիսուր էր, պայծառացաւ իմաս
ուրախ զուարթութեամբ։—Բայց ես քեզանից
մի բան պիտի խնդրեմ, Դաւիթ, որէտք է ինձ

էլ քեզ հետ տանես։ Գու ինքդ ասեցիր, որ ես
պիտի սիրեմ այն, ինչ որ դու ես սիրում։ Ես
սիրեցի քո աղջը և քո հայրենիքը։ Ի՞նչու միա-
սին չը կռւենք, ինչու միտախն չը մեռնենք։

—Այդ շատ գեղեցիկ կը լինէր, թամար, բայց
ես ցաւում եմ, որ կռուի արիւնոտ դաշտը կնիկ-
ների համար չէ։

—Ես գիտէի, որ այդպէս պիտի առես, խօսեց
օրիորդը փոքր ինչ վկրաւորված եղանակով։—
Բայց դու ինձ բաւական ճանաչնեմ ես, գաւիթ։
Դեռ փոքրիկ աղջիկ էր, սիրում էի լեռը, դաշ-
տը, անտառը։ Դու շատ անգամ տեսել ես ինձ
միայնակ լեռների մէջ, երբ դեռ հոգիւ էիր։
Գաղանների մոնչիւնը, հեղեղանների կատաղի հո-
սանքը չէր վախեցնում ինձ։ Ինձ միշտ մեծ զուար-
ծութիւն էր պատճառում, երբ անապատում
ծութիւն էր պատճառում, տուն էի վեցից թրջված, կարկուտից ծեծված, տուն էի վե-
ցից թրջված, կարկուտից ծեծված, տուն էի վե-
ցից թրջված, զուարթութիւնը աւելի աղատութիւն
ունի մօր անհոգութիւնը աւելի աղատութիւն
խորթ մօր անհոգութիւնը աւելի աղատութիւն
էր տալիս ինձ։ Ես ածեցի, զարդացայ, որպէս
էր տալիս ինձ։ Ես ածեցի, զարդացայ, որպէս
մի վայրենի եղջերու, բոլոր հեքեաթների, բոլոր
մի վայրենի մէջ ինձ ոչինչ այնքան չէր հե-
պատումների մէջ ինձ ոչինչ այնքան չէր հե-

տաքրքրում, որպէս լեզկիների, չէչնների և չէրքեղների կնիկների սովորութիւնները, Ես հիանում էի նրանց քաջագործութիւնների պատմութիւնները լսելիս, և միշտ մի առանձին նախանձով ասում էի ինձուինձ. «Բնչու ես էլ լեզկու կամ չէրքեղի աղջիկ չեմ»: Այդ բոլորը դու ինքդ լաւ գիտես, Դաւիթ: Յիշում ես, շատ անգամ ասում էիր ինձ. «Ես սիրում եմ քեզ, Թամար, աւելի նրա համար, որ իշխանական տան թուլութիւնների մէջ չը փչացար դու», Այժմ Բնչու ես կարծում, թէ ես քեզ հետ գալով, կարող եմ քո վրա մի ծանր բնու դառնալ:

Բէկը մեծ ուրախութեամբ լսում էր մանկահասակ հերոսունու խօսքերը, հիանում էր նրա սրտի անկեղծ զեղմունքով, նա գիտէր, բոլորը, ինչ որ այնպէս հպարտութեամբ պատմում էր Թամարը, ճշմարիտ էր: Բայց տանել իր հետ նրան, սարսափելի փորձանքների ևնթարկել այդ պատռական գանձը, նա անկարող էր: Օրիորդը նկատելով նրա լոռութիւնը, երես առած երեխայի նման, կախվեցաւ նրա պարանոցից, և անյագաբար նրա երեսը, աչքերը, շրթունքը համբուրելով, սկսեց աւելի և աւելի թախանձել նըրան, ասելով.

— Տար, քո հոգուն մատաղ, ինձ էլ տար, աղաչում եմ, ինդրում եմ, պաղատում եմ, ինձ

էլ տար: Մի քանի բոպէ առաջ ինքդ ասեցիր, թէ ինչ որ դու սիրում ես, ես էլ պիտի սիրեմ, թէ մեր երկուսի մէջ մի և նոյն սիրոը պէտք է լինի: Ի՞նչու ես չը պիտի սիրեմ քո հայրենիքը, երբ որ դու սիրում ես. Բնչու ես էլ չը պիտի արիւն թափեմ նրա համար, երբ դու քո արիւնը զոհում ես: Զը որ մեր երկուսի մէջ մի և նոյն սիրտն է բնակվում:

Բէկը վերջին խօսքից բռնելով, պատասխանեց նրան.

— Հէնց այդ պատճառով, որ մեր երկուսիս մէջ մի և նոյն սիրտն է բնակվում, հէնց այդ պատճառով, որ մենք երկուքս մի մարմին ենք կազմում, քո ինձ հետ լինելը աւելորդ է, այսինքն կամենում եմ ասել՝ իսկապէս զու ինձ հետ կը լինես. Որովհետեւ ես սրտով, հոգով, մարմնով բաժանված չեմ լինի քեզանից: Դարձեալ քո հոգին պիտի ոգեսրէ ինձ, դարձեալ քո սիրոը պիտի սիրտ տայ ինձ, Ես պիտի ուժ և գորութիւն ստանամ, միշտ այն տապարութեան տակ գընվելով, թէ Թամարը ինձ հետ է, Միթէ զու չես հաւատում այդ խօսքերին, որ այդ իսկապէս այդպէս է: Մենք հրեշտակներին չենք տեսնում, բայց հաւատացած ենք, որ նրանք աներեւութապէս գործում են մեզ հետ. օգնում են մեզ, երբ նրանցից օգնութիւն ենք ինդրում, զօրութիւն են տալիս մեզ, երբ նրանց աջակ-

յութեանն ենք դիմում։ Դու կը լինես իմ պահապան հրեշտակը, թամար, դու այստեղից ես կարող ես հովանաւորել և պաշտպանել ինձ։ Դու զիտես, թամար, որ ես մինչև այսօր կատարած իմ ամենամեծ յաղթութիւններով պարագական եմ քեզ, միայն քեզ։ Երբ ես վերադառնում էի կորիւ դաշտից գերիներով և պատերազմական անհուն աւար ինձ հետ բերելով, ոչ մի վարձարութիւն, ոչ մի գովասանք ինձ համար այնքան քաղցր, այնքան թանգազին չը, որպէս քո ժպիտը, որպէս քո համբոյրը, թամար, երբ ինձ զրկելով ասում էիր. «իմ քաջ, իմ հերոս...» Այդ խօսքերը լցնում էին իմ սիրաը անսահման բերկութեամբ, ինձ աւելի ուժ և զորութիւն էին տալիս, երբ մտածում էի, թէ կայ մէկը, որ անկեղծութեամբ համակրում է իմ գործունէութիւնը, և ես աշխատում էի քեզ աւելի ու աւելի հաճելի լինել, և աւելի մեծ գործեր գործել։ Եւ իմ այժմեան արշաւանքը դէպի իմ հայրենիքը դարձել քո սիրոյ համար է, թամար։ Լսիր, այդ մասին մի փոքր երկար պիտի խօսեմ քեզ հետ։ — իմ կեանքի պատմութիւնը ուսուցել է ինձ հաւատալ ճակատազրին, հաւատալ բախտին։ Իմ նախազգացումները միշտ կատարիած են եղել, երբ ես մի բանի վրա յայտ և հաւատ եմ ունեցել։ Մենք սիրեցինք միմեանց դեռ այն ժամանակ, երբ ես հովիր էի։ Այդ իմ կողմից

մի տեսակ լրբութիւն էր, բայց ես հաւատացած էի, որ իմ վիճակը կը բարձրանայ և քեզ արժանի կը լինեմ։ Այդպէս էլ եղաւ։ Անակնկալ դէպքեր ինձ յաջողեցրին մտնել պալատը և քեզ աւելի մօտ լինել։ Ես դեռ խիստ ստոր աստիճանի վրա էի կանգնած, երբ քո խորի մայրը աշխատում էր քեզ ձգել իմ զիրկը, որպէս զի ինքը աւելի զիւրութիւն ունենայ իր հարազատ աղջիկը տալ և ևանին, որը քեզ սիրում էր։ Բայց ես միշտ յետաձգում էի մեր ամուսնութիւնը, որովհետեւ ինձ դեռ բաւական անարժան էի համարում քո ամուսինը լինելու։ Այնուհետեւ իմ զիրքը շատ բարձրացաւ, բայց ես զարձեալ մընացի այն համոզմունքի վրա, թէ դեռ մի բան, և ամենազլիսաւը բանը պակաս է։ Այժմ մնում է լրացնել այդ պակասը։ Ես վազուց մտածում էի իմ հայրենիքի մասին, բայց սպասում էի, մինչև յաջող հանգամանքները նպաստէին իրագործելու իմ նպատակը։ Այժմ հանգամանքները նպաստաւոր են և ես դիմում եմ այն նպատակին։ Ազատել հայրենիքս, ազատել իմ ազգը և Հայաստանի թագուհու թագը քո զիսին դնել, — ահա այն մեծ նպատակը, թամար, որի մասին խօսում եմ։ Ես այն ժամանակ միայն պիտի պսակվեմ քեզ հետ, երբ հայոց թագաւորների և թագուհիների թագերով կը պսակեն մեզ։ Այդ ցնորդ չէ, թամար, դա կախված է իմ քաջութեանակը, երբ ես հովիր էի։ Այդ իմ կողմից

թիւնից և իմ սրի յաջողութիւնից: Խոկ քո սէրը
բաւական է, թամար, որ վառէ իմ քաջութիւնը,
որ առաջնորդէ ինձ, որ լուսաւորէ իմ ճանա-
պարհը այն հրեղէն սիւնի նման, որ Աստուած
ուղարկեց խրայէլը Եգիպտոսի գերութիւնից
աղասող Մովսէսի ճանապարհը լուսաւորելու
համար:

Մի ուրիշը թամարի տեղ, լսելով այդ խօս-
քերը, կը գրկէր իր սիրելին, կը համբուրէր
նրան, անվերջ, անթիւ կերպով կը համբուրէր,
կը թափէր նրա առջև իր հոգու ամենաջերմ
զգացմունքները, և մարդկային լեզուի ամենա-
բարձր, ամենավսեմ խօսքերով կը յայտնէր իր
սրտի անսահման ուրախութիւնը, թէ որքան
բախտաւոր է ինքը, թէ որքան երջանիկ է, որ
ունի մի այսպիսի քաջ, անձնանուէր և ազնիւ
աղամարդ: Բայց թամարը իր սովորական գեղե-
ցիկ ժամանակ գեղեցիկ դէմքի վրա, դարձաւ դէպի
բէկը, տաելով.—Այդ բոլորը շատ լաւ է, շատ
սքանչելի է, բայց ես դարձեալ կրկնում եմ իմ
աղաչանքը, որ ինձ էլ քեզ հետ տանես, որ ես էլ
մաս ու բաժին ունենամ այն սուրբ դործի մէջ,
որ պիսի կատարես դու:

— Անկարելի է, թամար: Նթէ մի բան, որ
պիսի ինորեմ քեզանից իմ բաժանման բա-
պէում,—թող այդ լինի. մեացիր քո հօր տանը,
Պատերազմական դործը ունի իր այլ և այլ խո-

րամանկութիւնները: Դու բոլորովին կը փչացնես
իմ կարգադրութիւնները, եթէ ինձ հետ գալու
լինես: Պատճառները կը բացատրեմ քեզ: Դու
գիտես, որ ես հեռանում եմ այստեղից ուխտա-
ւորի անունով: Խրբե ամուսին քեզ ինձ հետ
տանիլ չեմ կարող, որովհետեւ դու գեռ իմ նշա-
նածն ես: Խոկ եթէ իրեն նշանած տանելու լի-
նեմ, դա մի կողմից անպատշաճ է, միւս կող-
մից, հազիւ թէ, թոյլ կը տային: Բայց եթէ
թողնելու ևս լինէին, անպատճառ: կը շրջապա-
տեն քեզ մի ամբողջ խումբ կնիկներով, աղա-
խիններով և ծառաներով: Դրանց մօտ կը բացվի
իմ հնարած ուխտագնացութեան գաղտնիքը, որը
ես ամենայն զգուշութեամբ պէտք է ծածուկ
պահեմ: Մնում է մի ուրիշ հնար, այն է՝ քեզ
փախցնել այստեղից: Այդ ես կանէի, բոլորովին
ուշազրութիւն չը դարձնելով բամբասանքի վրա,
որովհետեւ սէրը աւելի բարձր է քան հասարա-
կութեան նախապաշտունքը: Բայց դպրձեալ
մի այսպիսի վարժունք կը վեստէր գործին:
Ես խսկյն կը մերկացնէի այն պատրուակը,
ինչ անունով որ այստեղից դուրս եմ գալիս:
Խակոյն կը սկսէին այստեղից հետամուտ վի-
նել ինձ և լրտեսել իմ գործողութիւնը: Իմ պը-
լանները այնուհետեւ բոլորովին կը խսխտվէին:
— Ես այժմ համաձայն եմ քեզ հետ, ես այս-
տեղ կը մնամ և կը սպասեմ քո յաջողութեա-

նը... Վերջին խօսքերը այնպիսի մի եղանակով
արտասանեց Թամարը, կարծես, նոյն բռպէում
նրա զլիք անցաւ մի նոր և աւելի գործնական
միտք, թէկը ոչինչ չը նկատեց, միայն դրկեց
նրան և համբուրեց, ասելով.—Իմ խելացին, իմ
հրեշտակ... Բայց Բնչ միտք էր այդ. Բնչը հա-
մոզեց նրան հրաժարվել իր յամառ պահանջից
և այդպէս շուտ համաձայնվել թէկի հետ. Թա-
մարը կամքի տէր աղջիկ էր, նու հեշտութեամբ
կոտրվող պտուղներից չէր. Չիցէ թէ նա մտա-
ծեց. «Թնդ գնայ իմ սիրելին, ես նրան չեմ
խանգարի... ես կը գնամ նրա ետևից այն ժա-
մանակ, երբ նա գործը ոկուած կը լինի»... Ի՞նչ
էլ որ լինէր նրա խորհուրդը, այդ միայն Աստ-
ուած զիտէ, բայց թէկին մեծ ուրախութիւն
պատճառեց, որ կարողացաւ վերջապէս համոզել
նրան:

—Ե՞րբ ես մտադիր ճանապարհ ընկնել, հարց-
րեց օրիորդը:

—Բոլոր պատրաստութիւնները կարգի դրած
եմ, պատասխանեց թէկը.—Ինձ մնում էր ամե-
նադժուար խնդիրը, այն է՝ ստանալ քո համա-
ձայնութիւնը. այժմ ուրախ եմ, որ մենք հաշ-
տուեցանք, Յս հէնց էգուց երեկոյեան կարող
եմ դուրս գալ այսաեղից:

—Ուրեմն մի ուշացիր, ըշտապեցնում էր օրի-
որդը:—Բայց ես պատուհանից նկատեցի, դու-

գրում էիր մի թուղթ, ինչ թուղթ էր այն: Դու
այնքան յուղված էիր գրելու ժամանակ, որ ես
կարծում եմ, մի շատ կարեոր բան պիտի լինէր:

—Որքան հետաքրքիր ես դու, Թամար, ամեն
բան ուզում ես գիտենալ, ասաց թէկը ծիծաղե-
լով:—Ես գրում էի իմ կտակը:

—Կտակ... բացականչեց օրիորդը շփոթվելով.
—Ինչու համար է կտակը:

—Որ կնքած քեզ յանձնեմ, որ դու նրա կը-
նիքը լուծես միայն այն ժամանակ, երբ իմ ըս-
պանման լուրը քեզ կը բերեն: Խօ կարծդ է պա-
տահել, որ լինձ սպանեն:

—Կարող է պատահել... տիրութեամբ ասաց
օրիորդը:—Բայց դու կասես լինձ այդ կտակի
բովանդակութիւնը:

—Այժմ ոչ, բայց երբ կը մեռնեմ, բոլորը կա-
րող ես գիտենալ:

—Երեխ քո կայքերի, քո ճորտերի մասին է,
դարձեալ հետաքրքրութեամբ հարցրեց օրիորդը:

—Աւելի լաւ է չը հարցնես, իմ մահը միայն
իրաւունք կը տայ քեզ բացանել այն ծրարը, որ
պիտի յանձնեմ քեզ:

—Այդ միջոցին կատօն, որ ընդունարանում
քնած էր, յանկարծ զարթեցաւ, և նկատելով
երդիքից վաղորդեան լուսը, վազեց թէկի ննջա-
րանը, ասելով.

— Թամար, շուտով փողոցները կը լցվեն մարդկիներով, դու շատ ես ուշանում:

— Լաւ, դրսում սպասիր, ես այս բոպէիս կը դամ. ասաց նրան օրիորդը փոքր ինչ բարկացած ձայնով և դարձաւ դէպի բէկը.

— ՄԵՆՔ էլի կը տեսնվենք, այնպէս չէ:

— Անպատճառ, ես առաւտեան կը դամ մեծ պարոնին իմ վերջին մնաք բարեաւը ասելու, յետոյ կանցնեմ քեզ մօտ. Միայն այնպէս կարգադրի, որ քո սենեակում ուրիշ ոչ ոք չը մինի բացի քեզանից:

Օրիորդը վեր կացաւ: Բէկը բունեց նրա երկու ձեռքերից և սարսափելով նկատեց, որ նրանց վրա արեան բժեր կային:

— Այդ ինչ է, հարցրեց նա, աւելի ուշադրութեամբ նայելով օրիորդի կեղեքված ձեռքերի վրա:

— Ես այսօր ինձ նախապատրաստեցի արեան համար, ասաց նա ժպտելով.— պարտէզի ցանկապատից անցնելու ժամանակ ձեռքերս ծւատեցի:

Երիտասարդը խորին յափշտակութեամբ նրա ձեռքերը սեղմեց իր շրթունքի վրա, ասելով.

— Ես աւելի մեծ հաճութեամբ կը համբուրէի այդ ձեռքերը, եթէ մեր թշնամիների արիւնով ներկված լինէին:

— Այդ էլ կը լինի... պատասխանեց օրիորդը խորհրդաւոր ձայնով և փաթաթվեցաւ. երիտա-

սարդի պարանոցին, Նրանք երկար չէին բաժանվում միմեանցից, մինչեւ նախասկնեակից կրկին լսելի եղաւ կատօի անախորժ կանչիւնը. «բաւական է... ուշանում ես, օրիորդ»...

Օրիորդը փաթաթվելով իր շալի մէջ, բէկի տան ետեի զոնով գուրս եկաւ պարտէզը. բէկը ճանապարհ դրեց նրան մինչեւ պարտէզի ցանկապատի չարչուան: *) Երկինքը բոլորովին ամպամած լինելով, նոր ծագող առաւօտը գեռ մթին էր: Մոխրագոյն մառախուղը պատել էր ամենուրեք: Օրիորդը բաժանվեցաւ իր սիրելիից, կրկին և կրկին անզամ հարցնելով.

— Կը դաս ինձ մօտ, կը դաս... չուշանաս, սիրելիս...

— Զեմ ուշանայ, իմ հրեշտակ...

Դոյն աւուր երեկոյեան պահուն դաւիթ բէկը թողեց Վրաստանի հին մայրաքաղաք Մըշտէթը, և գուրս գալով վրաց Շահնավազ իշխանի ծառայութիւնից, իր քառասուն քաջերի հետ ուղերդ վեցաւ դէպի Սիւնեաց աշխարհը,

Երկորդ գրքի վերջը:



*) Չարչուայ նշանավում է կողիսկայ:

76 - 610
— 100. 191. 192. 193. 194. 195. 196.
197. 198. 199. 200. 201. 202. 203. 204. 205.
206. 207. 208. 209. 210. 211. 212. 213.
214. 215. 216. 217. 218. 219. 220. 221.
222. 223. 224. 225. 226. 227. 228. 229.
230. 231. 232. 233. 234. 235. 236. 237.
238. 239. 240. 241. 242. 243. 244. 245.
246. 247. 248. 249. 250. 251. 252. 253.
254. 255. 256. 257. 258. 259. 260. 261.
262. 263. 264. 265. 266. 267. 268. 269.
270. 271. 272. 273. 274. 275. 276. 277.
278. 279. 280. 281. 282. 283. 284. 285.
286. 287. 288. 289. 290. 291. 292. 293.
294. 295. 296. 297. 298. 299. 290. 291.

... 100. 191. 192. 193. 194. 195. 196.

197. 198. 199. 200. 201. 202. 203. 204. 205.
206. 207. 208. 209. 210. 211. 212. 213.
214. 215. 216. 217. 218. 219. 220. 221.
222. 223. 224. 225. 226. 227. 228. 229.
230. 231. 232. 233. 234. 235. 236. 237.
238. 239. 240. 241. 242. 243. 244. 245.
246. 247. 248. 249. 250. 251. 252. 253.
254. 255. 256. 257. 258. 259. 260. 261.
262. 263. 264. 265. 266. 267. 268. 269.
270. 271. 272. 273. 274. 275. 276. 277.
278. 279. 280. 281. 282. 283. 284. 285.
286. 287. 288. 289. 290. 291. 292. 293.
294. 295. 296. 297. 298. 299. 290. 291.

... 100. 191. 192. 193. 194. 195. 196.

... 100. 191. 192. 193. 194. 195. 196.

ՀՀ Ազգային գրադարան



NL0378061

59.162